

9(55)

(4-18)

~~0-171x170~~





# ՊԵՏՐՈՎԻՉԻ ՊԵՐՈՎ

ՀՕՐՃԵ

ԹԱՐԱՊ ՊԵՏՐՈՎԻՉԻ ՊԵՐՈՎԻ ՊԵՏՐՈՎ  
ԱՎՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎ

ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ  
ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ ՊԵՏՐՈՎԻ

—000000—

Ի ՀԵՅՐԱՎԵԼՈՒՄ ՏԵՐԵՆ ՏԵՐԵՆ, ՀԵՐՈՎ-  
ԱԿԱԴԵՄԻԿԻ ԸՄԿԱՎԵ ՀԵՅՐԱՎԵ.  
ՀԵՐՈՎԱԿԱԴԵՄԻԿԻ ԽՈՐ ՀԵՐԵՎԵ ՏԵՐԵՆ ՏԵՐԵՆ  
ՏԵՐԵՎԱԿԱԴԵՄԻԿԻ ԽՈՐ ՀԵՐԵՎԵ ՏԵՐԵՆ :

Հ. Պ. Տ. Պ.



Ի ՏՊՐԵՎԵ  
ՎՐԵՐԵՎԵՐԵՎԵ ԾՂԵՐԵՎԵՎԵՎԵ

Ի Կ. Է. Լ. Պ. Պ.

1846 :



9(55) ✓  
①-18

3794-42

456-684

ԳԵՂՄԱԿԹԵՒՆ ԳԵՐՈՒՑ

801-916

ԱՆՈՐՈՎ, ՊԵՏ Դ. ԹԱՂԻՄԻՆԵԱՆ. Վ. Ա.

ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ Ա - ԵՀՄԱՏԱՋՎԵՏ

ロードセレクタ レトロコン

ՊԱՐՈՒՆ ՅՈՒՆԻՑԱՆԵՐՆԱՏԱՐ ՍԵՐԳԻԱՆԵՐՆ

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ

—000000—

Դ. ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՆ ՏԵՂԱՆ ՆԵՐՍԻՑ

ԿԱՐԹՈՒՐ ԴԻՔՈՎ ԱՄԵՆԸՆԻ ՀԱՇՈՑ.

ՏԵՐԱՊԵԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

የዕለታዊ አገልግሎት ስምምነት ተስተካክል ይችላል

U.S. GOVERNMENT

10

7/1-1922

Ե Տ Տ Ա Ր Ա Վ Ի

## ԱՐԵՐԱՏԵՐՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՎՆ

ԵԿԱԼԿՈՒԹԵ

1846:

Պիտումնւթեան գատումը փիլիսոփայութենով  
շըլար, վկայութեամբ կըլայ :

Տառ, Ա. Ճայ. Մարտ. Կող, Եջ 122

## ՅԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ՑՈՎՀԵՆՆԵՍ ՄԱՐԴՍԵԸՆ ՍԵԼՄԱԾԱՑՏ

ԻՄ ՔԱՂՅՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՅ

«ԲԱՆՆԻ ամօք յատաշ տպագրութեամբ հրատարակեցի զա-  
ռաջարկութիւնն ինչ՝ ի մասին բաժանողութեամբ տպագր-  
ըութեան համար օրագրութեանց , որոյ մասունք ինչ էի  
ոչ միայն Պատմութիւնն այն Հնդկաստանի , այլև առ այս  
զործ :

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՑՈՒՄ Գործոյս , որ ՚ի լոյս բերե զատոյդ տե-  
ղադրութիւնն Ասորպատականի , Եկպատանոյ , Պարսկ նահան-  
դի , և կղղեաց Պարսկային Ծոցոյ , զլւրինս , զզաշտա , զանտ-  
պատա մեծամեծա , զրեխս , զհանքս , զզետորայ , և զջրան-  
ցը , զծով , զբարս , և զբաժանութեանզամփրդեան , զըզու ,  
զկրօն հին և նոր , զծես , զտարազ , քաղաքականութիւն ,  
զինուորութիւն , և այլն . հանդերձ առ անին և առանձինն  
հանգամանօք անձին և պատահարաց՝ մաց այլում ժամա-  
նակի ապահովան :

Յամագետու լինէին արդեօք բազմամեան թափառանք ընդ  
աշխատանացու, եթե չէր Ազգասիրիդ զաջ շնորհաց կարեա-  
ռաւալ, և ի հին աւուրց փթութենէ ի լոյս ընծայեալ զատ՝  
ի փառա Անուան քում, յազգաց յազգս յաջորդութեանց  
աշխարհի :

Թռաղ ի պարծանս հողոյ Հայրենեաց զբացի մեր երկուց  
զտարանդեաց ինքնայօժար այս ծառայութիւն : Իմ, ի հա-  
ւագենին - և միոյ ի սփռել այն յԱզգի մերում: Որ եթե  
բարի ինչ փառք Աստուծոյ և Ազգիս Հայոց համարեցի -  
իսկ թէ ոչ վետո և ոչ ումեք արարեալ, քարոզ կենդանի  
դանեայ եղեցի յօժարութեան սրտի քոյ առ տարածութիւն  
զբաղիութեան Հայրենեաց, որում այլուաի ազգասիրաբար  
երախտառիկ յոժարութեամբ հաճեցար :

Թռաղ Սաղամուտ ի քնն սկիզբն արացք պարծիլ, որ ոչ մի-  
ոյն զբաւորական յառաջազիւմութեան Ազգին քոյովանն հան-  
գիւադիր, այլ և Տշմարիտ Ազգասիրութեամբ, և Տշմա-  
րիս ևս բարեպաշտութեամբ՝ բաղում Հայ անտերունջ որբոց  
եղեր Հայը բարեխնամ, և առ ի լոյս զիտութեանն Առաջնորդ:  
Եթե միշտ այսպէս հապն և ես ի պարծանս անձին համա-  
բեցոյց, մաւ

Իմ միաղցը Հայրենակից

Խանարհ Ծառայ միոյ

Մ, Դ. Թառութեան :





ԹՈՎԱՐԱՄ ԳՈՒԹ

Կորիաւ ինքն և երիվար իւր յորսալն զցիս . էջ 58 .

Պ Ա Տ Մ Ա Տ Թ Ե Տ Ե Ն

Պ Ա Բ Ա Տ Ց

Եթէ կամք իցե՞ն քեզ զազդի ու-  
րուք զպտումութիւնն ՚ի միտ առնուլ, ոչ է  
պարտ զառասպելօքն զանց առնել . յորս թո-  
ղին ստուգութիւնք հին աւուրց : «Քանզի՝  
թէպէտե իրաւամբ դանգատէ . Քերթո-  
զահայր մեր զՊարսից անյարմար և անոնք  
բանիցն , սակայն և այնպէս՝ իրեւ ազգի  
դրացւոյ և կրօնակցի կռապաշտութեան մե-  
րոյ աշխարհի՝ օդտակար համարի մեզ գի-  
տութիւն առասպելաց սորց նորուն : Եթէ  
հայեցուք ՚ի զիրս Պարսից վասն ստուգա-  
զոյն անցից նախահարց իւրեանց , թէ բաղ-  
դատութեամբ պատմութեան մերոյ աշխար-  
հիս , և թէ Հունաց և Հռովմայեցւոց , կա-  
րի սղալիմք . վասնզի . էր՝ որ անփութու-  
թեամբ առաջին թագաւորացն , էր՝ որ  
ազգային պատերազմոք , և էր՝ որ ՚ի հաւա-  
տոց անտի Պռանին , բարձեալ անհե-  
տացան ՚ի միջոյ . և փոխանակ ՚իներս մու-

ծան մտացածին և ըստ քմաց քերթողացն  
տռասպելք : Բայց և այնպէս՝ 'ի մեջ փա-  
կելով նոցա զիսեշերանս ինչ նախնի սպառ-  
մութեան աղդին, 'ի մեծի համարման կա-  
ցին առ ինքեանս և առ օտարս + որոց և  
մեր զինի գնացեալ՝ շարակարգեցուք յար-  
մարապես զթագաւորս նոցա՝ որդի հօր  
յաջորդելով մինչե 'ի Մահամաղ Ը ահ . որ  
վարէ զմիահեծան տէրութիւն . 'ի վերայ  
Պիտրսից աշխարհին, առանց ինչ մանրանա-  
լոյ 'ի քննին տարբերութեանցին, ընդ սպառ-  
մարանից մերց աշխարհիս . ես 'ի հաւա-  
քելի փութացեալ, և այլոց զհամաձային-  
թիւնն թողեալ :

**Կ**արեն թէ ամենոյն դրիչք Մահա-  
մականաց բաց 'ի Հեղինակէն \* Պարիստան

\* Ար յաւելու զՄահաբագեան համբ Մահամական Հարա-  
տութիւն . 30 թագաւորօք պայազատեալ մինչե յԱ-  
զերաբագ 'ի վերջին թաղաւոր նոցա, որ որաւեցաւ + և  
աշխարհն խռովեցաւ բովանդակ + Մովագետան հարա-  
տութիւն զագըն 'ի խժութիւնէ քաղաքականացոյց և  
ուսոյց զհերկ և զայգեգործութիւն և զինորութիւն :  
Եսա Զիափրամ որդի Ազերաբաղայ թաղաւորեաց + և  
հաստատեաց զԶիանեան Հարստութիւն մինչե յԸահ կու-  
լին . և 'ի նմանէ մինչե 'ի Մահաբաւ . որ հրաժարեցաւ  
յաթռույ 'ի սակա յետին տգիտութեան և վատութեան  
ազգի իւրում + որդի նորա Յեսսան - Սմամ, Եւ յետ

դրոց զառաջին 'ի թագաւորս Համարին Պարսկց՝ գ. Բ. Եյումարս, այսինքն զԱլիւրսս  
Աշար, զօրդին Համարեալ Յեսան - Աճա-  
մայ թոռինն Այսի. և սկզբնահայր Փիշդա-  
ղեան Հարստութեան : Որ 'ի խորին Խը-  
ժութենել զազդին Հանելով, քաղաքավար  
կենաց եղե առաջնարդ, Եւ ընդ Դի-  
ւացն մարտուցեալ, կամ մեկհօրէն ևս խօ-  
սելով, ընդ Մոգուցն գիւարնակաց, յաղ-  
թեաց նոցաօգնականութեամբ առիւծուց,  
վաղերաց, և ընձուց թագաւորութեան իւ-  
րոյ, և եկեալ 'ի \* Բահին իւր ոստանն մեռաւ,  
թողեալ զարյազատութիւն ազգին որդւոյ  
իւրում Հոշանելոյ :

\* ՕՇԱՆԻ որդի նորա ժառանդեալ զա-  
թոռ և զարտթիւն զհօր իւրոյ, և ընդ գես-  
մարտուցեալ՝ մոռանի : Ու էսէտ և Վիրդովսի  
նորա շարժեցաւ բարկութիւն Աստուծոյ ի վերայ բը-  
նակաց երկրի, և սպառ սպռուռ սատակեաց զնոսա մինչև  
յարեաւ Քէումարս կամ Գիլ Ըահ, Թագաւոր Երիշի: Գու-  
ցէ սովին զջրհեղեղն յայտ առնէ, զի և մակդիր Կէյումար-  
սայ Գիլ Ըահ, Արքայ Երկրի, զնոյ յայտ առնէ զայրն  
հողագործ : Զենաթլ թուարիլ զՔէյումարս ստուգա-  
բանէ ի լիզուն՝ Ասորւոց նշանակել զբան կենդանի :

\* Անկանի ընդ երեսուն և վեց սասահճանօք հիւսիսային  
լայնութեան . և ընդ վաթսուն և հինգ սասահճանօք  
երկայնութեան յարելից ցմուտսն :

'ի Հոշանեկայ գտեալ ասէ զկրակն՝ այսպէս :  
 Յաւուր միում . արքայ Հոշանեկ առանեձ-  
 նացաւ . 'ի լերինս ոմամբք Հանգերձ 'ի պաշ-  
 տնէիցն իւրոց , և ուրուական երեւոյթ ինչ  
 խաւարային և անհեթեթ 'ի յանդիման երեւե-  
 ցաւ նմա : Աչք նորա աղբերբ արեան , և  
 ծուխն ելեալ 'ի ըերանոյ նորա միգապա-  
 տէր զօդ արփւոյն : Խոհականն Հոշանեկ  
 շուրջ հայեցեալ զնովաւ բարւոք , առ քար  
 և հար 'ի վիշապն , որ այլ ևս ոչ կտրաց  
 չարչարել զնոսա : Քարն զարկուցեալ լզ-  
 ժայռի ճարճատեցաւ 'ի փշուրս , և 'ի հար-  
 ուածոյն ել բոց պայծառ . և այտպէս ծնու-  
 'ի վիմեն հուրն : Արքայ անկաւ 'ի վերայ  
 երեսաց իւրոց յերկրապաղութիւնն Աստուծոյ .  
 վասն այսօրինակ ընդունելոյ զհուրն սուրբ :  
 Որում յարոյց սեղան 'ի տեղւոջն : և ասոց  
 այս հուր է աստուածութիւն , յամենիցուն  
 պաշտեոցի : Եկն գիշեր 'ի վերայ՝ և դեռ ևս  
 վառեալ բորբռքէր լեռոն , ուստի տօն կտտա-  
 րեցու . յանուն Խային մեծի : Խսկ որդի սորա  
 Քհահամուրս † մականուանեալ Պերանդ ,

։ Յաւուրս Թահամուրսայ մահտարաժամ սաստիկ եղէ  
 աշխարհն . զի զի՞ն չետեանքն իցեն պատերազմի . և ըս-  
 տան զբնակիւն երկրի : Մնացորդք զլու արանց , և մարք  
 զմատազ մանկանց , որպէս և հարսունք զիեսայից տիրա-

կարի շատ Հզօրացեալ 'ի վերայ նոցա ,  
 Դյաղթանակ մարտին 'ի դլուխ տարա  
 օգնականութեամբ ընսպանց խմասութեան  
 և հանձարայ նախարարին իւրոյ Շերա-  
 պեայ . և կալեալ զամենեսին կաշեսնպեաց  
 'ի շղթայն , և եղ 'ի բանդի : Քորոց ոմանք ,  
 կամ լաւ ևս ասել սկզբնահարթն մաղու-  
 թեան , ուսուցանելով արքոյի զընթեռ-  
 նուլ և զգրել , զերծան 'ի պատճոց : Ար-  
 մա ժառանգեաց ասեն , եղբօրորդի սորա  
 Պմշեդ . որ զՊիերառալոյիան կառոց . Հրա-  
 շակերտ 'ի շինուածո նախահարց , ահուա-  
 նեալ Ուաղտը Պմշեդ՝ մինչե ցայսօր ժամա-  
 նակի : Այս եղիս զկրակ և զդ նեի , և եմոյծ  
 'ի Պորս զգ իսութիւն շքջանի արեգական , և  
 զառւմարտար ցիարեայնոյ , որով և Առվրուզն  
 կարդեաց տարեղ լուխ . և զաղգ իւր 'ի քա-  
 ռեակ դաստկարգութիւնո բաժանեաց , ըստ  
 հարաց դրսեալ կուռմ կացուցին յանդիման աշաց + յորմէ  
 սկզբն արար կռապաշտութիւն յաշխարչն Պարսից :

\* Ըստ Ֆըրդումի . առաջին դաս անուանէր Քանոնդան ,  
 Քահանայութիւն . երկրորդ Կեսարւան զն ու որութիւն .  
 Երրորդն Անոնդի մշակութիւն + շորրորդն Անոնդի ձե-  
 ռակերտութիւն կամ յարուեստ : Եւ Բինեգուդ , գիրքիմ  
 Փահլաւի : Եղջայ Ֆիրուզ ունին այսաւս . Եսուդն  
 քահանայք + Արէնիւլուն , Թագաւոր և զինւրք + Ա-  
 րէզոնն : Մշակք . և Հօդուլոն : Արհեստաւորք : Բայց

Հնդիկ սովորութեան, և զայլ ևս կարգս  
և կանոնինս պիտանիո հաստեաց, Ակիդըն  
թագաւորութեան սորա կարի բարդաւաճ,  
այլ վախճան չուառ: Օ ի գնալով գնաց  
և հպարտացաւ, ժողովուրդք զզուանօք  
յետս կացին 'ի նմանէ, և լ Օ ոհակայ իշ-  
խանին Ասորեստանեայց ժամ պարապոյ դը-  
տեալ իւր, բառնայ գլխովին զեռա իշխա-  
նութիւն: Որ յետ թագաւորելոյ զամն  
հազար՝ մեռանի 'ի կաւանայ դարբնէ Աս-  
պահանցւոյ՝ թողլով զաթոռն 'ի ժառանգու-  
թիւն Փրէյդունի մնացորդին Փիշդադեան  
հարստութեան, որ զմբճոտեալ գոգնոց  
կաւանայ լնդելուզեալ ակամբք պատուա-  
կանօք՝ դնէ դ բօշակ արքայութեան Պարս-

թերես սովին պարզեցին մըութիւնք բանից Եղեցայի  
սրբոյ մերոյ, որ յաղագս Դինակետին Ա.ար աշխարհի:  
Համարէն անուն էր, գիտէր և շԱ. Դարձուածէն, ու-  
սեալ էր և զիշողայիդն: ունէր և զՊալմա-ին և զՊար-  
իստէն: քանզի այս հինգ կնշառք են . . . բայց ար-  
տաքոյ և միւս ևս այլ վեցերորդ՝ զոր Մագպէջն կոչեն:   
Որովհերէի՞ զի հին Պարսկաստան ըստ արդեան Հնդկաս-  
տանի, յաւելեալ իգէ ի նախինն որոշմանս իւր՝ և  
զանուակոչութիւն հիմնադրաց կամ առանձնակ քար-  
զութեան երևելեացն ՚ի նոսա:

|| Ոյն ինքն է Բիւրաստին Ա շդահակ, զորմէ զրէ Խորե-  
նացին մնը վասն անբանութեան և անբարի առաջոյ

կոստանի, և անուանէ զայն Պարու Փշի Կաւան, 'ի պատիւ առնեն Երախտեաց, որ կայր և մայր ջյաղթութիւն Արաբացւոց :

**Փ**րեթունի որդի ի.ք Երեք : Ալլմ, Ուուր, և Խրիչ. որոց բաժանելը զթագաւորութիւն 'ի ծերութեան Հօր իւրեանց . Երկու Երիցագոյնքն 'ի սոցանէ Համամարք նորա քարերարութեան, և դիւաց նմա սպասաւորութեան, և ոչ վրիպացուցանել կարելով զվրիպեան և սուսն և ուսոցն համբուրումն և անգուստ վիշապացն ծնունդս . և յայնմհետէ շարութեան յաճախութիւն ծախել զմարդիկ ՚ի պէտս որովայնի : Իսկ սպա և Հրուդենայ ումեմն կապեալ զնա սաքեօք պղնձի և ՚ի լիտառն տանել որ կոչի Դմբաւընդ, այլ 'ի ճանապարհի զննքին Հրուդենայ և Բիւրասպեայ քարշելն ՚ի բլուրն : և զարթշելն Հրուդենայ և տանել զնա յայրս ինչ լերին և կապել . և զինքն անդրի ընդդեմ նորա հասաւատել . յորմէ պակուցեալ հնազանդեալ կայ շըլմայիցն և ոչ զօրէ ելանե և ապակսնել զերկիր : — Ասացեալն ՚ի նոցանէ Բիւրասպի Ծշրահակ առ Ներօվթաւն նախնի նոցա . քանզի ՚ի բաժանիլ եզւաց ընդ ամենայն երկիր , ոչ խառն ՚ի խուռան և ոչ ան առաջնորդ կամ անգլիաւոր ելս լինէր , այլ ստացուածով իմն ակնարկութեամբ զիսաւորք և ցեղապետք որոշեալք զիւրագանիւր սահման ժառանգեցին կարգաւ և զօրութեամբ : Եւ զայս Բիւրասպեայ հաւաստի անուն ճանաչեմ ես , կենառորս պիւռիդայ ՚ի Գաղղէականի գտնալ մատնի : Առ ոչ քաջութեամբ քան թէ հարստութեամբ . և ճարարութեամբ զցել լապետութիւն ազգին իւրոյ ուներ .

էին 'ի դստերէն Օ ուշակոյ . իսկ կրսերն 'ի  
 գեղուհւոյ ուրուք Խրանցւոյ : Մելոյ հա-  
 սանի արևմտեան մասն թագաւորութեան ,  
 որ յետոյ անուանեալ կոչեցաւ Ուում :  
 Թառւրայ զերկիրն յոյնկրյս Ուքսն գետոյ .  
 յորմէ՝ որսլէս ինձ թուի , և անուանեցաւ  
 Թառւրան . և զման Շենաց աշխարհի : Խոկ  
 հնազանդեալ Ներութոյ . և հասարակաց զեհնցաղ-  
 կամէր շուցանել ամնեցուն , և ասէր ոչ ինչ իւր առան-  
 ձին ուրուք պարս լինել , այլ հասարակաց . և ամե-  
 նայն ինչ յայտնի և բան և գործ . և 'ի ծածուկ ինչ  
 ոչ խորհեր , այլ զամնայն յանդիման արտաքս ըերեք  
 լեզուով զծածուկս սրտին : Եւ զել և զմուտ բարեկա-  
 մացն որպէս 'ի տունքեան նոյնալէս և գիշերի սահմա-  
 նէր : Եւ այս և առաջին նորա ասացեալն և անքարի  
 բարերարութիւնն :

Այլ քանզի աստեղաբանութեամբ հզօր եւեալ , յո-  
 ժարեցաւ ուսանել զիստարեալ շարութիւնն : և այսք  
 անկա ելք նմա . որպէս վերագոյնն ասացաք ։ սովո-  
 րութիւն ունէր պատրանաց ազագու առ քազումն ոչ  
 ինչ 'ի ծածուկ գործել . և այնուիսի վերջին և կասա-  
 բեալ շարութիւն յայտնի ուսանել կարողութիւն ոչ եր ,  
 հնարի այսպիսում ուսման դառնութեան , և հնարո և  
 ցաւս ինչ յորովայնի ունել , և բաղբաշել արաշարս ,  
 որ ոչ այլով իւեք , քան թէ բանիւ իմն և անտւամբ  
 ստոկալեաւ թժշիցի , զոր ումնք վայրապար լսել ոչ է  
 կարութիւնն : Եւ այս , որ զսովորեալ շարութիւնն  
 նիւթէր , ուսուցանէր նմա 'ի տան և 'ի հրասպակս ,  
 անկասկած զջլուի ի վերայ ուսոց բիւրասպեայ զը-

Խրիջայ զարդեան Պարսկաստան , յորմէ և  
անուանեցաւն Խրան . այս է , երկիր հա-  
ւատացելոց : Այսը մտաին պատուականա-  
գոյն գոլով յերկուց առաջնոց , վառեաց 'ի  
նախանձ զեղբարս Խրիջայ . զի զմահ նորա  
նիւթեալ , և առ անհեարին խժութեան  
իւրեանց զգլուխն զմասեալ՝ առաքեսցեն  
առ ծերունին Փրէյդուն Հայր իւրեանց .  
զոր և արարին իոկ , և զանէծս չարաչարս

Նելով , և խօսելով յականջան՝ ուսուցանէր զանբարի  
արուեստն . զոր յառապելին՝ մանուկ ստանայի ,  
ասեն , սպասաւորելով լինէր կամակատար . և ապա  
վասն որոյ պարզե . 'ի նմանէ ինդրեալ , համբուրեր  
զուսան :

Իսկ վիշապացն ըուսումն , կամ կատարելապէս վիշա-  
պանալն Բիւրասպեայ , որ ասի , է այս : Քանզի ած-  
բաւ մարդիկ սկսաւ զօնել դիւաց . մինչեւ տալտկա-  
նալ 'ի նմանէ բազմութեանն և հալածել , և փախչել  
նմա 'ի նախասացեալ վերին կողմանան . և 'ի սաստիկ  
վարելոյ զնա՝ Ծօ՛շափեցաւ ամբոխ նորա 'ի նմանէ :  
Յայս վստահացեալ վարողաց զնա , հանգեան աւուրս  
ինչ զտեղեօքն : Իսկ Բիւրասպեայ ժողովեալ զցըուեալն  
անկարծօքէն հասանէ 'ի վերայ՝ վասս սաստիկ առնելով .  
յայլ յազմէ բազմութիւնն , և փախստական լինի Բիւ-  
րասպ . և հասեալ սպանանեն զնա մերձ 'ի լեառնն , և  
ընկենուն 'ի վիչ մեծ ծծմբոյ :

Իսկ Ֆրդովսի գրէ զՁռհակայ՝ թէ այս սպասատար  
նորա նախ հրապուրեաց զնա կենախուզ լինիլ հօր առա-

ընկալան 'ի գլուխ իւրեանց : Պատեր Խրի-  
ջոյ էր որդի մի 'ի Փոշանեկայ Անհուշար  
անուն , մի միայն յոյս ծերունւոյն Փրէյդու-  
նի , որ հասեալ յարբունս կատարելու-  
թեան հասակի իւրոյ՝ զօր ժողովէ , գունդ  
կաղմէ , խաղոյ գնոյ 'ի վերայ արենապարտ  
հօրեղբարց իւրոց . և յաղթեալ մահու լո-  
պանանէ զիոսա . և 'ի հաւոյն իւրոյ ընդու-  
նի զթագ և զերասանակ միահեծան տէրու-

քիւոյ Մարդուսայ , և ապա ուտել զմիս • որ յայն ժամա-  
նակս 'ի մնծ մազս համարեալ էր : Ասդս խնդրեաց համ-  
րութել զուսան , ուստի ծնան վիշապունք , որք սպա-  
նեալ էին արդեօք զջոհակ , եթէ չէր դիւին 'ի կերպա-  
րանս թժշկի դաստիարակեալ նմա , զի տացէ նոցա զու-  
ղեղս մարդկան , և անկասկած եղեցի , զոր արարն և  
եղէ այնպէս ։ Եւ պարս ընդ բռամբ հեծէր բռնա-  
ւրին՝ եթէ չէր կավաւայ դարբնի կենախուզ եղեալ  
նմա և կարգեալ զֆրէյդուն կամ Հրուդին՝ յաթոռն  
պարսից : Այս առասպել բարւոքես մեկնի պատմու-  
թեամբ անցից վիշապին առ Դանիկլի . որում օր ըստ  
օրէ զոհէիր զմարդիկ :

Հայք Գողթանն Զոկք կոչին , և ունին լեզու օտար  
ի մեր բարբառոց : " Բնակեցուցանէ ) Տիգրան զգերի Մա-  
րաց ) յարեկլեայ ուսոց մնծի լերինն մինչև 'ի սահ-  
մանս Գողթանն . " Խոր . Լ . 123 : Որով պարծանք  
բառնսլյ զՄարաց իշխանութիւն առաւել Հայոց տայ առ  
Տիգրանաւ , քան թէ Պարսից առ Այւրագիւ :

թեան : Վեռանի Փրէյքուն թագաւորեալ  
ամս 500 : սա զառաջինն հեծաւ . ի վիզ :

**Վ**ԱՆՈՒՉԱՐ, (գուցէ Վանդուկէս  
Յունաց, ) թագաւորէ զամս 120, և ժա-  
ռանդէ նմա որդի նորա Արտղար, որ  
յեօթ'ներորդ ամի թագաւորութեան իւ-  
րոյ կենախուղ եղեալ յԱսրաւիապայ յորդ-  
ոյ Փոշտնկայ թագաւորէն թուրանայ,  
վճարի յասաեացս . և Խրան ընդ Հնազնե-  
դութեամբ մասնէ նորա՝ մինչե ՚ի Ա Ե-  
Քօրաթ սկզբնահայր Կայանեան Հարսաւու-  
թեան : Յորոյ աւուրս զօրացեալ Ոհուտա-  
մայ Պարսիցն ասեմ Ա ահագնի, սասանե-  
ցոյց ղյուրաւիապ, և Հայածական աբար ըդ-  
նա յայնկոյս Ոքանի դետոյն, որ եկաց մնաց  
սահման ՚ի մէջ Խրանայ և թօնւրանայ ընդ  
յանայր ամս : Յա ուրս Ա Ե Քաւուզայ  
Հորդան ետուն Ակիւթացիք յայսկոյս Ոք-  
սոնի, այլ Ոհուտամ սկաշտպանեաց դհոյրե-  
նիս իւր յերեսաց ասվատակութեանց նո-  
ցա : Եւ այսպէս անընդհատ շարունակեաց  
զարարս քաջազ ործութեանց իւրոց, մինչե  
՚ի թագաւորել Աէյ. Խոսկովու, յորում իս-  
պառ յաղթահարեալ սարոնաւ Ասրաւիապ,  
և Ամարդանդ ընդ Բռուխարայ ընդ լծով  
և մուտ պարսկական իշխանութեան : Ոմանք

զսա ինքնողԱլէյ - Խոսրով՝ Ախւրոս Համարին  
Աշեծն Ասմբիսեան , որով և զպատմութիւն  
Պարսից 500+ ամօք 'ի խոնարհ իջուցանեն .

յառաջ քոն զՔրիստոս :

'Ի Հինգ երորդ ամի Արդեկիայ , իրը ե  
594 ամօք յառաջ քան զՔրիստոս , մե-  
ռաւ Ախարքսէս թագաւոր Ամրաց , պայ-  
ազատեալ ամս 40 : Եւ յաջորդեաց նմա  
որդի նորա Աշդակ , կամ Աշդահակ , Որոյ  
թագաւորեալ ամս 55 յաջորդի յորդոց  
իւրմէ 'ի Ախարքսարայ երկրարդէ , որ է  
Դարեհ Սուրբ Գյորգ . հօրեղբայր մեծին  
Ախւրոսի : Որ Սարդիսին յաղթեաց , և  
զՔարելոն ընդ բռամբ էած : Օ ի ասի , թէ  
Աշդահակ զդուստը իւր զԱմենդանա 'ի  
կնութիւնն Ասմբիսեայ տայ թագաւորին  
Երանայ , յորոց Ախւրոս Ճեանի մեծն , 'ի  
մի փաջել զպայազատութիւնն Ամրաց և  
Պարսից : Վասն զի՝ Ելիմացիք ըստ նա-  
խագուշակութեան Երեմիայ Գլ . առաջին ,  
6 . ցրուելոց էին 'ի չորից հողմոց : Եւ որ-  
պէս ասացն . կատարեցաւ . զի Ասորիք ,  
Ամրք , Արարացիք և Պարսիկք , հետ  
զհետու կալան զայն , մինչեւ յետոյ 'ի մի  
ձուլեցաւ , որպէս և տեսանի , 'ի Պարս-  
կաստան մերոյ դարու :

Յաղաղս Ախւրոսի Պարսկի Յոյնք և  
 Նոյք երկարօրէն ճառագրեն . թէնդէտե  
 զանազանս յիրերաց . իոկ սկասմիչք Պար-  
 սից ամենեին ոչ խօսին ի՞նչ զկենաց և ըզ-  
 հանդամանաց նորս : Յամին եօթ'ներորդի  
 ազատութեան Հըելց մեռանի Ախւրոս  
 մեծն 'ի բարերարս նոցա , թաղաւորեալ  
 յետ զօրավարելոյ Մարաց և Պարսից ,  
 զամս 50 . յետ առման Բարելովին՝ զամս  
 9 . յետ միապետելոյ Համօրէն Ըրեելեաց  
 զկնի Ախւաքսարաց կամ Պարեհի Մարի՝  
 զամս 7 . 'ի Հառակի ամաց 70 . նից : Քսենտու-  
 փոն տայ նմա զանուշակ մահ 'ի մահճի 'ի  
 Բարելովին բաղաքի : Հերոդոսոս՝ դմահ 'ի  
 մարտին ընդդէմ Մեռագետաց , որ Համա-  
 ձայնի և սկարսիկ հնախօսութեանն , որ դնէ  
 զԱխւրոս կամ զԽոսորով յետ ընդ իւրենուա-  
 ճելց դժուռուն , ընտրել կեանս միանձ-  
 նութեան , և 'ի տեղւոջն աներե յաջաց  
 լինիլ աւագանուով իւրով հանդերձ : Պի-  
 ոդորսա՝ ձերբակալ եղեալ նորս . և կո-  
 խեալ դիսյատէ զրէ : Կտեսիսա՝ սրով Հնդ-  
 կի ուրումն 'ի կենաց բարձեալ : Խոկ  
 Պուկիսա՝ թէ սիւնքն մեծամեծք , որք 'ի  
 սահմանագլխի անդ Մարաց և Պարսից ,  
 երեւցուցանեն Ախւրոսի մեռանիլ առ 'ի  
 Բ

Հոդոց տրտմութենէ՝ զոր խժութիւն որդւոյ  
 իւրոյ Կամբիսեայ էած 'ի վերայ : Խոկ մերս  
 Ասմուէլ ասէ . թէ Տմւարիշ Բամբիշն  
 Մասագեցւոց սպան զԱխւրոս : Օ իարդ ե  
 իցէ , 'ի մեռանիւլ նորա որդինորա Կամբի-  
 սէս զբաղեալ 'ի պաշարմանն Եղիպտոսի ,  
 ոչ ժամանեաց յաջորդել հօր իւրում , յա-  
 թոռն Պարսից : Վ ասնորոյ Լոհրասպ ուրջու-  
 նորա՝ որ 'ի կենդանութեաննորուն ե 'ի թագա-  
 ւորելի 'ի Բարելովն , պայազատէր Մարսց  
 իշխանութեան , զկնի մահունորա , թէ և  
 ոչ հեշտեալ . միասլետեաց զհամօրէն Պարս-  
 կաստան : Գամութիւն՝ զոր տանէր 'ի վե-  
 րայ որդւոց Ախաքսարայ կամ Մարաց ընդ-  
 հանրապէս , զրդիռս նախանձու արկ 'ի  
 սիրտ Վ շտասապեալ որդւոյ իւրում . որ բառ  
 է յունաց՝ Հետապնէ , ուստի զօրու ծանու ել  
 'ի վերայ . պարտաւորեաց զԼոհրասպ ի  
 կեանս մենանձնութեան , և կարաւ զա-  
 թոռն 521 . ամօք յառաջան զԱրիստոս :  
 Եթէ Վ շտասալս այս իցէ արդարեն Պարեհն  
 Հիստասպ , ուրեմն յուռուրս սորա բառ  
 ակնարկելոյ ամենայն պատմաբանից , երե-  
 ցաւ Օ բագեշտ մող քարոզել զմողու-  
 թիւն յաշխարհին Պարսից : ( ՞ ՞ ՞ ՞ սա 'ի  
 շալս 'ի քաղաքն Որմի , զոր ոմնանք 'ի


մերձակայք դրից նորա ազալեալք , համարին  
քաղաք Ատրպտուականի . ) ուր զառ աջինն  
սկսաւ քարոզել զվարդապետութիւն իւր ,  
և սփռել յաշխարհն Պարսից : Խսպանդի-  
ար որդի կամ եղբայր Ա շտասպեայ՝ առա-  
ջին գտաւ յաշակերուաց ինքնառաք մար-  
դարեիս այսորիկ , և 'ի շնորհս երեսաց սո-  
րս , ոչ միայն 'ի կապանաց արձակեաց զնոս  
Արքայն Պարսից , այլ և Հրամայեաց զեր-  
կոտասան հազար կաշի կովուց 'ի մագա-  
ղաթ խաղախորդել , և զգուշութեամբ դրել  
'ի նոսա զվարդապետութիւնս մոզին . և  
ուահել իրեւ զսրբազան պատգամ ինչ 'ի  
վիմատապանին փորելոյ 'ի Խաչխառը Յըմ-  
շիդ կամ Պիերոսուոլոլիս քաղաքի , որ 'ի  
զաշտին Միրդուշտայ , իրեւ 55 , մզմնօք  
հեռի 'ի Շիրազայ : Բատ Պլինիոսի , տ-  
մնայն զրուածք Օքադեշտի , անցանելին  
անդք քան զերկուս միլիսնս տանց :

Աեղծեր սա որպէս յետոյ և Մահմէտ , Ճա-  
նապարհ առնել յերկինս 'ի վեր , և 'ի  
չողւոյն բարւոյ ընդունիլ 'ի ՋԱրմզգայ՝ լՊ-  
գիրսն Օ անդավիստա , և զհուրն Որմզդա-  
կան : Լը և 'ի դժոխս , որպէս երազէրն , և  
ետես անդ զԱրհիմն , այլ չկարաց չափել  
զծիր խաւարին՝ որ շուրջ ողառել զնովաւ :

Օ ամս քսան կերանս վարեաց միանձնական  
 'ի լեռինս Ելբուրզայ . Յոյրի ուրեք ,  
 որոյ վիմապատուարք ստուերազբեալք էին  
 ուրուականոք Տարերաց , Եղանակացն ,  
 և երկնային զօրսւթեանց , առարկայիցն  
 նախնի պաշտամոն Պարսից . Ապա յաշ-  
 խարհ եկեալ քարողեաց դօրէնս մողութեան  
 իւրոյ , որոց գլխաւորագոյնք էին , յաւիտե-  
 նականութիւն Աստուծոյ՝ նմանեցուցեալ ան-  
 հնութեան տեղուց և ժամանակի , Երկու-  
 սկզբունքն 'ի կարգի տիեզերաց , Բար-  
 ւոյն , և Չարի . զորոց մին անուանեաց Որ-  
 միզդ՝ Բարւոյ արարիչ , և միւնն Արհինն  
 Չարի նախահայր , Խւրաքանչիւր ոք 'ի  
 սոցանէ կարող էր համազօր արարչութեան .  
 ոյլ հակառակ խորհրդով . Որոց հակառակ-  
 ընդէմն արարչութեամբ , մուծու տաէր  
 խառնուրդ բարւոյ և չարի յարարած ս  
 ամենայն : Հրեշտակք Որմզդի՝ պահապանք  
 էին տարերաց , եղանակաց , և մարդկան . իսկ  
 Արհինն 'ին աղարտիչք նոցին : Այլ որով-  
 հետեւ բարին միայն էր յաւիտենական ,  
 վասնորոյ և նմա անկ էր յաղթութիւն :  
 Լոյս բարւոյն էր օրինակ , և խուարին չա-  
 րի : ( Օսյու և Մայր իմ դիտէր )

**Գ**ատչեւարժան է , զի մասնի գրիչ Պատ-

բիւտանի , թմուկ գոյով ՚Բաշմիրայեներհուն  
պաշտամանց Հնդկաց՝ կարծիս 'ի միտս արկա-  
նէր բաղմաց . եթէ չունացեալ ինչ իցէ զհըն-  
դիկն 'ի պարսիկն կարկատել կեշա , սակայն ե  
այնպէս՝ այս ուրուապաշտութիւն Պարսից  
առաւել հին Մոգութեան Հայաստանի՝ կամ  
Արքական պաշտամանցն հու պ մատչի , քան  
թէ Հնդկացւոյն . ՚Բանդի որպէս 'ի բազումն  
ընթեռնումք Արքայիք պաշտենին զԱստու-  
ած , և զմոլորակս իրքու գործիս կամ հրամա-  
նատարս պատող տմաց նորա . որոց և խոստովա-  
նէին մն ծապէս աղղել 'ի հողագունդ մեր , իւ-  
զետ գնաւլով ՚Բաղդէացի բնապաշտութեան  
Հիմնեցին զգիտութիւն իւրեանց 'ի բաշ-  
խոյս Աստեղատանն : — Շնէ պէտե աղք աղ-  
ք իւվերայ յարեան , և աղանդ ք աղանդոց յա-  
ջորդեցան 'ի Պարսկաստան , սակայն գեռ և ս  
այս տեսութիւն պատուաստեալ յամենեսին  
'ի նոուա տակաւին անշարժ կայ ոչ միոյն  
առ իմաստուն համարեալս 'ի նոցանէ , այլ  
նաև առ ռամիկս : Համբին 1800 'ի ճանա-  
պարհորդել Ար Պալքումայ Անդղեաց-  
ւոց յաշխարհ Պարսից՝ արքունի Ախմետը  
այսպէս գուշակեաց զբաղտ նորա ,  
”Օքնութիւն այսմ մն ծի Արարշի , որ ատեղք  
զերկիր , զերկինս , և զերկնային զօրութիւնս .



յարաբաժս որոյ մարդիկ երե ին իր ըև դյովտ  
խերեւիշի . խաւարոյինն Երեւակ , ուր իբրև  
զպահ հսկէ յեօթներորդ յերկինս՝ գամա-  
գիտ է ցանեկութեան սորա : Փառաւորեայն  
Լուսնթագ՝ իբրև դատաւոր արդար գահա-  
ւորեալ 'ի վեցերորդ յերկինս , Հսկէ 'ի վերայ  
խորհրդոց սորա . Արիւնախանձն Վարեխ ,  
ծիրաներանգ սակերք իւրովնատեալ 'ի հինգ-  
երորդ երկինս կամակատար բարկութեան Ա-  
րարչի իւրումնեայլն : Արեգակին համասլայժառ  
շրջապատեալ բոցեղէն պսակօք՝ որ ճառա-  
գայթարձակ փայլի 'ի չորորդ յերկինի՝ լու-  
սովն առեցելով յԱմենակալէն , Գեղեցիկն  
Արուսեակ , որ իբրև նուտգածու զուարթ  
բազմի փառօք յապարանս երրորդ երեխից՝  
կազդուրեալ զօրութեամբնորա : Ուեփոտեալ  
Փայլածու , որ իբրև զդպիր արագագիր  
նատի յերկրորդ եկնի՝ գրիչ պատգամաց Ա-  
մենակալին : Եւ Լուսին անաղօս բազմեալ  
յառաջնում երեխնի՝ ինշան սքանչելի զօրու-  
թեան Արարողին , և այլն '' :

**Ա**յս ստորագրութիւն քէշի Պարսից  
նախ քան զյայտնութիւն Օրագեշտի ,  
կամ յաւաղ է ժամանակաւ բան զնուշանկ ,  
կամ հաւատ է դիւաց կամ մօզացն զօրս  
կորոյս նա . և կամ սաքէական պաշտամանցն

սլորագայ : Եթէ առցուք զայս նախ քան  
զժամանակն Հուշանկայ երկու մեծամեծ  
արգելք յանդիման դան մեղ . մի՛ զի և ոչ  
խերեւէ չ մի նկարուց աստի տեսանի ի բան-  
գական Ելիմայ կամ Պերսու պօլսց . և կամ յո՞  
և իցէ յաւերակս հնութեանց աշխարհին :  
Եւ միւս՝ զի Հերոդոտոս՝ որ բազմօք զիսի  
գրեաց , ոչ զմեհենից շինութիւն յիշէ . ոչ  
կռոց կոփումն . և ոչ բագնից տեղիս : Այլ  
միայն թէ՝ 'ի բարձունս զոհէին ասէ<sup>1</sup>  
Լուսնթագին , (որով իմանայ զամենայն զո-  
րութիւնս երկնից .) և թէ երկեր պագանէին  
ասէ Արեգական , Լուսի , Երկրի , Հրոյ .  
Պրոյ և Հոլմոց : Հերոդոտոս եկաց ԱԱԱ  
ամօք նախ քան զի Բըրիստոս :

Բայց 'ի վերոյ այսր ամենայնի դեռ և ս-  
կայ զուգաձայնութիւն 'ի մէջ նախնի քէշին  
Պարսից և Հնդիկ աւելորդապաշտութեան :  
Նախ . զի երկոքին սահմանք միապէս խորշէին  
'ի մուեղեաց : 'ի Պարս մասկերութիւն եմոյք  
բռնաւորն . Օ ոհակ . որ թուի գոլ արքայն  
Ասորեստանի . և խառնակիչ աշխարհի և կրօ-  
նից Պարսից . (որ և Բխւրասպ Աւորինացւոյն : )  
Եւ երկրորդ բաժանումն Ազգին 'ի չորրեակ  
դասակարգութիւնս այլովքն հանդերձ :

**Ω**ρուդեց մոզ ծնաւ ասեն ոչ միայն ա-

նապակսե , այլ նաև անցաւ կամ առանց մաշ  
 պատճառելոյ կենդանեաց և բուռոց միան-  
 գամայն , Պարսիկն զբուսական արարածս  
 թէ պէտե անընդունակ համարի վշտի  
 կամ հեշտութեան սակայն կեանս տայնոցա  
 և Գերագոյն Հոգւոյն քնակարանս համարի ,  
 Վանի ասէ թէ հետեղք Շահերաստանի ,  
 որ Պալհաւիկն է Գներզանայ Ա սամայ որ-  
 դւոյժի բհատլայ Եղդանոյն համարի զհո-  
 դին Օ բաղեշտի յառաջտոդոյն ստեղծեալ  
 Ա ստուծոյ և կախեալ զայնը ծառոյ , յորմէ  
 որ ինչ երկնաւորքն են և անապական յա-  
 ռաջ բդիսեցան , Բառս ծառ փոխարերու-  
 թեամբ առեալ զբանն կամ զգիտութիւննշա-  
 նակէ , որոց ամենայն սրաւղքը ե՞ն բարիք . Եւ  
 ասելն թէ Հոգի մարդարենին կախեցաւ զծա  
 ռոյ ցուցանէ զիա զոլնչոյլ իմն Անդրանիկ  
 Բանին . և կատարելութիւնն նորաեր '' լոյս  
 փոյլեալ 'ի ծառոյն զիտութեան : '' Ա ուայ  
 ասէ Պալհաւիկն զի իմտատոն և սուրբ  
 Անգալեան Անրուշ ասէր , թէ հօր Օ բա-  
 ղեշտի էր կով . որ միանդամ ուտելով զթօ-  
 թափեալ տերենս 'ի ծառոյն զիտութեան , այլ  
 ինչ յետոյ ոչ ուտէր ուստի և կաթն նորա  
 դոյտցետլ անաի եղե հանապաղորդեան սը-  
 նունդ Փութաւալոյ հօր Օ բաղեշտի , որով

յուղացաւ Պատղառա կիննորա , և ծնաւ դորդի  
իւր ազատ 'ի սկզբնական մեզաց : Յոյլ  
ու թեք դրի , թէ կով եկեր զհողին Օր-  
բագեշտի , յորժամկախէք զձառոյն , և միջ-  
նորդութեամբ կաթինն անց 'ի հայր անդը :

**Թ**ողեալ տատանօր զերազն Պաղացայ , որ  
այն ինչ դեռ մանուկն յօրովայնի՝ ցուցանէք  
զհանգերձեալ նորա մեծութիւն , — 'յ ծը-  
նանիլ Օրագեշտի բատ Պարսից և Պլինիոսի  
լուծաւ 'ի ծաղը , և լոյս փայլեալ 'ի նմա-  
նէ , ելից զտունն բոլոնդակ : — Օ Ճանա-  
պարհորդութիւն Օրագեշտի 'ի յերկինս :  
Ալրմդգէ սիրով ընդունիլ զսրբազան գիր-  
սնն Օ անդապիստա , և զհուքն : Եջ նորա  
'ի գժոխս , ուր և տեսանել նորա զլորհիմն  
զնախահանայր չարութեան . որ արձակէք զայր  
մի 'ի կապանաց՝ յաղաղոնշմարելոյ 'ի նմա-  
զմասն բարւոյ . և զնոսուել սատանայի յա-  
թոռ տէրութեան իւրում : Աւելորդ հոմա-  
րիմ յիշել և զառանձնութիւննորա 'ի ծոր-  
ծորսն լերին Ելքուրզայ , որ է 'ի հիւսիսոյ  
արդի շահաստանին թէ հրանայ . զի և Պլի-  
նիոս յիշէ թէ՝ Օրագեշտ զքսան ամ յա-  
նապատի բնակեցաւ : Օ Ճգնութիւնն նորա  
յայրին զրօշելոյ ուրուականօք տարերաց  
և երկնային զօրութեանց : Թաղում դէնի-

մաղդիցն պատմել զՀրաշնորա առ. 'ի վկա-  
յութիւն հաւատոցն անախառ թեան , որոց  
գլխաւորագոյնն էր կրել զկրակի սուրբ 'ի  
ձեռին իւրում , թափել զՀանք հալեալ յիւր  
մարմին , և զկին զիւր սիրելի զԳաշտասալ 'ի  
զննջութենէ յառողջութիւն վերածել .  
ես 'ի վարդապետութիւն առնն խիզախեմ :

**Աւոյց** [թէ] **Աստուած** էր 'ի յաւիտենից ,  
և 'նմանէր անհնութեան ժամանակի և տեղ-  
ոյ : Եղ զերկուս սկզբունսաշխարհի , զբարի  
և զչար . զմին անու անեաց Արմեղդ , արարիչ  
բարոյ , և զմիւնն Արհիման արարիչ չարի :  
**Ասէ** **Աստուած** ց **Օ** ըսրդեշտ , լոյս իմար-  
բի 'ի լուսասուս ամենայն . ուստի և աշա-  
կերտք նորա յորժամ աղօթս յատրուշնի  
մասուցանեն , զերեսս իւրեանց դարձու-  
ցանեն առ հուրն սրբութեան : Խոկ երը 'ի  
բացի , առ ահեղափայլ Արքայն Տունջեան :  
Պիտհապան հրեշտակը բուսականաց և կեն-  
դանեաց այսպէս խօսիլ սկսանին ընդ նմա :  
“ Հովուեալ զՀօտ իմ : ասաց ամբիծն Բահ-  
ման . զորս ընկալեալ յԱստուածոյ և բեզ  
հաւատացի : Մանունք 'ի նոցանէ մի զեն-  
ցին , և որք տակաւին ասայցեն զսդուտ : ”

“ **Օ** առայդ Բարձրելոյն ” , ասաց լուսու-

Փայշն Աքրէիթէշտ .. խօսեաց ընդ արքային .  
 Ա շտասաղեայ . և յինէն պատուէր զայս տուր  
 նմա , " թէ 'ի ձեռս քո աւանդեմ զամենայն  
 կրակ . կայն մոգպետս , դաստուրս , և ըդ-  
 հերմուգս 'ի պահպանութիւն նոցա , զի մի  
 շիջուսցեն ջրով կամ հոլով : Պայծառութիւն  
 Հրոյ Տեսունէ . և զինչ որ դեղեցիկ քան զիս ,  
 Օ փայտ խնդրէ 'ի ճարակ . և ծխոնելիս անո-  
 շունց միայն : Օ երք և տղայք մատուսցնն ,  
 որպէս զի՝ աղօթք նոցա լսելի լիցին : Քեզ ա-  
 ւանդես զնա , որպէս և յԱստուժոյ ընկարայ ,  
 որ ոչ պաշտեսցէ զնա 'ի դժոխս կործանեսցի :  
 " Շահարիվար խօսեցաւ ապա , " Ով այր  
 սուրբ ցորչափ յերկրի շրջիս ընդ մարդկան ,  
 ուսո՞նոցա զպատուիրանս իմ . ասա որոց զան-  
 ձամբ կրեն զնիզակ , սուր , զէն , և զբահո ,  
 մաքուր պահել զետսա , զի միայն երեսյթ նոցա  
 զթշնամիս հալածականս արացէ . որոց խոր-  
 հուրդք 'ի շարութիւն են : Ո՞ն յուսացին  
 յամբարիշտս , և մի յարա արիւնահեզս իւ-  
 րեանց : " Ապանդարմատ ասէ " (Օրհնութիւնդ  
 աղդի մարդկան . պահեա զերկիր յարենէ ,  
 յաղաէ , և 'ի մեռելուսոյ . և մերժեա զեռ-  
 սա յանապատ անջրդի , և յանկոխան 'ի  
 մորդկանէ : Պատուզք տռատք 'ի վարձ լիցին  
 վաստակոց , իչ տղնիս թադաւորաց նա է :

որ զերկիրն չէի և բարեբեր արասցէ : Օ այս  
 պատուէք տուք մարդկան յինէն կողմանէ , " Ի  
 խուրդատ . " Քեզ յանձն առնում : Օ բն-  
 դեշտ , գոմենայն ջուրս , որ զետէ , զաղին և  
 զքաղցրն . զգետոց , որք հոսին 'ի հեռա-  
 տանէ և 'ի լերանցին յաւիտենականաց . ըզ-  
 ջուրս անձրեաց և աղբերաց միանդամայն :  
 Ուստի մարդկան թէ ջուր զօրութիւն է կեն-  
 դանեաց և բուռոց : Վի ոք պղծիցէ զայն  
 մառելսուլ կամ անմաքրութեամբ . զի  
 կերակուր հանդերձեալ ջրով սրբով լիցի  
 ձեզ յառողջութիւն : Այսպէս կատարեան  
 զպատուիրանն Աստուծոյ : Ամիրդատ ասէ :  
 " Վի ոք քաղիցէ պատուզա՛ի ծառոց կամ բոյս  
 յարմատոց , նոսիս քան զհասունանայն , զի  
 օրհնութիւնք են մարդկան և անանոց մի-  
 անդամայն " : Ապա պատուէք ետուն նմա-  
 կարգել մոզո յամենայն տեղիս , զի ըն-  
 թեռնուցուն զգիրս : Օ անդամիստեան օրի-  
 նաց 'ի լուր ամենայն մարդկան , խստիւ պատ-  
 ուէք հրամանի 'ի վերաց եղեալ , զի զգու-  
 շասցին սլահպանութեան տարերացին , յորոց  
 մարդն հաստեցաւ : Այսոքիկ էն գլխաւոր  
 մասունք դենինի նորա , իսկ մնացեալ մասունք  
 Օ անդամիստայ դրոց նօրա , յարացցցք  
 իմն են բարոյական խրատոց : յաւաչ բե-

բեալք յաւետ՝ ՚ի յորդոր առաքենութեանց :  
 Աւայց Օ բագեշտ պաշտել զմի և զանահն  
 Արարիչ, թէսպէտ և զլոյն օրինակ իմն տալ  
 Աստուծոյ՝ մնտախաղաշութեանց բաղմաց  
 եղեւ արարող : Օ ի աշակերտք նորա զիսկն  
 մռացեալ խորհրդոյն երկրպագեւ, , որով և  
 զանարդ անունով զկրակաղաշտին յանձինս  
 զրեցին : Օ ի թէսպէտ Պարսիկք և յառաջ  
 քան զառ զկրակն մնձարեին, այլ ոչ յառա-  
 բուշան մշտարորբոք պահելով, և ոչ աղօթա-  
 ռու այն տռնելով, Պատուեր նորա զերեսս  
 յարենկրյո ուզդիելովն տղօթելոյ, Հայեր մի-  
 այն զեախտաղարութեան դաղգին ըստ թե-  
 րութիւն, ևս և ՚ի պատիւ տարերացն և  
 պարզագոյն Արեոյ, զորս ինքնին այն-  
 քան սաստիկս մնձարեր, Այլ Հնազան-  
 դութիւն նորա որ առ պատզամ Հրեշտակին  
 Խպանդարմատայ, առիջ եւտ փոխելոյ նորա  
 զնախնի կարդ թաղման մեռելոց, զիըստ Հե-  
 րոդոսոսի, ՚ի բայի եղեալ Պարսից զգիս  
 մնաելոց թողուին թռչնոց և դազանոց քաղել  
 զշողիողն ՚ի յակերաց, և առա լցեալ  
 զնաստ ՚ի դորականի, թաղել յանջրդի անա-  
 ռատոս անկոխս ՚ի մարդկանէ, Այս ոսկերա-  
 լից դորակք գտանին տակաւին յաշխարհին  
 Պարսից, մանաւանդ մերձ ՚ի ծոյն նոցա :

Գ

Օ բագաշտ աստեղաբաշխ էք , և ընթացիւք նոցա համարել կարեք զծնունդս և դդէպս Հանդերձելոց . որ յետոյ անցեալ առ մողս Պարսից՝ ժառանգութեամբ յաջորդէք : Երկուսասան ամսոց ապրույին կացուցանէք զերկուսասան Հրեշտակու 'ի պահապնութիւն , և աւուր աւուր (Օրապետ Հզօր . որոց անուանք , զործք և ընկերութիւն քաջաց նոցին թիկնակցաց՝ զրեալ էն 'ի զիւս նորա : 'Ի բազում Հերձիս խորսութեցաւ այս դեն յետ նորա , այլ կրկին նորոգեցաւ յաւուրս Արտաշրի Բարիկեան Ասահրացւոյ Ասխահօր Ասահանան Հարսառութեան : 'Ի նորութիւնս Օ բագեշտական աղանդոյ երեկ միայն փոփոխութիւն յուղարկաւորութեան մեռելցու : 'Ի Հնումն գնենին Պարսիկ զմեռերսն 'ի բացի գեշ դաղանաց և թռչնոց , մինչեւ մարմինն մերանայր , և ուկերքն հաւաքեալ յանոթիւնեցեղէն թաղելին 'ի հող . ( որոց բազումք դասն և դասնին յաշխարհի այնմիկ յի ուկերուեօք . ) իսկ Օ բագեշտ 'ի Հնազանդութիւն սպասուանաց Ապանդարապետի՝ Համայեաց զմեռեալսն յամոյիս լերանց և 'ի խոզանս գնել , և յետ թօթափելոյ մարմնոց նոցա զոսկերուախն հաւաքել և 'ի հասարա-

կաց բաւիլ ընկենութ խառն 'ի խունն  
կուտակութեամբ :

Ժամանակ թագաւորութեան Աշուա-  
սկեայ ձգեն պատմաբանք Պարսից զամո 60,  
այլ զորդւով նորին դՔակեբսեաւ իսպա-  
զանց առնեն : Խոկ զԱպանդիար , Վ.ակեբս-  
ունն համարեալ յոմանց , դրուատի 'ի  
Պարսիկ պատմաբանից իրբե դքաջ իւրումն  
ժամանակի . և ոչ անարդի ուրուք , եթէ ոչ  
'ի քաջ բազկացն Աշուատմայ խորտակեալ  
'ի մարտին ընդ դէմ Արքային Աադասանի :  
(Օտար աղդաց պատմաբանք և եթ , Ճա-  
նոթու տան երեւելի անցից թագաւորութեան  
Պարեհի Աշուասպեան . յորոյ 'ի չորրորդ  
տմի թագաւորութեանն եւ հոչակաւորն  
այն հրովարտակ աղասութեան Հրեից ,  
դշնորհեալն յառաջադոյն 'ի Աիւրուէ . զի  
դարձցին , և շինեցեն զատաճար Տետոն  
Եթուսաղեմ : 'Ի յաջորդեալ տմին , 517  
ամոք յառաջ քանի դՔարիստոս , ապստամ-  
բեցան Բարելովեացիք , որ յետ քանի ամ-  
սեան սկաշաբածոյն , աւարտեցաւ 'ի չարտ-  
չար կործանումն երբեմն Տօխ քաղաքամօր  
համօրէն Վաղդեացւոց : Քիններորդ ամին ,  
խաղացոյց Պարեհ զօրս 70.000 թուով  
ընդ Փոքրին Ասիս 'ի Ուրակեանն Բոսլորոն .

զոր էանց նաւակամուրջ սպատելով՝ ի վերայ  
 նեղուցին, և խաղաց զնաց՝ ի հետզանդու-  
 թիւն իւր նուածել զբովանդակ թօքակիա  
 մինչև՝ ի խորին սահման Խոթեր քաղա-  
 քի: Աչ շատացեալ յաղթութեամբքա՝  
 էանց ընդ գետն յաշխարհն Վիլութացւոց,  
 բայց ապաշաւ կալաւ զնա յիւրոցն յանդրդ-  
 նութեանց, որ դրոհ տուեալ զօրաց ընդ  
 անապատ անջրդիւ, կորոյս զմեծ մասն նոցա.  
 և ամօնթահար կոր՝ ի դլուխ ընդ կրունկն չո-  
 դաւ՝ ի բաց: Չմերեաց՝ ի Վարդինն Լի-  
 բեացւոց, և զարձաւ անտի՝ ի Շօշ շահա-  
 տան հզօր, յետ միացուցանելոց զՎարս ընդ  
 Պարսից: Հյուտ երկուց ամաց զինի յա-  
 ջորդելոց, խաղայ Գարեհ՝ ի Հնդկաստան՝  
 ուստի և կազմեալ զնաւատարմիոյն՝ ի Աս-  
 պատիւրոս կամ՝ ի Հիմալյու առ Խնդոսիւ,  
 տայ զծովակալութեան հրաման Վիլուդաք-  
 սայ Աարիանդացւոյ, և առաքէ զնա՝ ի խրի-  
 դիր նորանոր կիւսից: Լի վերագառնայն  
 յետ երեսուն ամսոց նաւազնացութեացն,  
 արքային Պարսից մասնէ՝ ի Հնդկաստան,  
 ընդ իւրե նուածէ զամնեայն թագաւորու-  
 թիւնս նորա, և Հարկ՝ ի վերայ եղեալ  
 500 տաղանդաց ուկւոյ, գառնայ յաշխարհ-  
 իւր՝ ի Պարս: Գաործք Գարեհն Հերոդո-

զոսի զուգակշխոք իմն լինեն քաջի արտարիցն Ապանդիաբայ Այրդովսեայ կամ Այօստամայ նորա : Այլ յաւետ օդնականութեամբ մեծամեծ նախարարաց և սեղբառապաց աշխարհին :

'Ես ճայրանալ երջանկութեամբ արքայութեան Պարեհի , ոկանի ենք սրատմութիւն Այարսից . յառաջ բերել զյազլթութիւն Քունաստանի . զբանմբ ածեալ առեւ զաշխարհն Եւդացւոց և զիւրակիա , յաւել զիւրծովային զօրութիւն . ուստի նախ Տիւրք և ապա Յոյիք , զորս ած Պարեհ յառաջին փառուազանութեան իւրեանց , եղեն նմանեան նորա յընդարձակել նորա զահման տերութեան իւրոյ մինչեւ 'ի կղզիս միջերկրականին : Ապասամբութիւն Քունաց յԱրիստագովնայ , 'ի բառն երբորդ ամի թաղաւորութեան նորա , եղեւ սրատմառ Հրեիզութեան Ապարդիտնի , 'ի ձեռն դաշնակցեալ նաւատորմելին : Աթենացւոց և Քունաց : Այս նոցին աջակցութիւն , 'ի զեան մեծ եղերեցաւ ակնկալեալ շահուց թագաւորին մեծի . Աթենացւոցին առիթ առեալ այնը հաջակաւոր սրատերազմին ընդԱյարսից , որով զվերջին կործանումն էաւ տերութիւն նոցա , և Քունացն զաշնակցու-

թիւն : Անկման և կործանման Առելեռու-  
 նի , յաջողութեան Պարսից 'ի Արաթոն ,  
 և սիրախառն այնը Հակոռակիութեան ծա-  
 գելոյ յորդիս Դարբեհի՝ վասն զաթոռն ըդ-  
 հայրենին ժառանգելոյ , Հանգերձ ամենայն  
 պարագայինք տերութեան Քսերքսէսի ,  
 յարձակման նորա 'ի վերոյ Քունաց , պա-  
 տերազմին Արաթոնի , Ասդամնայ , Պիպա-  
 տիայ և Առեգաղեայ , և որոց 'ի կարդին , ամե-  
 նեին անյիշատակ կան առ պատմաբան  
 Պարսից . թեղետե Քոյնք ճարտարագոյն  
 դրիցեն : ' Խ դառնալ Քսերքսէայ 'ի Քու-  
 նաստանիկ ընդ Ճանապարհ Փոքուն Ասիոյ ,  
 Հրամայեաց կործանել զամենայն մեհեանս  
 կռոց , որ ցուցանէք զեռանդն սրտի նորա  
 առ օրէնս մոգութեան աշխարհի իւրում :  
 Բայց և յափշտակութիւն զարդուցն . որ 'ի  
 նոսա՝ զծորաւ չարտչար ապահութեան իւ-  
 րոյ : Խառ սա և դիարելովն , և զմինան կը-  
 ռոց կործանեաց ըստ կանխաճայինութեանմար-  
 դարէ իցն Խսրայէլի . Ես . իս . 9 : և Երեմ ,  
 ո 2 , ծա , 52 : Արաւան գաւով սպանեալ  
 զնս 'ի 21 : ամի՞ թագաւորութեան նորա .  
 461 : ամօք յառաջ քան զՔսիստոս , ունի  
 զաթոռն Պարսից . և սմա փոխանորդէ որդի  
 նորուն Արտաշէս Եցրկայնաձեռն : Որ այնին

Քըն է Առաջման կամ Արդաշիրն Վարագուաս  
 պատմաբանիցն Պարսից, և ( Արտաշես զը-  
 ռոցն Եսթերայ վարկուցեալ յամանց, )  
 Պարեհ երեցագոյն որդւոց Վահրամանց  
 մահակից Հօրն լինի. իսկ Հիստասպ մարզպան  
 գոլով Բակարիական նահանգացն՝ զերծանի,  
 Փրգովսի ՚ի մի ձուլէ զնա ընդ նախահա-  
 ւուն իւրոյ Հիստասպայ Առաջնոյ, և ընդ  
 ազօտ իմն նշմարեցուցանէ ՚ի գրուածս իւր  
 զանցո Հանդամանեաց Երկայնապազուկն ան-  
 ուանեւալ Արտաշիսի. զի գրէ, թէ յետ զըր-  
 սամբ ածելոյ Ապանդ իարայ զամնայն թշնա-  
 միս Հօր իւրոյ Աշտասպեայ, խաղայ զնայ ՚ի  
 Ապաստան ածել ՚ի Հանդամութիւն զար-  
 քայ նոցա զապստամբ : Անդ ՚ի շեշել իւ-  
 րում զվերջին շունչ իւր յաջոյ քաջին Ասո-  
 տամայ, աւանդէ տաեն ՚ի ձեռաս նորա զորդի  
 իւր զիտհման, ուսուցանել նմա զարուեստ  
 պատերազմի, Համբառնալ սորա ՚ի զահն  
 արքունի, ՚ի գրդիո նախանձու բրդի ընդ-  
 դէմ Ասոտամայ, զօր Հանդերձ տամբ իւրով  
 Տարակ օրոյ մասուցեալ՝ ունի զերկիր նորա  
 ՚ի վրէժ արեան Հօր իւրոյ Ապանդ իարայ:  
 Անցք սպանման Ապանդ իարայ, և պաշտ-  
 պանութեան որդւոց նորա ՚ի Ասուատամայ, և  
 կոստորած ողջոյն տան նորա, զեղեցիկս Հա-

մաճայնին պատմութեան Յօւհաց՝ որ յաւ-  
ղագո Արտաւանաց, որպէս և Արտաշիրն  
Դժբաղդատ ընդ Արտաշէսի Երկայնաձեռնին  
նոցա : Ա ասն զի ըստ գրելոյ պատմաբանիցն  
Պարսից, 'ի կալնորա 'ի կանզուն, մատունք  
երկաքանչիւր ձեռաց նորա Հասանեինց ցը-  
ծունկն, զի և անուննորա Բահ - սան, 'ի լե-  
զուն Ավեկսկիրիտացւոց նշանակէ. Բազկունիս :  
Խունդամիր տուեալ տոէ նմա սյար անուան  
վասն քաղցրութեան բարոյից նորա, որ 'ի  
լեզուն Ասորւոց զայն նշանակութիւն 'ի դէմն  
ածէ : Խոկ զանունդ Արդաշիր · բազումք  
սոտ գաբանել ջանացան 'ի Աւրութ շիր · Ա-  
ռախճ բանակի : Խոկ Ար Պահ Վալքում  
Անդղիացի գեղեցիկ ևս մեկնել զայն նշա-  
նակել Առախճ երկրի, զի Արդ զերկիր նշա-  
նակէ, և Ծիր, զԱռախճ : Հեղինակ Թատրի-  
դին Թատրինաց · որ աղալմամբ գնէ զանկում  
Բելշազարայ յառուրս Արդաշրի, 'ի վերայ  
ածէ նա և թէ Հրեայք ինքնագլուխ պայտա-  
զատէին յիշխանաց իւրեանց, և թէ մեծա-  
մած արտոնութիւնք տուաննոցա 'ի Բահմա-  
նաց, որոյ Տիկին էր գուսար Հրեի ուրուք :  
Համաձայն սինդէ Յօվլսեպոս թէ Արտաշէս  
Երկայնաձեռնին լեալ իցէ այր Եսթերայ, զոր  
և ապացուցանեն մեծամեծք 'ի շնորհացն

շուցելոց Աղջին Հրեից : Աս Համարի ար-  
 դարե առաջին ինքնակալոց գոլ Պարսից ,  
 որ յետ տիրելոյ Աազատանի , թագաւո-  
 րեաց 'ի Հնդկաց մինչև յԵթովլովիա , 'ի  
 վերայ 127 գաւառաց : Բայ Պարսից ժա-  
 մանակ աճաց իշխանութեան սորա Հաշուի  
 լինիլ 412 . այլ ըստ Յունաց՝ 40 . և վախ-  
 ճան կենացն 424 ամօք յառաջ քան ըղ-  
 քարիստոս : Յաջորդէ ամին գուատը սորա  
 Հովման զամս 50 : Եւ ապա յանձն առնէ  
 զալայազատութիւն աղդին որդւոյիւ բում Պա-  
 րեհի . Եովծանի : Յաջորդք սորա Քակերք-  
 սէնն Երկրորդ , և Առկդիանոս ամբարձեալ  
 և խոնարհեալք 'ի գահոցից 'ի միջոցի  
 ութիւն սմբոց և եթ՝ դանց առնին , զի և  
 'ի կանոնս Պատղավմեայ՝ զինի Արտաշեսի  
 դնի Պարեհ , 'ի 424 ամէ մինչև 'ի 405  
 յառաջ քան զՊարիստոս : Խսկ Հօմարի նոյն  
 թուի գոլ , զոր Յոյնք Փարազտա կոչեն ,  
 Տիկին խորդ եղբօրին իւրոյ Պարեհի եղեալ :  
 Արդի սորա Արտաշէս Աւշեղն անուանեալ  
 յաջորդէ նմին : Աչ ոք յինքնակալոց  
 բաց յԵրկայնաձեռն Արտաշեսէ , յոյդ  
 ոնուն ճանաչի պատմաբանիցն Պարսից .  
 վասնորց Աւշեղս այս Արտաշէս առ նոսա  
 Համարի գոլ Պարար Առաջին , որ յաջոր-

դեաց Հօմակ մօրն իւրոյ . որ զոյգ ընդ տոն  
 իւրում և եղբօր , այսինքն Դարեհի Ես-  
 թօնի թագաւորէր 'ի վերայ Պարսից :  
 Աքսորումն Փարաղասայ 'ի Բարելովն  
 ակնարկէ 'ի զրկումն Հօմայեայ 'ի թագաւ-  
 որութենէ իւրմէ : Օ անց առնէ աստա-  
 նօր պատմութիւն Պարսից , զ Երգիպտական  
 պատերազմաւ , որ յաւուրս Դարեհի Ես-  
 թօնի , զապստամբութեամբ Մարաց , քա-  
 ջարարութեամբըն Պեղեպոնտոց , և  
 զ Կիւրոսաւն Երկրորդաւ , որ յարձակեցաւ  
 'ի վերայ Բարելովնի . թէ պէտե Ներոդասոս,  
 Ծոռեկիտ , Քսենտփոնե այլք անիթարձա-  
 նագրեն : Դարարայ կամ Դարեհի Առաջնոյ  
 յաջորդէ Դարեհ Երկրորդ . զոր Յոյնք  
 Կողամանոսն անուանեն . որոյ յաւուրս ճա-  
 գեցաւ Ազէքսանդր Մակեդովնացի : Հետ  
 որոյ Արտաշէս Ովքոս , և յետ նորա որդի  
 նորուն Արշէս Խմաղոյնք 'ի թագաւորս  
 Պարսից . որք և սրով ստակին , Պատմիչք  
 Պարսից 'ի մի ճուլեն զոսա ընդ Դարարայ  
 Առաջնոյ , և Համարին զնա պատերազմել և  
 յաղթել Փիլիպոսի Մակեդովնացոյ . զոր  
 ընդ Հարկաւ կացուցեալ զզուսոր նորա 'ի  
 կնութիւն իւր առնուլ , յորմէ և զմեծն  
 ծնանիլ զ յաղթողն աշխարհի , և շինել ըզ-

բաղաբ'ն Գալրաբդիրտ 150, մկնեօք ընդ  
յարեւելո Շիրազայ : Օգործս Արտաշեսի  
Աքոսի պատուաստեցին ալատմաբանք Պարսից  
յանձն առաքինեւոյն և աղետւախոհին Գա-  
րեհի, և յաւելին 'ի վերայ նու և զդժնեւ-  
թիւն գիմաց և զխելաժիտութիւն մտաց .  
զի ընդ նովիմբք Ճաճկեցն զարարառութիւն  
նորա, և զսնապարծութեան աղդին 'ի զեր  
փայլեցուսցեն բարուրանո : Աւանդութիւնք  
նոցա յազագս Յաղթողին Վակեդովնացւոյ,  
կարի պատ 'ի պատք, Հիմնեալք են զլխո-  
վին յանաւոտ և 'ի շռայլ առասպելո աշ-  
խարհին . թէպէտե Համաձայն Քունաց ըն-  
դունին դյարձակումն նորա 'ի Պարսս, զսպար-  
տութիւն և զմահ Գարեհի, զմեծանձնու-  
թիւն նորա 'ի վերայ Հոգեվարեալ Ախոյ-  
նեին, զդաշնակցութիւն ընդ Տաքսիղդոյ  
և Ամփեայ 'ի մարտ ընդդէմ Պարսսի, զարշա-  
ւանս նորա ընդդէմ Վկիւթացւոց . և զդավու-  
թիւնանորտ 'ի վեր քան դչտին : Բառ Օի-  
նելթուլ Ձաւարիղին՝ Փիլիսոփաս Հարկասու-  
գոլով Պարսից, Աղեքսանդր զլանաց Հար-  
կանել զՀարին ոսկի ձուոց . և պատղամ փո-  
խանակ առաքէ 'ի ձեռս զեսպանին Պար-  
սից, "թէ Հաւ որ զայնպիսին ածէք զձուս,  
թռեաւ " : Գառնայ զեսպան Պարսից բե-

բելով Աղեքսանդրի զգունու և մական խառ  
զուց 'ի հետքն Հասակի նորա . և զմաղախ լի  
կնճթաւ առ 'ի ցոյց բաղմութեան զօրացն  
Պարսից , Աղեքսանդր 'ի ձեռս առնու զմա-  
կանն 'ի նշան զօրութեան իւրց , և զգունուն  
փոխանակ աշխարհին Պարսից , և կնճիթն  
զյայտարար բաղմութեան զօրաց 'նորա' Հա-  
ռոց արկեալ 'ի կեր, դարձուցանեցարբայն  
Պարսից զդառն մի սեխ : Ապա տուեալ  
նոցտ զԴարեհն ճարակ սրոյ յաղթողին ,  
զտանամեանն պատերազմ համառօտեն 'ի  
մի մըցիւն ճակատու : Բայց զի մի տրաբք  
այսքան երեւելիք ընդ դրուանաւ զանցառու-  
թեան զնիցին . մանաւանդ՝ ուր ոչ պարձանք  
են իմեւ ոչ անարդանք զհետ դալիք , արժան  
Համարիմ Հարեւանցի ծովովս տալ աստանօր :

Երեք Հարիւր երեսուն և չորս ամսօք յառաջ  
քան զՔրիստոս զբռամբ նուաճեալ Աղեք-  
սաղրի զքաղաքս ապատամբոս Յունաստանի  
500,000 հետեւակօք և 5,000 հեծելովք  
ընդ Նելեսովոնդ անցանէ . և կանգնենէ զմեծ  
յաղթանակն առ եզերը Պարանիկոս դետոյ :  
Համբն եթերորդի խաղայ 'ի վերայ Փռու-  
գիոյ , և զբռամբ ածեւ զՊուկիսայ բովան-  
դակ , զՊամիկեատ , զՊամբադոնիա , և ըգ-  
կապադովկիս . և պարսութեամբն Խառ-

դիոյ կնքէ զվիճակ Ասորեստանեաց :

Աւբանօր Գարեհ մազտալութ ասլրեալ, թողու նմաղիան և գիարասին ամենոյն՝ հարիւր հազարաց Պարսից, Պաշարէ զՃիւր զամփա եօլծն, յորում ողի տոնու Պարսկաստան :

Յետ ընդ իւրե նուածելոյ և զայն, խաղաց պնայ յԵրուսաղէմ, ուր ընդ յառաջ ելա ներ նորա Քահանայապետին կոնսեական դգեստու, զարհութեցուցանէ զՔաջն հեթանոսաց, նահանջէ զնա 'ի խորհրդոց կործանելոյ զքաղաքն, ուստի զոհս Տերան 'ի տաճարին մասուցեալ չեորհէ Ազդին զաստուածպաշտութիւն և զամա շաբաթուց նոցա :

Եւ 'ի հարցանել զընդէրն 'ի նմանէ, սպատասխանէ, թէ այր երեեալ ինձ 'ի տեսլեան Քահանայապետին սարասու, խոսացաւ ինձ զթաղն Պարսից, Յուցանէ նմա Քահանայապետն Յակուա 'ի մարգարէութեանց անսի Գանիելի . թէ Պարսկաստան կործանելոց էր 'ի քաջացն Յունաստանի :

Օոր յիւր վերաց մեկնելով Ազէքսանդրի, խաղաց գնաց 'ի Պազտ : Բերթապահք Պարսից Հզօրապէս մարտնչին, ոյլ ծարան պարծանաց առնու զայն . զՔէտիս սպանանէ տանն Հաղարտն հանդերձ, անցանէ 'ի Պեղուսէն : Եղիպտացիք զնա փրբ-

՚

կիչ ընդունին : Մէմիկս դրունս բանայ  
 տուաջի երեսաց նորս . կեղծաւորին նմա  
 քուրմք Արամազդայ Ամմնի՝ յանապա-  
 տին ի իրէացւոց . և քաղաքն Իշաքովթ  
 զանուն Պահցազին 'ի սլարծանս իւրում  
 դրեալ՝ անուանի Աղէքսանդրիս : Աստի  
 ընդ Պաղեստին և ընդ Տիւր՝ խաղայ յաշ-  
 խարհն Պարսից , Պարեհ յետ բազում  
 հրեշտակախօսութեանց , ընդդէմ ելանէ  
 նորս յափն Պամադեայ , իրը 600 ասպարիզօք  
 հեռի յԱրքեզայ . տասն բիւրուք հետե-  
 ւակաց , քառասուն Հաղարօք հեծելոց , եր-  
 կերիւր կառօք , և Հարիւր և յիսուն փղօք :  
 'ի սլարտութիւն մասնի յերեսաց նորս .  
 և փախստական անկանի յԵկպատականն աշ-  
 խարհ : Խաղայ Աղէքսանդր 'ի Բարելոն ,  
 դրունք անաշխատ բանին առաջի նորս ,  
 Հրամայէ անդրէն նորոգել զմէնեանս կոր-  
 ծանեալս 'ի Բաներքսեայ , դասնայ 'ի Շո-  
 շան բազաք , և տիրէ արքունի դանձուց :  
 Հրամայէ զօրաց իւրոց զՊերսուպօլիսն կոր-  
 ծանել շնաշխարհիկ բաղաքայն Պարսկաս-  
 տանի . զամբոց և զապարանս միայն պա-  
 հելով 'ի ձմերոց իւր : Բայց և զսոսին 'ի  
 գինէրբուս Հրկէզ արարեալ ըստ խնդրոց  
 աթենացի հոմանւոյն իւրոյ , առ 'ի զրէք

Հրացը իցին Աթենայ 'ի Պատրքսեսէ , գիւ-  
 մէ 'ի գարնան 'ի վերայ Եկպատանայ : Պա-  
 րեհ 'ի ճակատ յարդարելն մտախոհ , զե-  
 րի վարի յիւրաց զօրաց՝ ութ'ն աւուրբք  
 յառաջ քան զհասանել նորա , որոց զհետ  
 սկզբէ քաջ'ն զկնի հինգ աւուրց ընդ կիրճ'ն  
 Կասպից 'ի Պարթևաստան : Աւագանի Պար-  
 սից կարեվեր խոցոտեալ զՊարեհ հեծու-  
 ցին 'ի կառս իւր և փախեան , որ յառաջ  
 քան զհասանել յաղթողիս զբաւեցաւն 'ի  
 կենաց , Աղէ քսանդր արտասուեաց ասեն 'ի  
 վերայ նորա , և զդին նորա սպատեաց վե-  
 րարկուաւ իւրով , հրամայեաց զմասել և  
 տանել 'ի Ըուշան քաղաք : Ապա Պարթևք  
 սնձնատուր եղեն սմա , Հիւրկանիա հարկս  
 հարկեաց . Արիք իսպառ նուաճեցան , և  
 Վարդաստան համօրէն , Օ կոյ էառ 'ի  
 Օ սնդբակարդ Հիւրկանիայ , և լուեալ  
 թէ իշխան Արեաց զօր ժողովէ ընդդէմ  
 իւր , ձերբակալ արար զնա . և զԲեսոս մի  
 յոպանողացն Պարեհի , 'ի Բակտրիայ հա-  
 լածական արար յայնկոյս Աքսոնի : Օ հետ  
 սկզբեալ զերկիրն 'ի հնազանդութիւն նը-  
 ուաճէ , և զԲեսոս զմասնեալն 'ի ձեռս  
 իւր , մահու վճարէ : Առկդոնիա 'ի հնա-  
 զանդութիւն նորա մտանէ , և Վարական

գա, կամ Ասմարդանու Հանգիսարան լինի խե-  
 նեց խաղուցն Ապահովաբամետնի, և մա-  
 հուն Կիստոսի զօրավարի իւրումք քաջի :  
 'Ե Եաւկառա կամ 'ի Անքշաբը . դու-  
 ասյ զօրաց, և քաջալերէ զետոսա օրինա-  
 կու իւրով կանայս առնուլ 'ի գերելոյն  
 Հեթանոսոց : Խնքնին 'ի սէրն վառեցաւ  
 Հռոքանայս պարսկի, այլ ամբարտաւա-  
 նութիւն նորա մեծ քան զուրին, բորբո-  
 քեաց զետ 'ի նախոննձ փառայն Բաքոսի  
 և Աքելլեայ : Ա տանորոյ 'ի գարնան ամին  
 525 յառաջ բան զԱքրիստոս, անցանե-  
 ց Խնդոս, այլ չկարացեալ վճարել ինչ, դառ-  
 նաց, և 'ի խորշակահար առապարին Գեղ-  
 րասիոյ կորուսանելով զմեծ մասն զօրաց  
 իւրոց՝ առ 'ի չգոյէ ջուրց և պարենից մի-  
 անգամայն : Հրամայէ զօրաց իւրոց Ապահ-  
 ովաբամետնի խեղկատակութեամբ մտանել  
 'ի Կարմանիս, անընդհատ զաւուրս եօթն.  
 մի՝ զի ծածկեցէ նովին զիւր ծախողու-  
 թիւն . և միւս՝ զի զառասպելու ճշգրտեո-  
 ցէ զԵկոնհոսի, և զորուի զոյն իւր Պիտոսի  
 գրաշմեսցէ 'ի միտս իւրոցն ամենեցուն :  
 Աստ զՀամբաւն լսէ 'Եկարքոսի ծովային  
 Հազարապետի իւրց, որ յԽնդոսէ Հասեալ  
 էր յԱրմիղն կղզի, 'ի ծոցին Պարսից :

Պատժեւ զխուովարարս զօրաց իւրոց , Համ-  
 սանեւ 'ի Պարսագետիս քաղաք , ուր զյի-  
 շատակարան Ախւրոսի մեծի եղծեալ գտա-  
 նելով , սպանեւ զմարդպան երկրին : Հառա-  
 ջէ 'ի Ծօշ , գերի վարէ զառւննորա , 'ի կը-  
 նութիւն առնլով իւր զԱստատիրա , կամ ըստ  
 Պարսից՝ Առշանուկ , զդուստր զերէց նո-  
 րա . զկրսերին տալով Հեփեստիոնի սիրել-  
 ոյ իւրում : Եստէ անտի յԵրւէոս , և  
 անտի ընդ Տիգրիս խոնարհեալ 'ի յԱսո ,  
 շիջուցանեւ դհրդեհ երկպառակութեան ծա-  
 գելոյ 'ի մէջ զօրաց Վակեդովեացւոց . վասն  
 նախապատիւ ունելոյ նորա զզօրո Ասիաց-  
 ւոց : Չուեաց տարս յԵրկպառան , ուր 'ի  
 շուտցառ թեան զինւոյ զՀեփեստիոն զիւր  
 սիրելին սպանեալ , դիմեաց զայրացու-  
 թեամբ սրտին իւրոյ 'ի վերոյ Առսիացւոց  
 'ի լերինս Վարաց , և ընդ բռամբ Հաւա-  
 քեալ զամենեսին 'ի միջոցս աւուրց քա-  
 ռասնից ընդ Տիգրիս գետ 'ի Բարելովն  
 զնաց , անդ զաթոռն Հաստատել տիեղե-  
 րակալ իշխանութեան իւրոյ : Քուրմք քա-  
 ղաքիս մահառիթ զուշակեցիննմա զմուտն ,  
 ուստի զամ' մի բովանդակ 'ի բացի եկաց ,  
 խորհելով նաւահանգէս մեծ կազմել , շորջ  
 զԱփրիկաւ զօր պատել , և զԱտրքեդոն ընդ

Արարիոյ 'ի պարտութիւն նուածել : Բայց  
յաւետ գիւնւոյ և արքեցութեան զհետ  
գնացեալ , զբաւեցաւ 'ի կենաց 325 տ-  
մաք յառաջ քան զՔ. քիստոս : Որու-  
սկայաբար , եկաց սեստիա , և մեռաւ չը-  
ուառ : Արդ եթէ անստակ զի՞նին , և թըշ-  
մանովին արքեցութիւն զՄհեծն 'ի թագա-  
ւորս աշխարհի թշուառել կարաց . ինձ և  
քեզ զի՞նչ արասցէ ընթերցակ : Օ Ենէ թու-  
թխտարիոլ պատմէ , թէ քրիմաց կամ ախտա-  
բաց գուշակեալ էր Ազէ.քանդրի մեռնիւլ  
յայնալիսի իմա տեղւոջ , ուր երկիրն երկա-  
թի իցէ , և երկիւնք ուկի : Ուստի և 'ի դառ-  
նալ նորա յետ մեծամեծ յաղթութեանցին ,  
պատահեցաւ Հոսումն արեան յանգաց նո-  
րա : Մի 'ի զօրսալարաց նորա զերծեալ  
յիւրմէ զզրահն երկաթի , սփռեաց 'իներ-  
քոյ նորա , և Հովանոց ուկի կալաւ զգլիսով  
նորա : Օ որ տեսեալ քաջին յիշեաց ըզ-  
գուշտկութիւնն և աւանդ կարդաց փառացս  
անցաւորաց :

**Պ**ԱՐՍԻԿԻ յառաջ քան զման Ազէ.ք-  
սանդրի՝ զերկիր իւրեանց 'ի զիսաւոր նո-  
խարարս իւրեանց բաժանեալ զքնն , և զեզ-  
քայր Պարհհնի կողմնակալ Պարսաց : Խա-

պէտե լսու ՀՅունաց տէրութիւն Բարելը.  
 նի անեկանէք ԱԵՐԵԿՈՍԻ , Նախորդին մակե-  
 դովնական իշխանութեան յԱսորեստան :  
 Ապա Խնտիդոնսի զօրացեալ տիրեաց 'ի  
 Հեմեսպոնդոսէ մինչև ցԽնդոս գետ : Ահ-  
 լիկոս առ Պաղոմէոս դիմեաց յարքայն  
 Երգիպատոսի , և օգնականութեամբ նորա  
 դարձ աբարեալ տիրեաց Բարելովնի , Պար-  
 սից , և Հեմերկանացւոց մինչև ցԽնդոս  
 գետ : Եւ արդարակորում և խաղաղատէք  
 բարուքն մեծացաւ քան զամենայն յաջորդս  
 իւր : Աս զանուն թաղտորի յանձն ոչ  
 էաս , մինչ ոչ յաղթեաց Պարսկաստանի ,  
 ուր զշքեղ մականունդ Այկատոր , որ այն-  
 ինքն է յաղթող , հիւսեաց 'ի դլուխ . և  
 յամենայն յաջորդս Ազեքսանդրի եկաց  
 ընդ երկար , յաղթեաց Լուսիմոքոսի և  
 սպան զնա : Եմուտու 'ի ԱՅակեղնիեա , և  
 սպանուաւ դտուու 'ի Հասակի ամաց ութոր-  
 նից : 'Ե . 'Ք . 280 . Խնտիոքոս Աովտէք  
 թաղտորեաց ընդ նորու զամն 19 : Որում  
 յաջորդեցաւ Խնտիոքոսն Յօհէոս : Որոյ  
 յառուրս , իրրե 250 տմօք յառաջ քան  
 զՔրիստոս . իշխան ոմն Պարթե Աշկ , կամ  
 Արշակ անուն , սպանեալ զփոխարքայ Պար-  
 թեաց դրօշտիկ ասլատամբութեան ամբարձ :

Եւ միահետց դաշին հնապանողութեան Ալե-  
 լիսկոսի և՝ Ետխարար Բակլարիանոցւոց , և  
 մնացին նմաս միայն եղերք Տիգրիսի : Աչկ ,  
 կամ Արշակ Բ , զոր Պարսիկ սերեւալ դնեն  
 'ի նախնի թագաւորացն Պարսից , ամբարձ  
 զվառն Ազգային Պարսիկ կաւանի , զազա-  
 տեալն ՚ի գերութենէ Ամերգովնացւոց  
 յառաջնոյն Արշակայ . և նովաւ յինքն յան-  
 կոյց զհամօրէն Պարսկաստան : Հաստա-  
 տեաց զաթոռն ՚ի Հուէ , և զեզրոն Ա ա-  
 ղարշտկայ՝ ՚ի Հայս ՚ի Աճրին : Ժաղովեաց  
 դաւադանի աշխարհին , և խոստացաւ ոչ  
 հարկս հարկանել ՚ի նոցանէ , և ոչ թագա-  
 ւորել ՚ի վերայ : Եթէ միարանեացին ընդ-  
 իւր զաշխարհն Պարսից հանել ՚ի լծոյ  
 ծառայութեան Ամերգովնացւոց : — Այս-  
 ոլէս սկսաւ թագաւորութիւն Արշակունեաց ,  
 զոր պատմութիւն աղդին՝ Ալուքուլ Թօս-  
 ոյիթ անուանէ , ոյսինքն թագաւորութիւնք  
 Ազգաց . Համաձայն Պիլինիոսի՝ որ զնէ  
 զայն ՚ի տասն և ութն ձիւզո բաժանեւալ :  
 Օ այսր ամենայինէ տգետք են պատմարանք  
 Պարսից , և չունին ինչ յառաջ բերել  
 զԱշքանեան հարստութենեն , եթէ ոչ զլոկ  
 ցուցակ անուանց թագաւորացն անցելոց :  
 Արք են , Աշք կամ Աշքան , Ասաս ,

Հահմուր, Փիրուղ, Բարում, Հօրմուզ  
Բուրսէ, Փալաշանկ, Բալասան, Խոս-  
րով, Փրէցդուն, Արտան, Աշվան, Խոս-  
րով Բ, Բալաս, Աշվան Բ. կամ Վու-  
դարզ, Փիրուղ Բ, Մարդուի Վու-  
դարզ, Եարսի, և Արտաւան Բ :

Պարթեք ըստ Յուստիանոսի Ալիւ թացիք  
էին, զի սլարթե ՚ի լեզու նոցա գերի կամ  
գաղթ լոի : Ատրաբոն զբնակիչո եղեց  
Տիգրիսի Կարգուկիս Համարի, բայց ոյս  
առաւել մերոցն սլասկանի պարթեազուն  
թագաւորաց, աիրողաց Առրգուաց նահան-  
գի մերոց . զի ըստ Յունաց, Պարթեաս-  
տան սկաներ յեղերաց Կասպիական ծովուն  
ընդ յարելս :

Ոչ ի՞նչ զարմանեամ, թէ ընդէ՞ր Պարսի-  
ացիք, աղդ սնոտիապարձք և փառամոլք՝  
զփառացի զայսր Հարստութեամբ Աշքա-  
նեանց զանց առնել Համարիցին : Ա ան  
զի Աճք Երկրորդ սասակիս մարտուցեալ  
ընդ աղանդոյն Օքադեշդի, խպառ երարձ  
՚ի միջոյ, զմոգս Հալածականս արտր յիւր-  
մէ թագաւորութենէ, և եմոյժ ՚ի Պարս-  
կաստան ոչ միայն զեոր իմն տեսակ կուտ-  
պաշտութեան, այլ և զգիրն Յունաց :  
Ա կայ լիցին վարկածոյս, ոչ միայն ան-

բաւ զբուցային մատեանք զրեալ Հելլեն  
գոլրութեամբ յաւուրս Արշակունեաց 'ի  
Պարս և 'ի Հայու այլ և զրամքք նոցա ,  
որք հասին 'ի ձեռոս մեր : Խոկ Արտաշեր  
Բարիկան , որ դաւով սպան զԱրտաւանն ըղ-  
վերջինն Արշակունեաց , որով կարէր սի-  
րելի Ազգին ձեանալ և զաթոռն հաստա-  
տել անվիանդ իշխանութեամբ , եթէ ոչ  
զօրենս և զգիր նախնեաց 'ի ներքս մու-  
ծանելով . և զօտարալեզու և զՀելլենագիր  
զպատմութիւն անցից նոցա յեղծութիւն  
ապականութեան զնելով : Որոց միանգամ  
խղճք իցեն զխոելոյ զանցս Արշակունի Հա-  
րսութեան , որ տիրեաց 'ի Պանդիսէ մին-  
չե ցԵփրատ , շնորհ արասցեն վերծանել  
զմերն Խորենացի , Հրաշարանն 'ի վիպա-  
սանս աշխարհի :

**Ա**րդւշեր Բարիկան Ատահրացի ,  
ըստ ոմանց սերունդ Բարեկայ , որդւոյ  
Ատահեայ , որդւոյ Բահմանայ , որդւոյ Առ-  
պանդիարայ . և ըստ ոմանց՝ ոչ միայն յա-  
նաւագ տոհմ , այլ և պոռնկորդի ապա-  
չուք : Բայց յարբունս հասանել իւրում  
Փերէս իշխան Պարապկերտի զՀամբաւ ա-  
ռեալ կորովութեան նորա 'ի բանս և յար-

դիւնս , առաքէ ածէ զիս առ ինքն . փու-  
 թով սրտանայ ընդ նա , և զհոգս աշխար-  
 հին՝ զորս անձամբ անօրինել ոչ կարէր ,  
 հաւատայ նմա : Եւ ՚ի մահուն իւրում ,  
 յաջորդեցուցանէ զիս ՚ի գահոյս իշխանու-  
 թեան իւրոյ : Խորհուրդք ամբարտաւանու-  
 թեաննորա յանդիման կացուցանեն երեա-  
 կայութեան սորա երազս , ինքեանց համա-  
 տիպս , զոր պատառաքաղք նորա ձու լեցին  
 նմա ՚ի ձոյլ ոսկի յաթոռն Պարսից , Արով  
 ըստ ամենայն պատմութանից , մվեցաւ ձեռն  
 սրկանել ՚ի թագն Արշակոնեաց : Բարեկ  
 զձեռն ետ օդնականութեան որդւոյ իւրում  
 Արտաշրի յառաջ տանել զիւր խորհուրդս :  
 Ապան զմարդպան Պարս նահանդի , զկար-  
 գեալին յԱրտաւանայ . և փոխանակ կացոյց  
 զՇահապուր զորդի իւր զոր և սիրելն : ՚ի  
 մասնիկ Բարեկան յառնէ ՚ի վերայ եղրօր  
 իւրոյ Արդաշիր , կորդէ զտերութիւն ՚ի  
 նմանէ , գայ ՚ի վերայ Արմանայ , և Ասպա-  
 հանայ , և ընդ իւրե նուածէ զԱրադաս-  
 տան բովանդակ : Խակ Արտաւան , որ ցայս  
 վայր յահնոգս որսոց պարապէր ՚ի լերինս  
 Եկեղատանայ մերձ ՚ի Համազան , մարտիւ-  
 պատերազմի ելանէ ընդ յառաջ նորա , և  
 ընդ թագին և զկեանս վճարէ Արտաշրի

Աստվածեամբ յամի Տեսան 226 :

Հրատարակեալ զի՞նքն Թագաւոր Պարսից , նախ զմոգութիւն ազդին՝ զմբքեալն յԱրշակունեաց՝ 'ի կարգի զնէ , ձեռնադրէ մոզս 80,000 թուով , հաստատէ զիչողովն Քառասինից , և զեօթն ինսցանէ 'ի դժիմուորս նոցին կոցուցանէ . ոչ զարմանամ . թէ մերոյս Ապարագնկայ Հետեւելով 'ի պատմութեանց տեղեկացեալ : Ազա խորհրդավ նոցին Հրովարտակս հանէ ընդ ամենայն սահմանու տէրութեան Պարսից . զայլ դեն մի պաշտել , բաց 'ի քէշիցն Օքադեշտի : Օտաճարս Պարթեաց և զդիւցազնացեալս 'ի թաղաւորաց նոցա առաթուք կոխնէ , բազմաստուածութիւն բառնայ 'ի միջոյ , և բզձեան չարչարանաց և հարստանայն ամբառնայ ոչ միայն 'ի վերայ Հրեից և Քըրիստոնէից՝ այլև այլադեն ժողովրդեան Պարսից աշխարհի : Օ ամենայն դաւառս աղասամբից 'ի Հլութիւն նուածէ , և զահ զինու և զօրութեան իւրոյ ապրանանէ յեղեց Եւփրատոց մինչեւ ցեղերս Խնդոսի մեծի : " Լքին , մերժեցին , անսրբեցին , առնէ Ազգաթանգեղոս , զտէրութիւն Պարթեաց , և Հաճեցան Հաւանութեամբ ընտրել զտէրութիւն Արտաշրի որդւոյ Աստանայ :

Ամբարհաւաճեալ Արտաշըի այսօրինակ  
 յաջողութեամբք , մանաւանդ՝ յետ դա-  
 ւովն Անակայ կորուսանելոց զմերս Խոսրավ  
 Առաջին Մեծ , և ըստ բռամք նուաճելոց  
 զաշխարհս Հայոց , խորհուրդ 'ի միտ առ ,  
 թէ Պարսիկք առ Ախուրոսիւն մեծաւ իշ-  
 խէին ոստիկանօք իւրեանց 'ի Պարագնդաւ  
 շեշեանն Օտլ , և 'ի Կարխայ ցչօնիա . որ-  
 պէսև բոլորին Եղիսկոսի մինչեւ 'ի ծագա-  
 վթալպէոյ : Խրաւոնք յապաղեալք ե-  
 ին բազմաժամանակեան բռնաբարութեամբ ,  
 այլ ոչ 'ի սարու վերջացեալք : Ա անորոյ  
 ննարեալ արս կորովիս և բարձրահասակս  
 'ի տէրութեան իւրում չորեք հարիւրս թը-  
 ռուով հրեշտակախօս եղենոքոք առ Կայսրն  
 Հռովմաց Ազեքսանդրոս անուն , այսպէս  
 " Հրաման է ձեզ Մեծի թագաւորին  
 Պարսից , թողուլ լքանել զռահման Ասի-  
 ացոց , զգաւառ իշխանութեան նախահարց  
 իւրօց , և շատ համարիլ ձեզ զանվրդով  
 ժառանգութիւն Եւրոպաց : " Ապա՝ անսի  
 Ազեքսանդրոս Աներոս , և աստի Արտաշիք  
 Բարեկան սկսան զօր ժողովել : Բանակ  
 թթագաւորիս մեծի կայանացը 'ի 120 . 000  
 հեծելոց վառելոց 'ի զէն և զբան . յեօւն  
 հարիւրս փաց պատերազմովց , և 'ի 1800

գերանդազէն կառաց : Առվին կազմութեամբ  
զճակոտ յարդարեցին , փախստական եղե  
առաջի Ազէքսանդրի Արյահը թագաւորին  
մեծ , և աւար և յաղթութիւն միջազետաց  
պատկերաց զարդանս Հռովմայ : ԱՅլ բատ  
Գ.իրոնի ոչ միայն անարժան հաւատոց իմոց  
համարիմ զայս ինքնաձոյլ չափազանցու  
թիւն , յոր միշտ ընկլմին պատմիչք Հռով-  
մայ , այլ և անաւօտ զրոյց գրեմ զայս յօ-  
դեալ առ . 'ի ծածկոյթ մեծագոյն անարդու-  
թեանց : — Քերիս յառաջս բաժանեաց  
Աւելոս զզօրս իւր , զառաջինն քանակե-  
ցոյց 'ի ճախնուառ Բարելովին , ուր խառ-  
նի Տիգրիսն Ճշւփրատ , որ կործանեցաւն  
'ի նեսից Պալսից : Ճըկլորդին գումարեալ  
'ի զաշնակից թագաւորաց անոնի ժողովր-  
դեանն Հռովմայ , կացոյց 'ի սրաի աշխարհին  
Մարաց , որ տարաւ զյաղթութիւն 'ի վե-  
րայ Հեծելազօրուն Պարսից , իսկ զերրորդին  
ընդ իւրև կացոյց , ԱՅլ վերադարձ նորա  
'ի պատերազմէն , և ճմբրելն ՃԱՆԱԻՌՔ  
Խորհրդով Մօրն իւրոյ , մահաբեր իմն ե-  
ղե զբայցն Հռովմայեցւոց : Թակէպէտ 'ի  
վերջոյ օդ ականու եամբ մերոյ Աշխարհի՝  
որպէս և թուի , կալան նոքա զմիջողեաս .  
և Աբքայն մեծ Ասանեցան , որ խրոխտայր

բառնալ 'ի նոցանեւ զբովանդակն Ասեա' յա-  
ւել 'ի դաւառո նոցա և զմասն ինչ իւրոյ  
տէրութեան :

**Ա**ՌԱԾ էր Արտաշը թէ " Խրաւունք  
թագաւորին պաշտպանին զօրօք , և զօրք  
կեան հարկօք . և Հարկք ծնոնին 'ի Հեր-  
կոց : Բայց և Հերկք ոչ իւիք ծաղկին ,  
եթէ ոչ չափաւորութեամբ : Այն մոռա-  
նոր , թէ իրրեւ թագաւոր , պարտիս սլաշտ-  
արան կալ օրինաց և Հայրենեաց քոց :  
Օ սեղան պաշտամանցն , և զաթոռ արքունի  
անզանազան համորեան . որը մեշտ զմիմեանս  
կազդութեն : Անքնակալ անկրօն բռնա-  
ւոր է , և ժողովուրդ զուրկլ յերկրցունց մի-  
անդամայն ' Հրէշ իմն է աղդի մարդկան :  
Արօն հաստատուն կայ առանց թագաւո-  
րութեան , բայց թագաւորութիւնն առանց  
Արօնի ոչ բնաւ երբէք : Օ ի գործ Ար-  
օնից են անխախտ պահել զիրաւունս բա-  
զաքական ընկերութեան : " Թագաւորեաց  
սա զամա քառասուն :

**Ա**ՊՈՒՀ որդի և յաջորդ Արտաշը  
մինչ պատազէր 'ի կողմանս Խորսանայ ՚ի  
Հետզանդութիւնն նուաճէլ զապստամբու-  
թիւն երկրին , Ամանէզ , իշխան ոմն Արտա-

բացի յազգէ Աստղուն, Արալիք Օ էրին  
 կոչեցեալ ամբացոյց Հզօր Հզօր սլարսալոք  
 դքաղաք իւր զԽաթէր, կամ զ Խազէր .  
 և զՄիջազեսս եհան ՚ի Պարսից : Որոյ ՚ի  
 վերսյ դիմեաց Շապուհ, և մատնութեամբ  
 զստեր Արանեզայ էտո զքաղաքն, Ար-  
 նախուզ արար զԱրանէղ իւրովքն հանդերձ,  
 և դմատնուհին վարսը փոխան դրկանաց  
 դահճաց մատուցեալ՝ տիրեաց Վազոյիրայ .  
 խազաց և ՚ի վերսյ Ածընայ և էտո զայն .  
 այլ կարի դժուարութեամբ : Քարձակեցու-  
 նուն ՚ի վերսյ Հռովմէական դաւառացն  
 Ասորեստանի, ձերբակալ արար զԱյսորն  
 Վապենախանոս . ուր Ալիւրիանտէս ոնն  
 անեշան փախուստականն յԽետիոքայ՝ եկաց  
 Հռովմէական զօրուն փոխանակ Այսեր,  
 և զբգուեաց զախոյեան իւր դիմել ՚ի վե-  
 րսյ Ահետիոքայ : Օոր էտո և յաւարի  
 եհար : Ողինաթոս Յագաւոր Պաղմիրաց-  
 ւոց, զորոյ զղաշն բարեկտմութեան առ  
 ունն հարեւալ էր Շապէոյ, յինքն հաւա-  
 քեալ զցրիւ զօրացն Հռովմայեցւոց, հա-  
 լածեաց նոքօք զղօրս Պարսից մինչև ՚ի  
 դրունո Տիարոնի : Դարձ արարեւալ ուա-  
 րաւ բազմաւ, պսակեցաւ ՚ի Գաղիանոսէ  
 իրքե աթոռակից իւր : — Շինեաց Շա-

ողուհ զԵիւշապուրհ քաղաքն ՚ի լսորա-  
սան , զյառաջագոյն կտուցեալն ՚ի թա-  
համուրասյ , և զկործանեեալ եղծեալն յԱ-  
ղեքսանդրէ : Եց զՇ ապուրն յանդիման  
Քաղիսոնի , լի փորուածովք և զբոշելովք :  
Աս և ընդգեմ մերոյս Տրդատոյ , զլեռնա-  
յինս Հիւսիսականացն յարուցանէ , ոյլ  
կորովութիւն Քաջի բաղկաց Արշակուն-  
ոյն ՚ի նախատինս սորա թաղէ զորքայն  
Բառաց դքաջ :

**Ո**ՐՄԻՉԴԻ ԱԹԱՎՔԻՆ յաջորդէ ոմա , ոռ  
որ դիմմն Բակուր մ. ձ իշխան Աղճնեաց ,  
և Աննատրուկ ասլստամբից թագաւոր Փայ-  
տակարանի : Աս յետ տարւոյ միոյ յանձն-  
առնու զթաղն որդւոյ իւրում Ա ահրա-  
մոյ , բարեբարի և սիրելոյ յամենացն հը-  
պատակաց : Աննի յաւուրս սորուն տարս-  
ծեալ զՀերձիս իւր , հրամանու սորա չտ-  
րաման լինի : Խոկ յաւուրս թուրանորթին  
և անառակին Ա սամայ որդւոյ սորա , Աս-  
քսս թնդ Տիգրիս էանց , և զՏիգրոն տի-  
բասիեանաց : Ա սամ Երրորդ օրդի նորա  
զամիսս չորս : Եւրակէն եղբայր նորա ընդ-  
նորա . որ զՀայաստան դրամբ էած , և  
զԼայսր Գնաղերիոս ՚ի սլարտութիւն մաս-

սեաց : 'Ի դաշ ամի՞ն երկրորդի , Հռով-  
 մայեցիք խառն ընդ Հայոց անցին ընդ լե-  
 բինս Հայաստանի , 'ի վերայ Պարսից .  
 Դ աղիբա առին և զարեւլեան մասն եղեց  
 Տեղթիսէ ընդ հարկաւ արկին : Որմիղդ Բ .  
 ամս 7 , և զամիսս 6 : Ը ապուհ Երկրորդ .  
 որոյ աւուրս շրջաբնակ աղինք . այսինքն  
 Հայք , Յ այնք . Արարք , Թռաթարք և  
 Լ եղիկք առապատակ սփռեցին յաշխարհն  
 Պարսից , Անագան ուրեմն զարթուցեալ  
 նորա երրեւ զիրթիւն առիւ ծու յարձակեցաւ  
 'ի վերայ Արարացւոց , և սրոյ Ճարակ տը-  
 ռեալ զաշխարհն՝ խալաց յանապատ նոցա  
 'ի Հիջամայ մինչև յԱսորիս , և քերեալ  
 Ղծովեղերօքն Միջերկրականին՝ եհաս 'ի  
 Բերիս կամ Հալապ , և կործանեալ ընդ  
 սոխք իւրովք զորս և եղիսն , դարձաւ 'ի  
 Քաղաք իւր 'ի Տիարոն , Ճամբ պարապոյ  
 գաեալ սորս զխառնակութիւն աշխարհին  
 Յունաց՝ յետ մահու մեծին Կոստանդիա-  
 նոսի , տիրեաց քաղաքաց բազմոց 'ի Միջա-  
 դեսս , զՄ ծրին պաշարեաց , և զԱտրպա-  
 տականս բովանդակ հան յանարի յաջոր-  
 դաց Վաղին Տրգառայ . որով և շիջոյց  
 Կթազում ցասումն բարկութեան իւրոյ :  
 Ո նեիցս ճակատ յարդարեաց ընդդէմ

Հռովմէտկան զօրաց , յորոց յերկոսիւն  
 կայսրն ինքնին զօրավարեր , այլ 'ի մարտիւն  
 Անջարայ խաղառ խորտակեցան Հռովմայե-  
 ցիք . բոյց որդի նորուն ձերբակալ եղեալ  
 սատակի 'ի Հռովմայեցւոց անտի : Ակիւթա-  
 ցիք յոսն կացին՝ յեղերս Ոքոնի : Ըս-  
 պուշ ել 'ի վերայ նոցա : Հռովմայեցիք  
 վերստին առին զՄծրին : \*Եժկահետ  
 ապա դաշին եղելոյ՝ պաշտրեցին Պար-  
 սիկք զՏիգրանակերտ անընդհատ զաւուրո  
 եօթանասուն և երեք . և կորստեամբ լա-  
 ւագոյն մասին զօրաց իւրեանց , հազիւ կա-  
 րացին տիրել այնմ : Յաջորդել Ուրացողին  
 Հյուլիանոսի , Պարսիկք վերստին զժրեցին  
 ուխտին հաշտութեան , և նա 60,000  
 կրթեալ զօրօք խաղաց 'ի Պարսկաստան ընդ  
 Ասրքասին և յԱմբուր մինչև 'ի դրունա  
 Տիսրոնի : Պերոզապուր և Ամբուր քա-  
 ղաքք Մովլանդալքոց յԱսորեստանի մի-  
 այն ընդդեմ կացին արշաւանց նորա , և  
 չարսչար կործանեցան : Տիսրոն անմատոց  
 մնաց 'ի զօրաց նորա , և եղերք Տիդրիսի  
 սահման եղան յաղթութեանց նորա : Մե-  
 ծաւ անմատութեամբ խորտակեաց ապա զեւ-  
 ատորմիզ պաշտրաց իւրոց , և խարդաւա-  
 նեալ յանապատին անջրդւոյ՝ յիւրոցն ա-

ուածնորդաց զբաւեցաւ . 'ի սկսաբաց : Խոկ  
 Պարսից , որ մինչ ցոյժմ դէտակն կալեալ  
 նկատէին զելս պնացից նորա , յեղակար-  
 ձուստ հորդան ետուն 'ի վերայ . զՅօւ-  
 լիանոս սպանին սրով , և զգօրսն ցրուեցին :  
 Ուստի հսկեքին դաւառք յայնկոյս Տիդ-  
 շիսի անկան 'ի ձեռս Պարսից ըստ զա-  
 շին եղելց 'ի Դարա , ընդ Մծրնաց ,  
 Անջարայ , և Հարաւային մասինն Հոյաստա-  
 նի : Թագաւորեալ զամս 71 . յաջորդի  
 Խթաշըէ Երկրորդէ եղբօրին իւրմէ : Օ որ  
 աթոռանի արարեալ Շապհոյ Երրորդի որդ-  
 ւոյ Շապհոյ Օ ուլակաստայ , ունի զակրո-  
 թիւն 'ի ձեռին : Այր քաղցր էր սա և  
 բարերար ամենեցուն , այլ մեռաւ 'ի զրա-  
 նի իւրում , սեան նորա 'ի գլուխ սորտ ան-  
 կանելով : Եղբայր նորա Ա տհրամ Արման-  
 շահ , կամ Ա արանիս Ջորլորդ 'ի Քունաց  
 կոչեցեալ փոխանորդէ նմին յաթոռն Պար-  
 սից . որ 'ի խաղաղել անդ գլուխով թիւն  
 ինչ ծագեալ 'ի մ.ջ դօրացի իւրոց , նե-  
 տահարեալ անկանի . և Քաղիերդ կամ Եղ-  
 դիջերդ Աաղաթիմ յաջորդէ նմա : Պատ-  
 մարանք արևմտից Համարին զատ ոյլք քաղ-  
 ցը և բարեբարոյ , իսկ արեւելեայք զընդէմն  
 պիդե՞ն , բարեբաստութիւն աշխարհի դա-

ամելով զմահնորա աքացւով և բիստրին, յեւ  
16 ամաց թագաւորութեան իւրոյ :

**Բ**ԱՀՐԱՄ ԳՈՒԽԻ. այսինքն Յիու, յա-  
ջորդեալ նմա, նախ զպաշտպան իւր պատկե-  
ղեշխան ծովեղերացն Արարէական Շռոցոյն .  
'ի խնամն որոյ յանձն արարեալ էր իւր 'ի  
Հօրէն իւրմէ : Արով և զաւազանի դրանն  
խոժուեցուցանէ ընդդէմ իւր : Թռոյութիւն  
շնորհէ, ապա և վերնամարտիցն ամենե-  
ցուն, որք էորհէին զրկիլ զնա 'ի թաղէն  
Պարսից : — Ապա խաղուց և պարուց ըզ-  
հետ ընթացեալ՝ Համարձակեցուցանէ զիշ-  
խանն Արեաց, յայնկոյս Աքսոնի արշաւել  
'ի սահման տէրութեան իւրոյ, և զիտրա-  
սան դիսովին յապականութիւն եղծութեան  
իջուցանել : Քանիկարծ աներեն յաչաց լինի  
այս Յիու . և մինչ զարհութեալ աւ ագանւոյն  
զհաշտութիւն խօսիլ ընդ թշնամոյն խոր-  
հէին, ահա վերսափին երեխ զօրավարել  
այրընտիր գնտի քաջամարտիկ զօրականաց .  
որովք զանխուլ զզիշերայն յարձակեալ  
'ի բանակ նոցա, զիշխան նոցա իւրով ձե-  
ռամբ սպանանէ և զզօրս նոցա ցրուէ մինչ  
'ի սպառ : Պատերազմն մեծ ընդ Վեծին  
Թէոդոսի վճարեցաւ դաշտմբ Հարիւրա-

ման հաշտութեան : ՀՅետ թագաւորելոյ  
զամս ութուտասան , կորետ ինքն և երի-  
վար իւր յորսայն իւրում զցիռ , յորմէ և  
զանունն ընկալու :

**Յ**ԱԶԿԵՐՏ ՍԻՊԱՀԴՈՍ , կամ սպայա-  
ռէր , հալածողն անուանեալ . թագաւորէ  
զամս 18 : Այս մեծ հալածոնք Եշիելեց-  
ւոյ Աստուծոյ . և այն մեծ նահատակու-  
թիւնք Վարդանանց Արբց . որ յաւարս  
սորա կատարեցան . տես ի Հրաշապատւմն  
մեր Եշղչա , և 'ի Պաղար Փարալեցի : Որ-  
միզդ 'ի կենդանութեան հօր իւրում կար-  
գեցաւ յաջորդ . այլ Պիերողի անկեալ առ  
իւսն թաթարաց , օդնականութեամբ նորա  
դիմէ 'ի վերայ աշխարհին Պարսից , սպա-  
նէ զԱրմիզդ , և ինքն թագաւորէ փոխա-  
նակ նորա : Այլ Պամարք արշաւեն 'ի  
Պարս . Պիերող 'ի մարտին անկանի , և Փա-  
րաշ կամ Վաղարշ Եղբայր նորա թագաւորէ  
ընդ նորա զամս 6 : Ապա Քօրաս կամ  
կաւատ , հայրն Այուշիրվանայ . որոյ 'ի  
տասներորդ ամի թագաւորութեան տարա-  
ծեաց Վաղգակ զՀերձուած ամնարշու-  
թեան իւրոյ , որոյ վասն յոտին կացին ա-  
ւագանի գքան նորա , հանին յաթուց

զ Աւատ , և փոխանորդեցին զեղբայր նորա  
զ Ձամասապ կամ զ Պամասապ ընդ նորա :  
Փախատական լինի Աւատ առ Ձամարս ,  
և օգնականութեամբ նոցա դարձ արարեալ՝  
տիրէ աթոռոյ իւրում : Օ ամս եօթն անընդ  
հաս պատերազմի ընդ զօրացն Հռովմայեցւոց ,  
տիրէ Տիգրանակերտի , և զ ընակիչս նորա  
սատակէ որով : Ենաստաս Կայութն շինէ  
զ քաղաքն Պարա ընդ մ.ջ Մամալուտոյ  
և Մծրնոց ՚ի պատմէ շամբութեան ընդդէմ  
արշաւ անացն Պարսից : Եռնու Աւատ և  
զ Գանձակ . և զ Պարտաւ յաշխարհիս Հայոց .  
և թագաւորեալ զամս 43 մեռանի :

**Ք**եսրը . կամ Խոսրով Եռ շիրուան  
յաւուրս Հուստիանոսի Կայսեր : Հաստա-  
տեալ յաթոռ իւրում , արմատախիլ առնէ  
նախ զմահարեր մոլորութիւն հերձուա-  
ծոյն Մաղդաքայ , զնա ինքն զհերձուա-  
ծապիտ համախռհիւք իւրովք հանդերձ մա-  
հու մասնեալ , զկալուածս որբոց և այրեաց ,  
զ յափշտակեալսն ՚ի նոցանէ անդրէն գար-  
ձուցանէ . զ խաթարեալ կամուրջս աշխարհին  
վերստին պնդէ , զ պանդոկս բազումն կառու-  
ցանէ . զ զ իւդ և զաւանաւերեալ ծաղկեցու-  
ցանէ , բանոց գ պրոցս իւաեղիս աեղիս , և այն-

քան քաջալերէ զգիտութիւն , մինչ իմաս-  
տունք Հայոց և Յունաց խմբին իւգուանեա-  
րա , Փոխանակ անապը մի միայն նախա-  
րարի , կարդէ զջորեսին գահերէց նախա-  
րարութիւնս յաշխարհին Պարսից . որոց և  
զբովանդակ սահման տէրութեանն բաժանէ :  
Տալով առաջնոյն զպացալաատթիւն Խորա-  
սանայ , Աադաստանին Վակրանայ , Երկրոր-  
դին զսահմանս Ասպահանայ , Աարազա-  
նիսի , զԳիլանայ և զՃայոյցն Վեծաց : Երրու-  
դին՝ զՊարս և զԱհուազ : Եւ չորրոդին՝  
զԽրաղ Պարսից և զԱրաբացւոյն միանդա-  
մայն : Աարդէ կարդս և կանովիս շահեկանս .  
զԱրտաշրին կրկին Հրատարակէ : օրէն քնոր-  
շանութ իւրոյ տէրութեան : Բանայ զմեծ-  
ուսումնաբանն բժշկութեան 'ի Գոռնդի շա-  
պութ քաղաքի առերի Շուշնայ , որ զինի  
ժամանակաց փոխադրեցու 'ի Հանդիսարան-  
քերթողութեան , ճարտասանութեան և  
իմաստանիրութեան : Ազատանձնութեամբ  
մեծաւ շնորհէ բժշկի ուրումն յունի զա-  
դատութիւն 5000 գերեց , և իմաստոցն՝  
որք յաղթող գտնն 'ի վիճին լնող Ուրիա-  
նոսի , զբավանդակ գանձաւ պարտելոյն :  
Պինդ կալաւ զօրէնս մողութեան . և  
հալածանս յարոյց ընդդէմ օրոց հակա-

ռակին գոյացին այնովեկ : Հրամայէ թարդ .  
 մանել 'ի լեզու Պարսից զլաւն 'ի դրոց  
 Հունաց և Հնդկաց : Խուեալ տպա թէ  
 բարոյական և քաղաքական Առակը Պիկը-  
 պեայ Բրահմանի սպահեր մեծաւ յար-  
 գութեամբ 'ի զանձարանի Արքունեացն  
 Հնդկաստանի , առաքէ անդը զՊերող ըլ-  
 ժիշտ իւր , զտանել որով և որքանեաւ և  
 կարէր , և յեզու զայն 'ի լեզուն Պարսից :  
 Օ որ 'ի ձեռօս թերեալ նորա 'ի զբօսանս  
 Հանապաղորդենի մասուցանէ Արքայի և  
 Աւագանւոյն : Խմասաւնքն Հնդկաց ցու-  
 ցանել կամելով թէ զօրութիւնը թագա-  
 ւորաց 'ի կարս Հորստակաց կայսեային ,  
 Հնարեալ էին զՃիարշաւանայն խող , և զայս  
 'ի Պարս փոխադրեաց Կուշիրվան :

### ՍՈՐԻՆ ԵՌԵԾՎՅԻ ՕԴՏԱԿԱՐՔ

**Օ** ԶԵՓ անձին ճանաչողին՝ յինէն ող-  
 ջոյն մասուցէք , Արժանաւորաց՝ յիմոց  
 դանձուց բաժին տաւք : Օ անձնահաճն  
 յինէն 'ի բաց մերժեցէք : Օ անզանշա-  
 ճից մի խօսիք : Օ անքննէլին մի քննէք ,  
 Օ ամենայն առ չպիտուսմի արկանէք , Ամե-  
 նայն գործոց նախընած զսկուած՝ դկաստարածն  
 քննեցէք : 'ի մանկութեան զանուն բարի

**Օ**

Հո չակեցէք : Օ փորձեալն մի ևս փորձէք :  
Օ փորձեալն ընդ անփորձին մի փոխանակէք :  
Ի՞նդ անփորձ ախոյենի մենամարտիք ոչ :

Քայլոց տան տիրութիւն մի առնեք : Բնդ  
անցեալն՝ մի ափսոսայք : Օ շնորհան յետ մի  
պահանջնէք : Բնդ չարաց մի բնակիք : 'Ի  
զիմինս մի նստիք : 'Ի հեղեղատս զտուն մի  
շինեք : Բնդ գոզաց ուխտ և գաշինս մի կը-  
ռեք : Իշխանաց գրացի մի կայք : 'Ի նո-  
րոգ ճոխացելոց զփոխ մի առնոյք : 'Ի գրունս  
տանց խանութ մի շինեք : 'Ի չար գրացեաց  
հեռացարժուք : Բնդ անուղղայս 'ի ճանա-  
պարհ մի երթայք : Բնդ ծառայ արծաթա-  
ղին մի կոռուիք : 'Ի խրատ անարգողաց հեռի  
կացէք : Մանկանց խորհուրդ մի յայտնեք :

Հրամանաւ կանանց չարիս ումն ք մի առ-  
նեք : Օ հաւատարիմ ծառայն առ սակաւ  
վիսառն Ելոյր մի ընկենուք : Օ կոտու տանն  
անդամ չափեան , և ապա կարեան : Օ կեանսդ  
անդիտութեամբ մի անցուցաներ : Օ այլոց  
կոիւ 'ի ձեր յանձնմի առնուք : Կոիւ միջակ  
և համբերութեամբ լիցի ձեզ : 'Եախ զնորն  
անկեցէք , և ապա զհինն հանջիք : Քօտարին  
հող ծառ մի անկէք : Օ օտար պատաւն 'ի  
տուն մի առնուք : Կորստեան օտարին մի  
ափսոսայք յաւետ քան զտէք :

'Ե մէջ ասն և կնոջ առելութիւնն մի ձգեր :  
 'Օ կին 'ի մերձաւորաց առ : Ո նդ թագաւոր  
 խոնարհ մի Համարձակիք : Օ իշխանս սիրե-  
 ցէ .ք , թէ պէտե սակաւ սիրեցիքն 'ի նոցանէ :  
 Ո ագաւոր թէ և փանաքի իցէ , դու զնա մած  
 ծանիր միշտ : Օ ահ և երկիւղ մածաւորաց  
 կալարուք : Զիրք թագաւորին թէպէտ և  
 սակաւ , դու մեծ Համարեաց : Ո նդ այց  
 Հարուստ մի նախանձեր : Օ գեղին մինչ առ-  
 ող՝ բմափեցէ .ք : 'Ե աղայութեան զծերու-  
 թիւն 'ի միտ առէք , Օ հոգո ծերութեան  
 յիրիտառարդութեան տալայք .ք Յառողջու-  
 թեան՝ զհիւանողութիւն յանշ ածէ .ք :  
 'Ե թշնամութեան՝ սիրոյ տեղի պահեցէ .ք :  
 Ո նկերիդ խորհուրդ մի յայտներ : Յամե-  
 նայն իրաց զափաւորն սիրեցէ .ք : Օ անգէտ  
 սիրելին մեծ թշնամի Համարեա : Յիմաս-  
 տուն թշնամոյ երկիւղ մի կրեր : Զեղէն 'ի  
 ձերդ 'ի փորձութիւն մի անկանիք : Զեր զործն  
 ձեռոք .ք կատարեցէ .ք : Այլոց ձեռոք .ք օձ ըմ-  
 բռնեցէ .ք : 'Ե բարկացողաց պատրաստ կո-  
 ցէ .ք : Անիմաստնօրէն յամենայն իրս ձեռն  
 մի մլաէ .ք :

'Օ այր դիտուն և զգըշի տէր թեթև մի  
 անսաներ : Որ քան զքեղ աւելի դիտէ՝ սո-  
 ւել պատուեա : 'Ե բանաստեղծէ զզոյշկաց ,

այլ ըստ ժամանակին սէր և մօտաւորութիւն ցոյց : Յամենայն մարդոյ զբարի խօսալն ընդունիր : Չար խօսից չար պատասխանի մի տայք : Յամենայն խօսից մի վստահանայք : 'Ի ցածից և յանարդաց զբարձր և զընտիրն մի խնդրէք : Միալ տեսութեամբ ընդումն մի փայփայիք : Ամենայն մարդոյ շուտ մի հաւատայք : Օոյր պարտապան յերաշխաւոր մի ընդունիք : Այսօրեան 'ի վաղիւ մի ճգէք : Օ կերակուր և զըմնիլիս առանձնարար մի ընթրէք : Առանց Հրաւիրակի հիւր ուրեք մի լինիցիք : Ո՞նդ բարեբաղայից մի հակառակիք : 'Ի ժամու գործոյն դադարեկ մի կայք : Յամենայն ժամգապագայն խորհեցարուք : Ո՞նդ այլազգեաց անպատեհս մի խօսէք : Յոխակալաց Հնուցարուք : Քերեսս թշնամուաց դառնութեամբ մի հայիջիք : Յամենայն 'ի զըցու ձեր բազցր և մալց եղերուք : Օ օր մահուն 'ի միտ առէք : Յամենայն 'ի գործաձեր զԱստուած յիշեցէք : Անդրալ ազօթս արարէք : Գոհութիւնը 'ի լեզուաց անպակաս լիցին : Յողորմութենէ աղքատաց ունայն մի լիցիք : Աղքատաց և կարօտելոց օդնական կացէք :

**Յարոյց պատերազմընդ կայսերն Յուստի-**

անոսի : այլ յառ անին Հոգոց Հարկեալ ըն-  
կարտ զՀաշտութիւն Հառվից 22,000 ոսկ-  
ւոլք Հանդերձ : Աւոտի գաշն եղ մշտիցե-  
նաւոր Հաշտութեան , յամի աւտոն 635 :

**Գարա** պրահեաց Պիարսկատանի : այնու գա-  
շաբը , զի մարդպան յարեւելից մի կացցէ  
անդրէն : Ամի ամի առնոյր Հարկս երեսուն  
Հաղարաց ոսկոց , ոչ այն զի կարօտ երես-  
ցա : այլ զի զԱրևմանուն Ասյսերութիւն 'ի  
Հարկատուս իւր կալցի : Յուսաբին և Տի-  
քերոս վերստին յարեւն , և ծերունին  
Կոշ շիրվան անձամբ դօրավարեալ բանա-  
կի խրում , թէպէտ և երկիցս չարաչար  
Հարսու յաջաղ բաղկաց Բելիսարիոսի , այլ  
'ի վերջ յազմող դաեալ Հառվիմական ճա-  
կատուն , զՊարա առնու և զԱսորիս կողով-  
տէ : Աշխարհն յայներոյս Աքսոնի մինչեւ 'ի  
Արկան և ցԱնգոս զգերադահութիւն  
առրուն մեծորէն Հարկօքն իւրեանց : Ար-  
միանդամ վրդավեց զաշխարհն Պար-  
սից . և յերջանելութիւն 'Կոշ շիրվանոյ խոս-  
նեաց լեղի գտանութեան , եր ապօտամբու-  
թիւն որդւոյ նորա 'Կոշ շիրվանոյ + 'Բան  
զի սա ծնեալ 'ի մօրէ 'Բարիստոնեայ' սնու-  
քնու մացրենի գաստիարակութեամբ 'ի Ա ար-  
դապիսաւթիւնս հաւատոյն 'Բարիստոսի . և

առ ոտն եհար զօրէնս մողութեան դհօրէն  
իւրոյ : Յետ ազգի ազգի ողոքանաց և սպառ-  
նալեաց չկարացեալ . Առշիրվանայ խախտել  
զետ կամ զմայրն . ՚ի հաւատոց , փակէ . ՚ի  
բանդի : Այլ ՚ի ժամանակի այլոմիկ , յո-  
րումսա ՚ի Միջագետս պատերազմէր , Առ-  
շիզատայ համբաւ հասանէ զմահու նորա :  
Ուստի աճապարեալ զերծանի ՚ի բանգէ ,  
ընդ իւր և զբազումն ՚ի կապելոյն զերծու-  
ցանելով , գունդ կազմէ նոքօք , և բռնա-  
նայ ՚ի վերոյ Պարս և Ահուազն գաւա-  
ռոց : Գառժկան այսր ապստամբութեան  
Հասեալ յականջս Առշիրվանայ պարտա-  
ւորէ զետ զմանձ Հաղարսալետ իւր զԱ ում  
Բուրզին ընդդէմ առաքել նորա : Գալով  
գոյ նա , ցրուէ զգունդն Առշիզատայ և  
զնա ինքն սպանեալ սրով , գառնայ և ողբոյ  
՚ի վերոյ Արեսովմայ Արոյ :

**ԱՐԴԱՎՄՈՒՆԻՍ Պարսից յաջօրդէ Ուո-**  
րովամ , այսինքն Արմիզդ Երկրորդ յամի  
Տեսն 579 : Ճորչափ Ասխաթարութիւն  
աշխարհին ՚ի ձեռին կայր Արուղիայ Միհո-  
րան , դայելիի նորուն , պատկառանք երե-  
սոց նորա սանձք լինէ ին մանուկ արքայիս ,  
այլ յորժամ պարտաւորեալ ՚ի ծերութե-

նէ Հասակին յետս , եկաց նա 'ի Հասարա-  
 կավարութեան պաշտամանեն , Արմիդդ ըս-  
 կառ այնուհետե Համարձակ անառակիւ ,  
 Օ որ պատեհ տեսեալ Հեռաւոր գաւառացն  
 Հոգկառանին և Արաբիոյ , յետս կացին  
 'ի նմանէ . և Հռովմք և Ակիւթացիք յար-  
 ձակեցան 'ի վերոյ , Բահրամ կամ Ա ահ-  
 համ Դ ուրին սպարապետ Համօրէն զօրացն  
 Պարսից Հալածական արարեալ յաշխար-  
 հէ իւրմէ զԱսաքանն Թամթարաց սմբար-  
 ձաւ 'ի զօրաց անսի յաթուն թագաւոռ-  
 րութեան , սպան զԱրմիդդ , և ինքն կար-  
 ձագոյն և ժամանակաւ վարեալ զիւր իշ-  
 խանութիւն , Հալածական 'ի Թամթարս գե-  
 ղակուք եղի : Ա ան զի Խոսրով Պիեր-  
 վիդ , որդի Արմզդի անկեալ առ Կայսրն  
 Աօրիկ , վերագառնայ զօրոք Հռովմաց-  
 եցւոց և Պարսից , զԱ ահրամ 'ի Թա-  
 մթարս Հալածէ , ուր կարձին զեղօք կեանք  
 նորա , և ինքն ունի զաթու Հօր իւրոյ  
 յամի Տեառն 591 : Աս Հաւատարմու-  
 թեամբ մեծաւ ելից զուխտ գաշենն իւրոյ  
 ընդ Կայսեր , զոր 'ի Հայրագիր ընկալեալ  
 էր իւր , զԵտարս և զայլ ամուրս սահմա-  
 նագլուին յանձն արար նմա , տռատու-  
 թեամբ վարձս Հասոյց՝ որոց թիկն արար-

առյ եղեալ էին իւր , և մշտեցնսուոր սի-  
 րով կապեցաւ ընդ Հոյրագրին իւրում ,  
 Խըրե սպանաւ Արօրիկ , առ խելոյն 'ի զէն  
 վառեցաւ առ 'ի խնդիր վթէժու արեան նորա ,  
 զԱմբառու կոմ զԱրդին , զՏիղըանա-  
 կերտ և զԵրիսիտ մի զէնի միոյ եառ և  
 քանդեաց : Եւ զյաղթութիւն Երուսա-  
 լէմի , զ' վաղուց սկսեալն 'ի 'Յուշերվա-  
 նայ , և զանկարծ 'ի վերայ յարձակելով . ուր  
 զգերապայծառ Եկեղեցին Հեղինեայ և  
 կոստանդիանոսի , Հրով յաճիւն դատեցաւ :  
 Օ մեծագանձ նու իրանի երից Հորիւր ա-  
 մաց , զՊատրիարքն Օ աքարիսա , և ըդ-  
 խաչն Փրկչական զերի վարեաց 'ի միում  
 աւուր սեղանակապառութեան իւրում . Ապան  
 և 'ի Քրիստոնեից ոգիս իրը ինն Հաղաք  
 վեցհարիւր Օ եղիսլոս Հարկատու կացոց ,  
 և զՊեղիւսին : զդուռն ըսվանելակ այնոր աշ-  
 խարհի առաթուր կոխեաց Հեծելոց իւրոց :  
 Ո նդ զանտղան վտակս 'Դելտայ և ընդ  
 ձորն 'Մեղսի ասպառակ սփուրաց ընդ Հու-  
 մօրէն Եթովլիս , և քաղաքին Աղեքանող-  
 րու թէտէտէ մարթ էր ալոշտպանէր զինքն  
 ծովային զօրութեամբ , այլ արքեռովիսկո-  
 պոս միանդամոյն և ըդեաշխ նարա իւր-

սեալ՝ ՚ի Ավալը կղղի թող զքաղաքն ըովան-  
դակ՝ ՚ի խնամն Պարսից՝ որք մանալ՝ ՚ի  
ներքս յեղծութիւն եղին զամենայն ինչ  
որ պատռական էր ՚ի նմի՛ն ։ Խանց անտի ՚ի  
թօքիալիս, և զհետ լեալ օրինակի յաղ-  
թողին ափեղերաց Աղեքսանդրի Մակե-  
դովեացւոյ, ճանապարհ արար յանապատա-  
կ իրեայ, ՚ի միւս կողմանէ երկրորդ ճա-  
կատ զօրաց նորա յառաջ խաղաց ընդ Եփ-  
բատ ՚ի Վ ոսփորոն Թագակիոյ, Քաղկե-  
դովին յանձնատոր եղեւ, և քաղաքի Կոս-  
տանդիայ զամս տասն զահի հարաւ յերե-  
սաց նորա, Հարեկցին նման ծովեղերեայք  
Պինդացւոց, և Անկիւրիա ըովանդակ:  
Եթէ լեալ էր Խոսքալու և ծովոյին զօ-  
րութիւն, Եւրոպա ողջոյն դիործ առնոյք  
ամբարհաւաճութեան մասց նորա, Որ այն-  
ինչ նախարարք նորա զայսպիսի մեծա-  
ման յաղթութիւն կատարէին ՚ի սահ-  
մանս Հռովմայեցւոց ակրութեան, մեղ-  
կանայր ինքնին ՚ի զբօսանս փափուկ հրձ-  
ուանաց : մինչեւ ժամ պատեհ տալ Հե-  
րակլեայ Կոյսեր դիմել յաշխարհն Պար-  
սից, և անրաւ աւերածս ածել ՚ի վերայ,  
և հալածական վարել զինքն առաջերու-  
մինչեւ ՚ի Պատասակերաւ անդք, ուր թէպէտե

զ թութիւն յաղթողին մասոյց նմա դպաշն  
 հաշտութեան և զուխոն խաղագութեան ,  
 այլ ամբարհուած գոռոզութիւն նորս  
 յանձն ոչ էառ : Հպատակք յետս կացին  
 'ի նմանէ , և որդի նորս Շիրուն կամՇե-  
 րոյ կաւատ , կալեալ զնա եղ ՚ի բանդի և  
 ապա սպան ես : Փասք Աստանեանց սասա-  
 նեցան ՚ի մահոն Խոսրովու , զի Շիրուն  
 յետ ութն ամսոց ՚ի կենացն զաւեցու , և  
 միահեծան այն թողաւորութիւն Պարսից  
 յութն մասունս պատառեցու : Մանուկ  
 ոնն Շիրունեայ , և երկու ՚ի զատերաց  
 Խոսրովու Փիրանդուխոս Խուրանի , և Ա-  
 զերման Արքասիս հետզետէ կալան զա-  
 թոռն Պարսից , ցամիսս վեշտառան . մինչեւ  
 ՚ի վերջոյ Յաղկերտ երրորդ որդի Շահըրի-  
 արայ սերունդ Խոսրովու համարեալ , որ  
 կեանս առանձնութեան վարեր ՚ի Ասահը-  
 քաղաքի Պարսոյ , սմբարձու յաթոռն  
 դատարկ , Պատերազմ Արքաբացւոց առ ժա-  
 մանակաւն Փիրանդ խոյ ոչ ինչ աւարտել  
 կարաց . բայց առ Յաղկերտաւն Երարդաւ  
 անեկաւ ՚ի մարտին զօրավար Պարսից , և  
 զօրք խոյս ետուն ՚ի Մագայաւն , որ է Տիդ-  
 բոն : Աւրանօր հրեշտակախօս եղել Օօրս  
 պետն Արքաբացւոց կամ ընդունիլ զդեն

Վահանակի , կամ Հարկել զՀարկն անհաւ-  
ւատից : Խոկ Հաղկերսո ոչ ընկալու , ոյլ  
ժողովեալ զորեար իբրև 100,000 զդիմի  
Հարաւ նորս , և կորոյս զամենեսին որպէս  
և զվառն Արաւոնեան 'ի Ապէսեայ : Փր-  
խեաւ առաջ 'ի Հարվան , և անափ 'ի Հռէ :  
Առաջ մի 'ի զօրացն Արարացւոց առե-  
րեաց զքաղաքն Ապէսեաիտ : Ուր մած բա-  
նակն նոցա յարձակեցաւ և աւերեաց զՏիզ-  
րոն , զԱհուազ . և 'ի Կուլա զատարեցաւ  
առ ժամանեակ մի :

**Յ**ԵՇԻԿԵՐՏ զօրաժողով լինի վերտափին 'ի  
Կորասանայ , 'ի Հռէայ , և 'ի Համագանայ .  
իբրև Հարիւր յիսուն Հազար արանց , և բանա-  
կի 'ի մլչ խորին խրամց 'Ահաւաւնդեանդաշ-  
տավոյցրի յանդ խման բանակին Արարացւոց :  
Համիսս երկու բոլանդակ՝ զօրէն զայլոց  
քաղցելոց յիբեարս Հոյին , և ոչ ոք 'ի  
կողմանցն Համարձակի նախազ ըստ Հանդի-  
սանալ : Բայց 'ի վերջոյ խոստումն պատ-  
կին մարտիրաց , վայելու զ թրկանք ա-  
շագեղ Հուրեացն Ազինայ , վիճակելոցն  
առերմ եօթանց առ մի նահատակ , ամենու-  
Համ քաղցրութիւնք պատկոց . ուկերաժակ  
զինին , և ջուր Օ ամլոմայ , շարժեցին զե-

սահման նորահաւատ Արարացւց 'ի դործ մա-  
 շացու : Ուր 'ի Խմբիլ ճակատուն երեսուն  
 Հազարք 'ի Պարսից անկան սրալ , և ութաւն  
 Հազարք ջրամցն Հեղձան 'ի Խոխոմն խրա-  
 մոց : Անկատ Խրան ընդ տէրոյ թեամբ Պահ-  
 պետաց , Յաղիերոյ 'ի Սագոստան գնաց  
 փախստեայ , և անտի 'ի Խորասան , և 'ի  
 Վէրովէ . ուր 'ի դիւզականէ ուրուք , առ-  
 որ և ասրասան կոյր , 'ի կենացն դրաւե-  
 ցաւ նենգութեամբ : Փիրուղ Յաղիերոտի  
 որդի կարդեցաւ . **Օօրավար Արքային**  
**Ճենաց** , և ընդ դաղթականայն Պարսից  
 Հաստատուն պահեաց իւր օրէնս մողու-  
 թեան : Խռոնն սորս զանուն թագաւորի  
 ընկալաւ : այլ յետ անօդուտ փորձառու-  
 թեանն յաշխարհին Պարսից , վերստին չո-  
 դու : 'ի **Ճենս** , և մոռաւ 'ի Խիդան : Ա-  
 րական սեռ Սասանեանց այսօրինակ վեր-  
 ջացաւ . խակ իդականն 'ի Հարճ և 'ի կո-  
 նայու մտեալ Արարաց , աղեռւացոյց զա-  
 րիւն դենապետաց նոցա : Եցրկու 'ի դստե-  
 րոց Յաղիերախ տուեալ 'ի կնութիւնն Հա-  
 սանայ Ալոյ , և Վահանախ որդւոյ Ա-  
 րութեքիրայ Ճենան խծից այնացիկ սերունդ  
 արքունի : Եղիդ սերեցաւ յարենի : Խոռ-  
 ովլու Արքայի Պարսից , խակ այլք՝ յայլոց

քաջարոնց . որպէս 'ի Ալյուերոցի Հռով-  
մայ 'ի Խաղանից Ուաթորաց , և 'ի մերոցն  
Խշանազանց :

**Ճ**ամար է մեղ Շախքան զձեռո՞ն մլսել 'ի  
պատմութիւն Արհմետական Հարստու-  
թեանց՝ որք 'ի Աստուեանց և այսր մի  
զմիով բռնացեալ տիրեցին , և տիրեն աշ-  
խարհաց բաղմաց՝ Հար և անցիկ ծանօթու-  
թեամբ բացատրել ընթերցասիրաց՝ զայլ և  
այլ առմունս Հեղինակաց . և զանուաց  
անուացնց սկայից տարբերութիւնն : Ուե-  
պէտե ճանտապահորդի վիճակեալ բաղտի՝  
քան պատմագրի , ծայրաբաղ Հաւաքեցաք  
զոր միանգամ Հաւաքեցաքի՝ իբրև զմանն  
ամբով ջարար և զարդ ընդարձակ (Օրողբու-  
թեանս մերոյ զաշխարհէն Պարսից , սակայն  
դեռևս զուզնաքէիւքս այսոքիմբք Հա-  
մարձակեալ՝ պատճառս տամք իմաստոց  
բաւագունիցի ձեռնարկութեան :

**Ա**րդ Աւումարս , որ ըստ զբաց Գարիս-  
տանի երեխ յեալ տռաջին 'ի Ծագաւորս  
Պարսից . և 'ի յեզուն Ասհակըիս՝ ցուցա-  
նէ " Արմին Հովեզէն . " ուստի և մա-  
կանանս ստանայ Գիլշահ կամ Ծագաւոր  
երերի՝ 'ի Օ բաղեշտական Արօնից Հետե-

ւողաց՝ համարի Առաջին արարտծոց : Խոկ  
 'ի Աշահմետականաց անոտի (որք զհետ գը-  
 նան Հրեական ժամանակադրութեան՝ զար-  
 մեալ ասի 'ի Եսոյաց և առաջին թագաւոր  
 Պարսից : ) Բայց այնպի, որպէս աշխարհ  
 ամենայն, նոյն և Խրան առաթուր հարաւ  
 'ի խուժակուժ Արարաց, որք ոչ ինչ գիրս  
 քան զի ուրան ընդունելին, յապականու-  
 թիւն եղծութեան զնացին ամենայն յիշա-  
 տակագրութիւնք նախնեաց նոցա : Որոց և  
 տառաւածային Գիր վիրյէ մատենագրեալս  
 և եղեալս 'ի գիւանին արքունեաց : Օկնի  
 400 ամաց Հիջրայի, իշխան ուն 'ի Ար-  
 մանեան տանէ, որ 'ի Աշահմամայ զ ուրինայ  
 ողարծէր ունիլ զսերունդ, մանրակրկիս  
 խուզարկութեամբ որոնեաց 'ի Հետութիւնս  
 աշխարհին, և Հաւաքեալ նշխարս յիշա-  
 տակագրութեանց թագաւորացն առաջնոց :  
 Ճշարեալս թագստեամբ 'ի մոզուցն պարա-  
 կադենից, (որ ցարդ Կարբիք անուանին, )  
 ևս ցքերթողն Կարքիքե, զի յեղուցու զա-  
 մենայն 'ի գիւցազնականն իւր, 'ի Աւու-  
 մարսայ մինչե ցՅաղկերտ վերջին, Բայց  
 Կարքիքեայ զհազար և եթ աւարտեալ  
 տանս Հրաշակերտին՝ Հասանի վախճանին  
 կենաց : ԱՅԼ երանի՛ Աշխարհին՝ ուր Կամ

Քիքեայ յաջորդէ Պիրդովսի ոմն , և Մահամուգ ՚ ի իղնաւի . որ առեալ զատաղձ և զեխւթս շաղաղեալս 'ի նախորդէն՝ հրաշակերտ յօրինեաց յայն շինութիւն զարմանազան , որ առաւելք քան զամբարտակն Նոկայից 'ի Բարելըն տեսելով մշտեղենաւորեաց առ յասրայ զփառո հնութեանց Պարսկաստանի . անուանեալ նոցա Շահնամա , կամ Պիրք Խագաւորաց :

Շահնամա յառաջ գալով յայսպիսի սեւթերթեալ սկերճութեանց ծծեաց յինքն զիմաստ նշխարացն հնութեանց . ուստի և անսլիտանացեալ նոցա յայնմհետէ կամ կորեան անհոգութեամբ , և կամ եթէ սկահեալ ևս 'ի դիւանին արքունեաց ՚ ի իղնայ , ընդ վլովք կործանմանցն թաղեցան . յորժամ Ազգուանք 'ի ՚ ուրայ գրոհ ետուն անողանօր :

• Բերթողն իրաւամբ սկարծի անարատ զրել զՊարսից լեզուն 'ի նորամոյժ բառիցն Արաբոցւոց , որով զարդիս շփոթեն մօլոյք նոցա . և զատուգութիւն առմանցն 'ի նշխարաց անտի հնութեանց յայտ առնեն բազմութիւնք Պալհաւիկ բառից եւրոց , որ անհասկանալի ընծային արդի զբագիտաց Ազգին եթէ չիցէ բառարանն առ ընթեր :

Առեր և Յունաց պատմաբանք ո՞չ ըզ-  
 Առվալետականն , և ո՞չ Փիշդարկեանի իշտակենն  
 Հարստութիւնն : Առ Ֆրդովսայ Աշյումար-  
 սեանն թագաւորութեամբ զաշխարհն քաղաքա-  
 կանացեալ տեսանեմք : Առ Հուշանկաւ կրօնն  
 սրայծառացեալ և զկրակ գտեալ և սկաշաեալ :  
 Առ որդւով նորա իջահամուրաւ սկառե-  
 րագմ մեծ ընդ դիւաց կամ մողուց : Առ  
 Պ մշկաւ եղբօրորդւովն Թահամուրաց՝  
 մեծ փոփոխութիւնն եղեւ աշխարհին , Ազգն 'ի  
 չորեակ կարգս բաժանեցաւ , (թէսպէտե Ֆա-  
 նի Արահարագոյ ընծայէ զայս . ) 'ի Քահու-  
 զեան , Քահանայութիւնն . ի Եսուարեան , Օ ին  
 որութիւնն . ի Եսուդի մշակութիւնն . և յԱ-  
 նախօշի . Արուեստաւորութիւնն , Կամ ըստ  
 այլոց յԱսութիան . Արիթիշգարան . Վա-  
 տէրջուշան . և Հօտոխշան : Խոկ ըստ այլոց  
 ( Առւդուզի , Եսուիրական . զի 'ի լերինս և  
 յանապատս բնակելով ալօթից սրաբասլէին :  
 Եսուարի , զի 'ի զինւորութիւնն կարգեցան .  
 Եսասուդի , զի զերկիր մշակեցին . և Անախօշի ,  
 զի յարուեասս սկարապէին : Աա շինեաց  
 քաղաքս բազումս , եղիս զէնս , կառոյց նա-  
 ւըս , յորդորեաց զժողովուրդն 'ի գործ հերկոց  
 և հեծեց . նորոգեաց զտօմարն , և ուսոյց մարդ-  
 կան զդիսութիւնն աստեղաց : Աա նախ ըստ-

եղծ զդ ինի , անկեաց զշերամ և եղ իտ զնուա-  
 գահարութիւն : Օ ինքն Աստուած քարո-  
 վեաց , գրօշեաց արձանու անձին իւրոյ , և մա-  
 հու սպառնացաւ . որոց ոչ անկեալ երկրադագա-  
 նիցեննոցա : Այս ամբարշտութիւն սպատճառ  
 եղեւ կործ սնման անձին և աշխարհին . դի Օ ու-  
 հակ ոմն խուժ արշաւեաց յաշխարհն Պար-  
 սից և եղծ : Այս Օ ոհակ սերաւնդ էր 'ի  
 Շեղասայ , որ իշխեաց Ասորեստանի զՀաղար  
 ամ : ( Արդեօք Բենհաղաղ սուրբ Գրոց , որ  
 ըստ Նրեկից և բարբարոսաց զանձն աստուած  
 քարովեաց . և եկեալ տիրեաց Պարսից  
 զամս երկերիւր : ) Արդ եթե թաղաւորու-  
 թիւն Օ ոհակայ 'ի Պարս առցուք փոխանակ  
 ժամանակին իշխելոյ Ասորոց 'ի վերայ Պար-  
 սից . ուրեմն Պարերդուն նոցա Համարի լեալ  
 Ա արբակես Խորենացւոյն : Զիք ինչ ոյն-  
 քան երեւելի առ պատմաբանու Հնութեանց  
 Պարսից , բան զապատամբութիւն Կաւանայ  
 դարբնի . և Հաստատութիւն Պարերդունի յու-  
 թոռն նախնեաց : Պատեց նորա ընդելու-  
 զեալ ակամըք պատուականոք եկաց մնաց  
 վառ աղջին , մինչև տնկաւ 'ի ձեռս Ամի-  
 րասպետին ( Օմարայ :

**Յաւուրս որդւոց Պարերդունի Աելմայ ,**

թուրայ, և Խրիջայ տկարացաւ տէրութիւնն  
և Ալիւթքն յարձակեցան, Օ ի Ասրաւիազ  
կալաւ զաշխարհն զամն 42, զոր հալածեաց  
Ռաստամ իշխան Ասգաստանի կամ "Ախմ-  
բուզայ, Յետ մահուն Վանդուչարայ կամ  
Վանդանեայ, մինչեւ 'ի թագաւորութիւնն  
Կէյ Քօբազայ կամ Պ. իովիկայ ոչ ոք 'ի վերա-  
կացուաց աշխարհին ժառանգեաց զթագ և  
զանուն թագաւորի, այլ նահապետարվա-  
րէին զտանուատէրութիւնն,

Երսդոսոս զըէ, [թէ Պ. իովիկ ընդքեցաւ  
'ի թագաւոր, Օ ի ժողով աւագանեոյ ա-  
րարեալ ասէ "Այս վիճակ անտանելի է մեզ,  
ընդքեցուք զոք 'ի թագաւոր և կալցուք  
զկարգ ուղիղ կառավարութեան աշխարհի,  
և կացցուք իւրաքանչիւրոք յիւրում բար-  
ձու ասլահով առանց երկիւղի և վտանգի  
նեղութեան, "Ուստի և ինքնին ընդքեալ  
ի թագաւոր կառոյց զարքունիո իւր, և շքե-  
ղութեամբ ահաւոր բազմաց եղեւ, Խոկ Ֆիր-  
դովսի յամբառնալ իւրում զիկէյ Քօբաթ,  
ասէ, [թէ այլ ոմն իշխան Ասգաստանի, որ զօ-  
բսվարն էր Պիարսից և Հոյրն Աստամայ  
եկաց 'ի ժողովս աւագանեոյ և սասց . " Քաջ  
Նիզակակիցը ուսեալ 'ի փորձոց աշխարհի

Ժողովեցի զինե զդօրո զայս մեծ , և ջաւ-  
նացայ ահաւորո առնել զսասա . այլ սիրոք  
ամենեցուն լքան , զի չէր իշխան՝ որ պահէր  
զմիաբանութիւննոցա : Խրաւունք ազգի ա-  
ռանց ուղղչի կան , զօրք առանց զօրագլխի  
Ճակատին 'ի պատերազմ՝ ով ճըքան դառն  
էր մեզ յորժամ Օ ու ընոյր զոթոռն նախնի  
քաջարանց մերոց : Ծնհասլա ընտրեցուք զոք  
յարենէ նոցա 'ի թաղաւոր մեզ . զի պա-  
հեցէ զկարդ , Տէրութիւն անդլուս ոչ կայ ,  
Մողք խորհին արժանի բարձու պաշտու .  
մանս այսորիմ՝ զոք 'ի սերնդոց անսի Փարե-  
զունի , զայր ընտիր մեծահոգութեամբ իւ-  
րով , և զարդարակորով : " Եւ յետ այնք  
Աէրքոբաղ թագաւորեաց :

Տէս որքան զուղ աճայնին Արեմահան և  
Արեհելեսն պատմիչք : Անուանն տարբերու-  
թիւն ոչ ինչ է . զի յամենայն աղինս և 'ի  
սուրբ Գիրս իսկ միոց անհատի կամ անուան  
փոփոխութիւն , և կամ բազում անուանք  
ընծային :

Ասի ևս թէ Արփաքսադ 'ի զիքս Քու-  
ղիդոյ իցէ Գիրպի . զի նա շինեաց զքա-  
դաքն Եկրագան կամ Համատան , 'իստու-  
գաբանութիւն անուանդ Հոյելով արդարե  
Արփաքսադ է Գիրպի . զի Արփա կամ

Արփրա է Փրաւորտես , և ՚Բատդ , կամ  
՚Օտդ , ծնուղ . որ է ասել Արփաղադ կամ  
Փրաւորտեայ ծնունդ : Ֆրդովսի կոչէ ըղ-  
Այ ՚Բորադ զարմ Ֆրէյդունի . որ ՚ի Պար-  
հաւիկն գրի՝ Փրիգուն , իսկ ՚ի ՚Դիբին՝  
Աֆրիդուն . Ուստի Այ ՚Բորադն՝ Արփաք  
սադ գրոցն Յօւղիդաց լինիւն Մուջմառւ թու-  
արիդ կոչէ զեա Արշ . և Կակսիաս՝ Արտե-  
կէս . կամ Արտաշէս , որ մի և ՚նոյն է :

Հերազոտոս յաջորդ ՚Դիովիսյ զնէ ըղ-  
Փրուարտէս , որ յաղթեաց Պարսից : Ֆր-  
դովսի ոչ յիշէ զստ , այլ ՚Դիովիսյ ըն-  
ծայէ թագաւորել դդար մի : Ասկայն  
Մուջմառւ թուարիդ յիշէ զԵրկրորդն  
Փրուարտէս , յասելն . “ Պատմաբանք  
տիրաբար կացուցանեն զԱյ ՚Բաւուղ որ-  
դի Արփայ , և թոռն Այ ՚Բորադոյ , բայց  
ինձ երեխ որդի զոլ վերջնոյն : ” Իսկ  
Միքսունդ տու , ոմանք ՚ի պատմչաց ասա-  
ցին Այ ՚Բորադոյ թոռն զոլ Այ քաւուղայ ,  
և ոչ թէ որդի : Եւ այս յայտնի անտուստ  
երեխ , զի զոր ընթեռնումք առ Ֆրդովսի  
յաղագս Այ ՚Բաւուղայ վերաբերին առ  
Արփաքսար և Աշդահակ միանդամայն :

Հերողոտոս զԱմաքսարայ դրէ թէ մը-  
ղեալ և Լիդեացւոց ընդարձակեաց զսահ-

ման իշխանութեան իւրոյ լնոդ արեւ-  
մուտոս մինչև զԱլիս գետ, որ զայ 'ի լե-  
ռանցին Հայոց : Ուէ առ սովորին պատերազ-  
մուտ՝ Աքեզական քոլորովիմբ խաւարեցաւ,  
ըստ գուշակութեան Ուաղէսի Մելիտաց-  
ւոց : Ասկ յարձակեցաւ 'ի 'Անուէ վրեժ-  
ինդիր սպանութեան Հօր իւրոյ . ոյլ հար-  
կեցաւ դառնալ անտի և փրկել զաշխարհ  
իւր յերեսաց արշաւանացն Ակիւթացւոց :  
Օ Աշտահակայ ոչ ինչ զրեն պատմիչք  
Քունաց, միայն թէ 'ի կնութիւն է առ իւր  
զԱրտնիշ կամ զԱնոյշ զդուսար Աքիւթայ  
Աքքայի Լիովիացւոց . բայց Խորհնացին  
մեր ճոխարար ես, տես անդ : Ուէ ալէ տե-  
ֆյորդովսի առասպիշապատում լինի աստա-  
նօր, սակայն և յիշատակէ նա զյարձակումն  
կէյ Վահեուզայ 'ի Մազանգարան, ուր 'ի  
պատերազմի ուրեք զօրք նորա կարսն՝ առէ,  
կուրութեամբ կամ խաւարաւ . որ յառա-  
ջազոյն զուշակեալ էր 'ի մոգէ ումն մնէ :  
Տարտծեաց առէ զտէրութիւն յարեմուտոս,  
յարձակեցաւ 'ի Համաւեր . ( որ նշա-  
նակէ զզնալ նորա 'ի վերայ 'Անուէի . )  
բայց գարձաւ առէ՝ զդէմոիլ զօրայն Ակիւ-  
թացւոց կամ Ուուրանայ, Խոկ առնուլ 'ի  
կնութիւն Աշդահակայ զդուսար Աքիւթայ,

ակնարկէ Յիրդովսեայ կեցոցոցանել նմա  
զգուստը արքային Հանիւարայ : Խորենա-  
ցին զանուն Աշղահակայ 'ի վիշտալ թարդ-  
մանէ , և Օ անպավիստայն զիիշտաղն անուն  
ոնէ Հարստութեան , յորմէ Աշղահակին  
զարմեցաւ :

Խոի յաղագս Ախւրոսի բազմապիսի են ա-  
ռածքնեւ : Ասի թէ Ասմբիւսէս զգուստը Աշ-  
ղահակայ 'ի կնութիւնն էառ . այլ Աշղահակ  
երադ տեսեալ զարհութեցաւ , և յանձն տ-  
քար զԱխւրոս Հարբակայ՝ դիմոցի : Հաւա-  
տացաւ Հովուի . և յետ ժամանակաց 'ի յայտ  
եկեալ՝ չոքաւ 'ի Պարս . Հարբակիս դաւ գոր-  
ծեաց ընկենուլ զարքայ , և զթոռննորա զԱխւ-  
րոս կացոցցանել փոխանակ նորա , Արստամ-  
բեցոյց և պաշարեաց զԵկրատանս , Օ օրսպը-  
լուիս կարդեցաւ Հարբակիս , և յանկեալ  
'ի կողմն Ախւրոսի , յաղթեաց և տիրեաց  
Մարտց իշխանութեան :

Կտեսիս զԱշղահակ Ասպարդան կոչէ . և  
զԱխւրոս ոչ թոռն՝ այլ վեսայ կարդայ նորա ,  
տոեալ զԱմիւդիս 'ի կնութիւնն , յետ ըե-  
կենլոյ զեա յաթոռոյն Մարտց : Ասպա տուտ-  
քեն զներքենի մի 'ի Ատրկանիոյածել զԱշ-  
ղահակ 'ի Պարս , այլ յանցանել նորա ընդ աշ-  
խարհն՝ յանտառի ուրեք խորամանեկութեամբ

ներքեւոյն սովամնահ կորնչի Ամարն,

Օ եւնոնին զԱխուրոս որդի տոէ Կամբիւ-  
սեայ Պարսկի . որ զԱմանգանէ զդուսոր  
Աշգահակայ 'ի կնութիւն տու . յորմէ ծնեալ  
Ախուրոսի զօրու Պարսկց յօպնութիւն գոյ  
Ախուաքսոյ Երկրորդի քեռւոյ իւրոյ ընդդէմ  
արքային Ասորեստանեայց + Գառցէ . բայց  
Առորք Գարք զնեն զԱխուրոս յաջորդ Գառ-  
քեհի Ամարի , (Աշգահակին Համարեալ կամ  
Ախուաքս Երկրորդ , ) որումն տան զկործանու-  
մըն Բարելոնի , և զարձակումն Հրեից : Ամար-  
գարէն Իշանիիէլ զ ու շակեսց Բաղտասարոյ  
որդւոյ Աարուգոնստարոյ զայս յաջողուած  
Ախուրոսի . և ննքնին եկաց նախարար մեծ-  
տանն Գարեհի Ամարի և Ախուրոսի միանդա-  
մայն . որում ազդ իւր երախտագէտք Հան-  
դիսացան . գարձիւ զերութեան և շինութ  
տաճարին , Աէյ Խոսրով Արեւելեայց՝ բազ-  
մօք Համաճայնի զբուածոցն Հերոդոտոսի .  
զի տսեն Ախովուշ որդի էր Աէյ Քաւուզոյ  
որ մնաւ ձեռամբ քաջն Ասոտամնոյ . և 'ի նեն-  
զութենէ աւադանուոյ պարտաւորեցաւ խցա-  
ռալ առ արքայն Քոշանաց , Ասրավիսալ տու  
'ի կնութիւն զժառութեամբ նախանձողոց ըզ  
զուառընորս , և ստանկեալ 'ի նմանէ մեռաւ .  
Ախովուշն աստանօր զԱմբիւսէս նշանակէ

ՊԱՌԱՋԻՆ , որ որդի էր Առատամայ , որոյ  
 ահճնեւ ծնունդ զուգաձայն գնան անցից Կամ-  
 քիւսեայ որդւոյ Աքիմինեայ . զոր Օ տիւ  
 խմանամ զոլ : Արկին առեալ զԱրմութղ ( որ  
 ըստ Հունաց զԱրծուին նշանակէ . ) այլ ըստ  
 ստուգաբանութեան Պարսիկ բարդութեան  
 Աի , երեսուն . և Առութղ , Հաւ . Երեսնա-  
 չաւիկ : Բայց ինձ յարմար թուի թարգմանել  
 ի Աի , Խնքն . և 'ի Առութղ , ՀԱՅ բառից . և  
 մեկնել՝ ինքնառհաւ , այսինքն Հաւ , որ ինք-  
 նին ծնանի և մեռնինի , և յարմարել զայն  
 Արմաւն կամ 'ի Փիւնիկ Հաւ : Յառաջեալ  
 ՂԵՇ Խոսրով , զոր երկնեաց Ասրաւիապ  
 սպանանել . զի մի զետ վրեժինդ իր արեան  
 Հօրն սնուսցէ 'ի տան իւրում , Փիրան Ա  
 սա ասլրեցոյց զմանուկին 'ի մահուանէ . յանձն  
 արար 'ի խնամն Հովուի ուրուք , և զար-  
 դացոյց իմաստութեամբ : Խռաղիկ եղեալ  
 Ասրաւիապայ ամենայն անցից թուինն իւ-  
 րոյ՝ ինդրեաց զկեանս նորա . և 'նոս որսէս  
 իսելացինդ մոլեալ սալրեցաւ , և փոխեաւ  
 առ Հաւ իւր ԱՇ , Բաւուզ , և 'ի կենզանու-  
 թեան նորա ամբարձաւ յամուն Պարսից :  
 Հարձակեցաւ 'ի վերայ Հաւուն իւրոյ 'ի  
 կողմանէ : մօրն . որոյ զօրոցն սպարա-  
 պեակը Փիրան Ա խա փրկիչ իւր : Որ 'ի

կողմն դառնալով Աէ, իւսորովու կալաւ  
 ԴԱսրապիտակ և սպան . աղա Հրաժարեալ  
 յաշխարհէ յոնապատ առանձնացաւ, և կա-  
 լեալ զիս միրկաց բարձին 'ի միջոյ : Ֆր-  
 գովսի անտեղեակ աշխարհագրութեան՝ ոչինչ  
 այլ երկիր գիտաց, քան զիրան իւր և  
 զիթուրան, ուստի զանց արարեալ դիմագա-  
 ւորութեամբն Բարելովսի, Մարաց, Հայ-  
 ոց և Եղի իսլամցոց, 'ի Ակիւթուերև ացուցանէ  
 զհանդէս նախնի մեծափառութեան Աղգին,  
 Խակ ըստ Հերոդոտոսի . թուան ծնանի  
 արքայի . ուստի կասկած կրելով խորհի սպա-  
 նանեւ զմանուկն, այլ ասպրեալ 'ի դահճէ  
 զարգանաց, յերեան գայ արքայի, շնորհ  
 ընդունի վերստին զկեանս իւր, և յետոյ սպա-  
 ռերազմի ընդ հաւուն, Օ զօրավարն (Հար-  
 բակոս՝ իմա դու զիմիրանիլիսա, յիւր կողմն  
 յանկուցանէ, յաղթէ արքային, և տիրէ  
 աշխարհին : Եւ թէ սկէտ Ֆրգովսի տայ նմա  
 սպանանեւ զհաւ իւր 'ի զրէժ հօրն արեան,  
 բայց այս յաւեկտ Պարսիկ արդարութեան  
 և առ տեսին սովորութեան է պարագայ :

Մաքուշ զոֆտամմրդ փուրի Բաւուղբան,  
 • Բի դուշմանքաւնի Առատամութեան թառղբաւ

Մէ սպաներ սաացի քեզ՝ զորդի մեծին գաւուզայ  
 Զի ու կարես՝ կալ միմիմուց Առաւամայ և թառղպայ :

Ամսոս նշանակէ զարեգակն 'ի Պարսից  
 բարբառ . Խօսու Արեգակն 'ի Պալհաւիկն .  
 ըստ Պաղմիրոսի առ Խորաբոնի ասի թէ Կիւ-  
 րոս յառաջ քան զթադաւորելն՝ կոչեր Ագ-  
 րադաս . և Պաղոմիրոս ասէ թէ Կուր զետ Հայ-  
 ոց որ լնոդ Արաստան վազէ և խառնի յԵ-  
 րասախ՝ յառաջադոյն Ագրադատ լսէր . որ ըդ-  
 խուրդասն նշանակէ , այսինքն տուրք Արե-  
 գական : Որ և անուն ինն է հրեշտակի նախնի  
 Պարսից կրօնից , զոր յառաջ քերէ և Օ բա-  
 դեշտ 'ի Օ անդաւ խստայն : Օ նոյննշանակէ և  
 Միհրդադդ անուն , և Խօսդադատ և այլն :  
 Ա անն Ա ոհրասպայ դըէ Ֆրդովսի , թէ աւա-  
 գանի Պարսից չէին հաճ լնոդնա , այլ նո խո-  
 հականու թէ ամբնուածերալ զամնեսին հնա-  
 զանդեաց իւրեւ թագտւորեաց քանի մի հարիւ-  
 րըս ամաց , և ասրա Գշտասպայ կամ Ա շտասպայ  
 որդւոյիւրում յանձնարարեալ զպայաղատու-  
 թիւն՝ անցանէ 'ի Բահլ , ուր լնոդ համո-  
 խոհիցն Օ բադեշտի մեռանի յաւուրս կո-  
 տորածին : Յագդաւորութիւնն Ա ոհրասպայ  
 Ֆրդովայ յիւրում պարունակէ զմիջոց ժա-  
 մանակին Ասմբիսեայ , յարձակումն յԵղիսդ-  
 տոս . և եղանակ մահու նորա՝ յերես ածէ  
 զկոտորած մոզոյն : որ յաւուրս սորա  
 Վրդովեցոյց դըէ թէ զաշխարհ համօրէնտ :

Արդի կ սհրասալայ ամեն զԳաշտասպ՝ և եթէ  
 ոս իցէ Պարեհն անուբանեալ Աշտասպեան  
 որպէս և Համարին իսկ . ուրեմն զըռութիւնք  
 Հերոդոտոսի բաղմօք Համաձայնին աւան-  
 դից Պարսից , Արեւինքանք տալով սմաղթա-  
 գաւորութիւն 60 ամաց՝ իմի ձուլին զարարս  
 Պարեհն Աշտասպայ և Քսերքսեսի որդւոյ  
 նորա : Աւոտիե յարձակովն 'ի վերայ Հու-  
 նաստանի Համարի լեալ ականաւոր որդին  
 Աշտասպայ Ապանդիարն , որ միշտ առաջ-  
 նողեաց զօրաց Հօր իւրոյ . և 'ի մեջ մեծա-  
 բարութեանց իւրոց՝ յարձակեցաւ ըստ Ֆիր-  
 դովսի նաև 'ի Ախում , կամ մլքի մուղբար ,  
 այսինքն է յարեմուտո 'ի Փոքրն Ասիս :  
 Օ որմէ Պարսիկք առասպելս կցկցեն , և Հոյնք  
 զ չափազանցութիւն թուոյ զօրացն . բանդի  
 Աշտասպեայ թագաւորել տան ամս 56 ,  
 և Քսերքսեսի 21 . իսկ Պարսիկք Պաշտա-  
 սպայ երեք և եթ ամօք ասքրեր ընծայեն ,  
 Բայ Հունաց Արտաշէս Երկայնաձեան որ-  
 դի էր Քսերքսեայ , որ յետ մահու Հօրն  
 իւրոյ ամբարձաւ յաթոռ նորա : Պարսիկք  
 ամեն , թէ յետ մահուն Աշտասպայ ոչ յա-  
 ջորդեաց նմա օրդի նորին Ապանդիար . ոյլ  
 'ի Բահմանոյ' որ կըկին կըկը յինքեան զԱր-  
 դաշիրն Պարսպաստ , կամ Արտաշէս երկայ-

նամեռն , Ուստ Քունաց Վրաերքուն սպա-  
 նաւ . Արտաւանաց , և Արտաշէս սովբարձաւ .  
 Ուներ Արտաւան բաղզմ երկիրս ընդ-  
 իշխանութեամբ . և որդիք նորա քաջագոյնք  
 'ի մրցմունս պատերազմոց : Քորմէ կասկա-  
 ծեալ Եցրկայնուածեռանին կենախուղ լինիւ նման .  
 որդիք նորա 'ի պատերազմ խմբեցան . և բա-  
 զումբ 'ի քաջ արանց դի թաւալ անկան  
 յերկիր , այլ իշխանինելք իրացն յաջողեցան .  
 սորառումն ազգաստոհմին Արտաւանաց : Արդ-  
 առ գուն և զիշուաստամՊարսից պատմութեան ,  
 որ իշխաններ էր Վագաստանի , և մերձաւոր  
 արեան արքային Պարսից . որ այլ զօրաւոր  
 էր ոչ միայն մարմնոյ ուժով և մասց  
 կորովութեամբ՝ այլ և յոյժ ընդ արձակու-  
 թեամբ սահմանաց խրոց . որոյ որդիք էին  
 քաջ պատերազմողք և անուանիք 'ի ժամա-  
 նակին : Ոչոստամ զԱպանդիար կորոյս , այլ  
 սնոց զորդի նորա դԱրտաշէս . և ամբարձ յա-  
 թոռն Պարսից : Բայց Արտաշիսի նախան-  
 ձեալ արար Ոչոստամոյ՝ զի ոչ միայն սպան  
 դաւով , այլ և գատեաց զերկիրն սրով , և  
 երարձ զզարմ նորա : Ոտին Ապանդիար ընդ-  
 Վրաերսիսի նոյնանաց :

Արտաշէս ըստ արեելեցց էր այր բարի .  
 որ յաղթեաց Վագաստանի , և արշաւ եաց

դօրութեամբ յաշխարհն արևմտից : Խսկ ըստ  
 արևմտականացն պատուհասեաց նա զազգ  
 Արտաւանայ , և կալաւ դաշխարհ ժառան-  
 գութեանենոցա : Յարձակեցաւ ՚ի Բակտրիա,  
 և ազգի ազգի բարեկարդութեամբ պայծա-  
 ռացոյց զտերութիւն իւր , Պարսիկք տան  
 նմա 112 ամաց թագաւորութիւն , իսկ  
 Յնիք՝ քսուասուն և մի : Ամանք զստ  
 ասեն լեալ այր Եսթերայ . բայց ինձ յա-  
 ւէտ ևս հաւական թուի թոռն սորա Աքոս  
 կամ Արտաշէսն կոչեցեալ Աւշեղ , որ եւտ առ  
 զաստթիւն Նըրէից . կախեաց Նաման զվայտէ ,  
 ամբարձ զԱՌութքէ յաստիճան , և աի-  
 րեաց ՚ի Նեղկաց մինչեւ ցԵօթովլպիտ Հա-  
 րիւր և քսանքարաց : Բանզի Պարսից ան-  
 ժանօթք են անուանք և անցք Վաւերքսիսի  
 Երկրարդի և Անկդ խանոսի . որք միահաղոյն  
 թագաւորեցին զամիսս ու ընն , մինչեւ ցՆօմայի  
 որ եր դուստր Արտաշէսի , որ ՚ի Հօրէն յը-  
 զանալով զօրդին , առ ամօթոյն ոչ միայն  
 զՃնունդն ծածկեաց , այլ և Հրամայեաց  
 կորուսանել զկեանս մանեկանն : Բայց նորա  
 դարդացեալ ՚ի տիսն կոչեցաւ Պարապ կոմ  
 Պարա , և ծանօթս տուեալ մօրն՝ ընկալաւ  
 ՚ի նմանե զթագն Պարսից : ԱՌոք ընդոյա եր-  
 կուասցի , քանզի աղջմնէութիւն ՚ի Պարս-

կաստան օտար իմ չեր յայեժամ, մանա-  
 ւանդ թէ և առ յապայս : Յաղկերտ Ասա-  
 նեան առ Եղիշայի մերում, իբրև պատուի-  
 րան Օքտղեշտական սրբութեանց գնեւ :  
 Հարանց 'ի դատերաց մի ելանել . և որդւոց  
 ելանել յանկողինո հարց և հաւուց խոկ իւ-  
 րեանց, Փարիզատ Յունաց, որ զծեունդ  
 'ի Պարիկայն յայտ առնէ, և' քոյր և' կին  
 Պարեհի 'Եսթանի . զոյդ վարեր ղիշիսո-  
 նութիւն ընդ առն՝ յայտ աճէ մեզ զշոմայի :  
 Յաղագս Պարեհի Պարսիկը և Յոյնք հա-  
 մաձայնին, թէ լեւալ իցէ 'ի խառնակ ալծ-  
 մեւութեանց, քան զի և 'Եսթան' ըիջ է :  
 Բայց աստանօր թողուլ արժան է միանդա-  
 մայի զժամանակ Փարիզադայ . որ ոչ այլ  
 ինչ ցուցանէ 'եթէ ոչ զառասպել խառնա-  
 կութեան Արտաշիսի Աւշեղի ընդ Ատավսայ  
 դատեր իւրում, Պարսիկ Արտաշը տան  
 112 տարի, և մեր պատմաբանը Արտաշիսի,  
 Պարեհի, 'Եսթանի, և Արտաշիսի Աւշե-  
 ղի 'երեցունց միանդամայն՝ Հարիւր և վեց  
 տի : Եւ եթէ Աքոս լեւալ իցէ Պա-  
 րեհն Երկրորդ՝ չունիմ տարակըս : Խոկ  
 յաղագս Պարեհի Ասդամանտի Աղէքսանդ-  
 րեան յաղթութիւննք վկայեն : 'Խզրելոց առ-  
 ափ պարզ եւենի . զի պատմութիւնն Պարսից

'ի չորրեակ միջոցս տրոհի : ՀՅառասպելաւ  
բանականո՞ 'ի ԱՄահաբաղեանն և Փիշդաւ  
տեան Հարստութիւնն : 'ի Վ.երթողականն  
Կայանեանն Հարստութիւն : ՀՅանցայտա-  
կանո՞ ՃԱրշակունեացն կամ Վարժեականն  
պետութիւն , իսկ 'ի Բանականն Ասսաննեան :

**Օ**օրք Դանիալետաց յառաջ մշեցի՞ն  
զարշաւանս իւրեանց յիշվրատաց մինչեւ  
ցինդոս գետ , աւերելով զօրս առաջի դտու-  
նէ ի՞ն ամուրս , Հրաշալիս . և սուրբս , ԱԵԺ  
մասն յաղթելոց չկարտցեալ ժուժալ Հար-  
ռուածոցն և մահունց , ընկալան զհտատս  
կոտորչաց իւրեանց : Խսկ որոց ոչն կամեցան  
քակել զցանկ Հայրենի՝ ի՞նքնահալած մեկ-  
նեցան յաշխարհս հեռաւորս : Գաղթա-  
կանք յարևակեղ անապատիցն Աքարիոյ՝ ե-  
կի՞ն բնակեցան 'ի բարերելը մարմանդս Խո-  
րասանաց և Բալհայ : Աերունգք նոցա , թէ  
և կորուսի՞ն մինչցարդ դլեզու նախահարց  
իւրեանց , սակայն անխախտ արահեն զեռ  
զծէս և զարարս նոցա : Ոստիկանս կար-  
գետլ 'ի անդիս տեղիս , դարձուցի՞ն զՊարս-  
կասանս 'ի գաւառ ի՞նչ ի՞նքնակալութեան  
Ռենտետաց իւրեանց : Այսուհետեւ ոչ ի՞նչ  
այլ գործք արժանիք յիշտակաց լոի՞ն թէ

պործեցան 'ի Պարսկաստան՝ ընդ դարս երկուս , եթէ ոչ աստ և անդ ընդ աղօտ իմն ճգունքը ընտթեան և խանդքն աղտատութեան . որք երբեմն զսա , և երբեմն զնա յասլատամբութիւն յարուցին . թէ և իրօք ոչ ինչ կատարել ետուն :

**ՅԵՄԻ ՏԵԱՊՆ 877 . Խաղութ Դ իսայ որդի , 'ի խորին զբոյ անտի և 'ի խոնարհ անուոյ ըրտի հօր իւրում առ 'ի վեր կոյս հոլովետլ , ել 'ի պատիւ մարդուանութեան՝ հուղկահարութեամբ իւրով և աւերածութեամբ աշխարհին : Որ 'ի մահոն իւրում եթող գոզջիր զհամօրէն Պարսկաստան 'ի ժառանգութիւն եղբօր իւրում Ամիրայ : Այլ Խամայէլ Ասմանի թամաթար իշխան յայնկոյս Աբսոնի երկրին , սերունդ Ա տհրամայ Չուպինայ : այր արի յոյժ , առաստ , հոյրենասէր և արդար . 'ի պարտութիւն մատնետալ զնա՝ առաքէ տռ Պահնակեան 'ի Բաղդատ : Հայնմանէ ընդունիլ զպատիժ պատուհասին . առ որ և մղաւն չարչար ազստամբութեամբ իւրով :**

**ՅԵՆԿՄԱՆէ տանուտիրական Հարստութեանն Դ իսահանց ցԱՎահմուղ Խրան Դ իզնացի՝ Պարսկաստան 'ի Ասմանիս և 'ի Պա-**

բանեանս բաժանեալ եկաց : Ասմանեանք  
իշխեցին Խորասանոյ , Ասգաստանի , Բայհայ  
և յայնկոյս Ոքսոնի երկրին . զոր մերքն Քու-  
շան կոչեն . և մերթ մասինն Արարայ՝ անկախ  
՚ի Գենավետացն Արարացւոց : Խոկ Գիլա-  
նեանք՝ Պարսոց , Արմանայ , Խոռժաստանի ,  
Լարիստանի , և այլց : Որբ թէպէտե  
՚ի վերին երեսս ակն ածէին Գենավետաց ,  
այլ միշտ ինքնիշխանաբար վարէին 'ի պա-  
տերազմունս և 'ի Հաշոտթիւնս իւրեանց .  
ցկործանումն Բարդասոյ 'ի Տուղրիլոյ :

**Q**ԱՅՍՈՒ Ժամանակաւ Արուքտագին ,  
մի 'ի գլխաւոր սպայտղատաց Բուխարսյ նըժ-  
կահեալ զաշին Ասմանեանց՝ ամրանայ իւրովք  
հանգերձ 'ի Պիղնի , յաւան աննշան 'ի ժա-  
մանակին : 'ի մեռանիլ Խսաղայ որդւոյ  
սորս առ կինուանութեամբ սորուն , Արուկ-  
տագին , գերի ոմն Թօռորք ազդաւ , սա-  
լար թիկնասպահաց նորա . Հաւանութեամբ  
տւագանւոյն յաջորդէ նմին : Ծնդ խոհեմ  
կառավարութեամբ սորա աննշան աւանն  
Պիղնի ծայրացաւ երջանկութեամբ , և  
եղեւ արքայանիստ մայրաքաղաք Հարսաու-  
թեան Պիղնավեանց . որբ թէպէտե կար-  
ճագոյն ժամանակաւ վարեցին զմիահեծան

զայն իշխանութիւն , ոյլ ոչ ինչ պակաս  
 գտան փառօք քան զմոխ յինքնակլացն  
**Ասիայ :** Աս Հիմն զնէ Համբաւոյ իւրում  
 միելով զպատերազմն Հաւատոյ ընդդեմ Հնդ-  
 կացն կռապաշտից . որով և զպատգամ Վար-  
 դարեին կռատարէ , և զազդ իւր ճոխու-  
 թեամբ փարթամութեան լցուցանէ . Աւա-  
 տի՝ նախ 'ի վերայ յարձակեալ 'ի սրար-  
 տութիւն մատնէ զ. Պայպալ զիշխան Հի-  
 սիային Հնդկաստանի : առնու զ. Բարուլ .  
 և ասպատակ սփռէ յերկիր Փանջարայ , 'ի  
 Հինդ վտակեանն . վանդի Հինդ գետք մե-  
 ծամեծք ծածանին յերեսո նորա . Առւա-  
 լէջ , կամ Հինդուսո : Բիսա , կամ Հինդա-  
 սիս : Ուստի , կամ Հինդույովտ : Չունար ,  
 կամ Ակեսմատ . և Բհադր կամ Հինդասլիս .  
 ուր ոյժմ Աիկը տիրեն ազգ պատերազմազք :  
**Յերկրորդ** յարձակման իւրում յաղթեաց  
 միավետին Հնդկաստանեայց և զ. Պայ-  
 պալ Հար կատու կացոյց ինքեան : Այլ դեռ  
 ոչ մեկեալ անտուստ , և ահա ուխտա-  
 գրուժ Հնդկին կոտորեալ զիշխանս կար-  
 դեալս 'ի սմանէ : 'ի մարդպանութիւն երկրին ,  
 զիշխան ապստամբութեան բարձրացուցանէ .  
 և զօրաժողով լինի յամենայն կողմանց՝ զՀետ  
 եկելոցն պատու հասից՝ քաջ զդիմի հարկանել ,

 զնա, առաքեաց կալանաւոր ’ի Խորասան :  
 Օ որդի նորա տղայ ութեամեան՝ կացոյց փո-  
 խանակ նորա, անուանեալ Երբառ Երբառ :  
 յինքն առեալ զբնդհանուր կառավարու-  
 թիւն աշխարհին, Եւ վաղվազակի ձեռն ’ի  
 գործ դներ քինահան լինիլ զտերութինէ  
 Օսմանցւոց . յարձակելով նախ ’ի վերայ  
 Բաղդատայ, ուր ’ի պարտութիւն մտանեալ  
 յերեսաց նոցա՝ մազապուր անեկաւ ’ի սահ-  
 մանս Համազանոց : Եւ փոխանակ յանդի-  
 մանելոյ, կամ պատիժ պատուհասի ածելոյ  
 ’ի վերայ զօրաց իւրոց գասալեաց, սկսաւ  
 գովել զնոսա և պարզեօք և տրօք յինքն  
 յանեկուցանել զսիրաս նոցա : Երբեւ ոչ երեք  
 ամիսք, ահա վերստին խաղաց Ետքը ’ի  
 Բաղդատ, և ահեղ հարուածովք ահարեկ  
 արարեալ զրգեշխ նորա, դաշնակուռ եղե,  
 որպէս և հաճեցաւն : Հանց ապա յաղթու-  
 թեամբ մեծաւ ընդ գետն Երասխ, և զաշ-  
 խարհս տիրապետեալ ’ի Տաճկոց կորդեաց  
 զնոսա ’ի ձեռաց նոցա : Դաշն եղեալ ընդ

գըտնն՝ դարձաւ . և ահա մահ մանկանն Աք-  
բասայ մատոյց նիմա զգահն դատարկ : Ուս-  
տի ՚ի կատարել նորա աշխարհախումբ բազ-  
մութեամբ զհանդէս տարեմտին 1736 , ՚ի  
պաշտի անդ Ոռողանայ , ուր ներկայ գը-  
տաւ և մերս Աքբարահամ Կաթողիկոս երես-  
ելոք Հոյոց , ամենայն մածամեծք նորա ա-  
զաշեցին զնոս լիուլ զգահն դատարկ , զոր  
ոչ յանձն էտ , մինչեւ ոչ խոսացան նը-  
մա թողուլ զհերձուածն Շիոյից , և դառ-  
նալ յուղափառութիւն Ոռոննեաց : Ոռ-  
վին , ոչ եթէ փոյթ ինչ էր Կադրայ զհա-  
ւասոց ժողովրդեանն , այլ յաւէտ՝ զի բարձ-  
ցէ ՚ի նոցանէ զարմատացեալ նախապաշար-  
մունս նոցա առ Ոռվալիան Հարստութիւն .  
և ՚ի մի Հանդոյց Հաւասոցն կապանիցէ ըդ-  
Պարսիկ և զթաթար զօրս իւր : Փոխա-  
դարձ հաւանութեամբ լիկալոն Կադր և  
նախարարք իւր , զհրաւէրն շահարեր . և  
յետ ժամանակ ինչ յԱսպահան պատաղե-  
լց , և անագորոյն գժնդակութեամբ կեղե-  
քելց զկեանս Հասարակաց , մանաւանդ Աշ-  
զիս մերոց , և գերկուս ՚ի դլխաւորաց նոցա  
զիմիաղ Խօջայ Մինասեանց և զՅարու-  
թիւն Շահրիմանեանց կենդանւոյն այրելց՝  
բաղայս ՚ի վերայ զնելով որպէս թէ զը-

Ժ Ե :

նեալ իցեն զսար ինչ ձիոյ Հօսեյնի Ավք-  
 ւոյ , խաղաց ՚ի վերայ Բաղախարաց , որ  
 ցոյս վայր դրօշ ապստամբութեան ամբար-  
 ձեալ յանմատոյց ամուրս լերանց , ելու-  
 զակութեամբ և ասպատակութեամբ ապա-  
 կանէն զառ և վաճառ աշխարհնին : Ապաւ  
 զնահապետ աղդին զթաղի Խոան՝ և սպան ,  
 և զբազումն ՚ի նոյանէ խասնեալ ՚ի զօրս  
 իւր , խաղաց ՚ի վերայ Պ անդահարաց :  
 Ա ինչ սա ՚ի պաշարմանն պատաղէր Պ ան-  
 դահարաց , էրէց որդւոց նորա Ո հիգազուլի  
 ՚ի պարառութիւն մատնեալ զինքնակալն Բու-  
 խարաց , էառ զքաղաք նորա . և անցեալ  
 ընդ Աքսոն՝ խաղաց ՚ի վերայ Օղբէկ Յօւա-  
 թարաց : Խսկ Նադրայ զՊ անդահար և  
 զԲարուլ նուածեալ ընդ իւրով իշխա-  
 նութեամբ , խաղաց ՚ի վերայ Պ իլլի մոյ-  
 րաբաղաքի համօրէն Հնդկաստանեաց , յա-  
 մենայն յիշխանաց և ՚ի պետաց գաւառոց  
 ընդ որս և անցանէր , յուժի հպատակու-  
 թիւնս և պատարազս ընդունելով : Ա նդ ՚ի  
 դաշտին Կանալայ յաջմէ գետոյն Պ մնոյի  
 ընդ յառաջ ել նմա պատերազմաւ մեղկա-  
 սիրտ ինքնակալն Աղոլաց Ա ահումէդ Ը ահ  
 ՚ի սերնդոց Յօւամուրաց Լ անկի . ոյլ յետ  
 ժամս երկու և եթ կռուելոյ , և ՚ի զօրաց

գ.քսան հաղար կոստորելոյ և նոյնաչափ գերելոյ , եթող զկահ և կարասի բանակի և խուճապեաց 'ի փախուստ : Այլ յամեն ուստեք կուսէ անձարացեալ , դիմէ վերատին 'ի դութ յաղթողին , և ընդունի 'ի նմանէ զվերանորոգութիւն միահեծան տէրութեան , 'ի 1759 , մտանէ 'Ասդը յաղթանակաւ 'ի Գիշիւն , խստիւ ոլատուեր եղեալ 'ի վերայ զօրաց և զօրապետաց իւրոց մի զոքնեղել 'ի ընակչաց քաղաքին : Համբաւ իմն առւտ զմահուանէ 'Ասդը յարուցանէ ըդզօրս Հնդկաց զգիշերայն 'ի վերայ Պարսից , և անխնայ կոստորեցուցանէ զցան և զցիր եղեալս նոցա : Խնքնին յարուցեալ 'Ասդիր շիջուցանել զհրդեհն խռովութեան , Հրացանաւ ընդդէմ զինի 'ի նոցանէ , յայնմամ զայրացեալ յանհնարին սրամմութիւն բարկութեան , Հրամայէ իւրոց Հնձել 'ի կենաց զամենայն Հնդիկ , ութ Հաղարք 'ի կիտին անկանին : և մնացեալքն ահարե կեալ 'ի խորշ և յանկիւնս քաղաքին ծակամուտ ապրին : Այլ սրակէս եհարին , նոյնալէս և բըժկեաց 'Ասդը զսիրաս ժողովրդոց , զերկամիս մի բովանդակ զհանդէս Հարսանեաց որդւոյ իւրոց երկըրդէի ընդ դստերն Ամանմուդոյ կատարելով , և այնքան ի խոր գը

բոշմեաց յիշատակ երախտեաց իւրոց 'ի մի-  
 տըս 'նոցա , մինչ արտասուօք յուղարկել  
 զնոսա Հնդկաց 'ի դարձն առ Պիարակաս-  
 տան : Անցեալ ընդ Խնդոս , խաղացուցա-  
 նէ զգօրս իւր ընդ աւազուաս Անդայ , 'ի  
 վերայ ասլատամթ իշխանին Արեայ : յԵ-  
 ւար Հարկանէ զքաղաք նորա , և զնա ին-  
 քըն Հարկատու իւր կացուցեալ , անցանէ 'ի  
 Հերաթ , կատարէ անդ զհանդէս յաղթա-  
 նակի , անցանէ ընդ Աքսոն . 'ի Հնազան-  
 դութիւն նուաճէ իւր զինքնակալն Բուխա-  
 րայ , և զԱքսոն կացուցեալ սահմանադլուխ  
 ընդ իւր և ընդ 'նա , դարձուցանէ զզէնս  
 իւր ընդդէմ Խորիզմայ , սլարտէ ամենայն  
 զօրաց . ոորանանէ զարքայ , և զտէրութիւն  
 աշխարհին յանձն արեարալ եղբօր որդւոյ  
 թագաւորին Բուխարայ , դառնայ 'ի Խո-  
 րասան : Ուր 'ի Վաշադ , 'ի Նիստ իւրոյ իշ-  
 խանութեան մնայ զամփոս երիս , Ապա խա-  
 զայ 'ի Վաղանդարան նհանջել զարշաւանս  
 Եղկեաց յայն սահման , և ոյյր դարանա-  
 կալ շնեթարձակ եղեալ 'ի 'նա Հրացանաւ ,  
 վերաւորեաց զաջ նորա և սպան զձին , Կաս-  
 կած նորա զչարեացն՝ միտեցաւ 'ի Արիզա-  
 զուլիս յերիցագոյնն որդւոց իւրոց , և զըր-  
 կեաց զնա յաչաց : “ Չարիք քո ” , ասաց

Հայրն ասկերջանիկ , մղե՞ն զիս յոյս անկու-  
 սլար պատուհաս : “ Ո՞չ զիմ , հոյր . այլ  
 զաշո Պարսկաստանի կուրացուցեր . ” ասաց  
 ասարաբաղտ որդին . որ այնքան ճմշեաց ըզ-  
 իսիզ մոաց հայրենի . մինչ յօրէ անտի  
 յայնմանէ ոչ ինքնին զխել զերջանկու-  
 թիւն , և ոչ այլոց ներել 'ի նոյն : Զայս  
 վայր վարեր իբրև զթագաւոր , և այն զը-  
 թութեամբ և արդարութեամբ քան զբա-  
 զումս յիւրոց նախարդաց + բայց յայսմօրէ  
 'ի խռնարհ այնքան գժ'նզակութեամբ զըժ-  
 նէացան վարք նորա , տղետիւք որդւոյն  
 կուրացելոյ , մինչ հրէշ այլակերպարան տե-  
 սանել զնա աշխարհին Պարսից , 'ի մահ և  
 յապականութիւն իւր տռաքեալ յերկ-  
 նուստ , Աս նախ սրով կործանեաց զյիւ-  
 սուն յաւագ նախարարացն իւրոց , որոց ներ-  
 կայ գոլով կուրացուցման Ախողաղուլոյ ,  
 ոչ մասուցեն զանձինս իւրեանց 'ի փըր-  
 կանս աչաց այնորիկ , որ փառքն էր աշ-  
 խարհին Պարսից : Եւ որք զինի հետեւ-  
 ցան , զործք էին սանդարսմտական ըլու-  
 նաւորի , աղահ ուրուք զօշաքաղի , և որ-  
 զեսպան և յուսահատ թշուառի : Բանակ  
 և հար 'ի Առողան , և կուրացոյց զայսա-  
 սան , Ասաղաց 'ի Ասդաստան , և սպան զտ-

մենային Պարսիկ 'ի ղօրուն իւրում' Պաշառ  
բեաց զքաղաքս , և 'ի սուր սուսերի մա-  
շեաց զընակիչն 'ի նոօա, մինչեւ 'ի վերջոյ  
տաղտկացեալ իշխանոց նորա , և սոսյդ ես  
'ի վերայ հասեալ , թէ անուանք իւրեանց  
'ի համար մուծեալք էին ցուցակի մահա-  
պարտից՝ մանաւանդ զի հրամացեալ էր կոսո-  
րել զՊարսիկս 'ի ղօրուն իւրում' վասնորոյ  
և սպանու . 'ի նոցանէ առաջնորդութեամբ  
Աալէն բեղի , Հաղարապեաի թիկնասլոհ  
զօրաց , և Վահմագոյ Էմշարի . յամի 1747.  
'ի հասակի վաթսուն և մի ամաց , զկնի եր-  
կոսասան ամ թագաւորութեան իւրոյ :

Պատմի թէ յետ զառնալոյ Կաղըայ 'ի  
Հնդկաստան տշխարհէ , հրամայեաց Վիր-  
զայ Վէհգեայ ջանալ յեղուլ 'ի լեզու-  
Պարսից զՎետարան Տերան Հիսուսի :  
Եւ նա յահճնարար զայն երեելի Ա արդա-  
պետացն Հայոց և Հռովմացեցւոց 'ի նոր  
Պատմայ . որք ըստ տանելոյ ժամանակին  
կատարելու մասուցին նմա , և արժանացան  
պարզեաց բռնաւորին : Ը արժեաց սա և  
զՆըեայս և զՎահմատականս ըանալ ուր-  
ւոյն զգաղանիս հաւասաց իւրեանց . ոյլ ոչ  
սմին և ոչ նմին հաւանելով մտախորհ լին  
ներ սպականեալ և խանդարեալ երեակայ-

ութեամբ իւրով , զսղտոր ծնունդս մոաց  
իւրոց՝ դերագոյն կրօնից կացուցանել ա-  
մենոյն մարդկան , || Խաչատուր Ա արդաւ  
պետ յիշելով զանցս թարգմանութեան սուրբ  
գրոց , յաւելու թէ միքզայ Մէհղի ընդու-  
նելով զհաւաան . Քրիստոսի մկրտեցաւ 'ի  
Վէորդայ Առաջնորդէ , զանխլարար յաղ-  
դաց իւրոց :

**Ժաղովեալ Առագանոյն ,** որք սպանեն  
դէադիր միարան հաւանութեամբ կացու-  
ցանեն զեղբօր որդի նորա զԱլի վոխանակ  
նորա , || Ո նախ մունեւտիկ հանէ քարոզել  
թէ մահ Եադրայ իւրով ակնարկութեամբ  
եղեւ վասն ընդհանուր խաղաղութեան աշ-  
խարհին և անգորբութեան բնակչաց նու-  
րուն , զոր և անկեղծ մաօք հաւատոր-  
մոցուցանենի կամելով չնորհեաց նոցա զար-  
քունի հարկ տարւոյն այնորիկ : Ասլա ձեռ-  
նարկ գաղանային անդմութեամբ որտու-  
ուել բառնալ 'ի կենաց զկուրացեալն || Եի-  
զաղութի , և զերեքտասան ոյր յորդոց  
և 'ի թռուանց նախորդին : Ըահռուհ մու-  
նուկ չորեքտասանամեայ միայն ասլրեցաւ  
'ի հարուածոց նորա՝ դաղտագուղի փախս-  
տեամբ : Այսուհետեւ առեալ զիւրեաւ ըղ-  
իառացիդ մականուն Ագլուհ , որ ոյինքն

է, թագաւոր Արդար, սկսու գնոց զնեի  
 զհոյձոյս ժողովրդեան, և շռայլ ձեռօք  
 վատնեաց զմն ծագանձ զայն Հարստութիւն,  
 զոր զէնք 'Եադրոց դանձեցին բազմամեան  
 տարժանողութեամբ.ք: Այլ պարծանք Ապշ  
 վաղակի թօթափեցան 'ի նմանէ: յորժամ  
 Խըրահիմ Խան եղբայր նորա 'ի սլարառու-  
 թիւն մատնեալ զրովանդակ զօրս նորա, կա-  
 լու զնա և կուրացոյց: Այլ ինքնին ևս  
 սպանեալ 'ի զօրաց իւրոց, տեղի ետ Շահ-  
 ուուհայ ընուլ զաթոռն դադարի: Օ սա ևս  
 փութով զրկեալ յաթոռոյ հանին ՚ի լու-  
 սոյ աչաց: սյլ քաջ սպարապետ իւր վե-  
 րստին կարգեաց զնա 'ի տէրութիւն աշխար-  
 հին: Արկին զրկեաց զնա թագաւորին Ադ-  
 ուանից, Շահ Առլէյման, և կացոյց իշխան  
 նահանդին Խորասանայ: Օ այսու ժամա-  
 նակաւ ցմիջոցս ամաց տասանց զրեաթէ ա-  
 մենայն մարդպանք աշխարհին ինքնազլուխ  
 թագաւորեցին յաշխարհին Պարսից: Ա-  
 զաս Խան Ազլուան կալաւ զԱտրապատակա-  
 նեա, և թագաւորական շքով վարեաց զիւր  
 իշխանութիւն մինչեւ ՚ի սահմանա աշխարհին  
 Արաց: Մահամմադ Յուսէյն Խան Պ ա-  
 ճար կալաւ զԱստարաբագ և զՄազանդա-  
 բանն ամենայն: Գիլան անկախ եկաց, և

այսալես ամենայն գաւառք մարզպանութեանց աշխարհին 'ի փոքրիկ թագաւորութիւնս փշտուեցան , մինչև յարեաւ Քարիմ Խան Օ անդ , կամ Օ անդիկ միասպետել վերստին ղհամօրէն Պարսկաստան :

Այս սա , իշխան արդարակորով , թէպէտե ծնեալ ի խոնարհ իմն վիճակի , իւրով աշարութջև Հանրակշիռ խորհրդով խոհականութեան , առանց եղեռնագործութեան իրիք 'ի ձեռս բերեալ վարեաց զիւր իշխանութիւն արդարութեամբ և իրաւամբք . վայելչական ձրիւք բնական քաղցրութեան բարոյից իւրոց : Աանահապետ ճանաչէք Օ անդիկ անուանեալ ցեղին , որ թէ և սակաւոր , այլ պատուաւոր Համարէք 'ի մլջամենայն լեռնականաց աշխարհին : Որ ընդ գրօշակաւ մտեալ Ալիմարդան Խանի Բախտիարւոյ սպարապետի զօրացն Ասպահանայ , որ խոստացաւ նմա զերոր Պուղա ժառանգութեամբ , և զշահ Խամայէլ զեղբօրդին Աուլթան Հուսէյնի ամբարձեալ 'ի զահ արքունի , զօրացաւ ընդ Հովանեաւ նորա անդք քան զակընկալութիւն իւր : Ապա յորժամ Ալիմարդան յիւրոց զօրացն անկեալ զրաւեցաւ 'ի կենաց , Քրիմ Խան կառոյց 'ի փլածոյս նորա զիւր բարձրաբեր-

ձըն աշտարակ : 'Ես պարտութիւն մատնեաց  
զԱղասիսան զբոնակալ Ատրպատական աշ-  
խարհի , ապա և զմեծ ախոյեան իւր զիշ-  
խան Մազմանդարանայ՝ զՄահամմադ Քու-  
սէյն իւան , և յինքն յանկոյց զբովանդակ  
զարեւմուշանն Պարսկատան , Այնուհետեւ  
թէպէտե կալսու և ՚ի բանդի եղդ զԽամայէլ  
զԹագաւորեցուցեալն յԱմեմարդանայ , սա-  
կայն և սյնալէս ինքեան շատ համարեցաւ  
սկահել զանունդ վէքիլ . որ այնինքն է՝  
փոխանորդ , կամ տեղակալ կառավարի տէ-  
րութեան , Որով Հաստատեալ յաներկեան  
իշխանութեան , սկսաւ մողմուլ և քաղցրու-  
թեամբ վարել զայն , և խաղաղութիւնն ա-  
ռատութեամբ հանդիպէր յաշխարհին Պար-  
սից , Կուն գործեաց ամենայն օգւով , և  
ծաղկեցոյց զէերկ և զվաճառ աշխարհին . զի  
թէպէտե ինքնին տգէտ էր զրոց , սակայն  
մեծապէս խնամ տանէր գիտնոց , և յամե-  
նայն կողմանց և 'ի գաւառաց ժողովեալ  
սկահեր առ իւր . խորհրդովք նոցա բարւո-  
քել զընթացս կառաւարութեան տէրութեան  
իւրոց : Աս վերստին պայծառացոյց զտա-  
սպան երկուց մեծամեծ Քերթուղացն Պարսից  
զԱտկեայ և զՃաւիզայ : Որոց ետ և կար-  
ուածս երկրի , յապրուստ սպասաւորաց նո

յուն : Առեծապէս խնամ տանելը սա և  
Ազգիս Հայոց բնակելոց ՚ի Պարսկաստան ,  
Պայծառացոյց զքաղաքն Շիրազ , յոյն  
գերազարդ վոյելութիւն , ընդ որ զար-  
մացնենա և ճանապարհորդք Խւրոպացւոց .  
և մեռաւ ՚ի Հասակի ութուուն ամաց , սըգա-  
ցեալ ՚ի Համօրէն բնակչաց աշխարհին :

**Թ**էեւ արտաքոյ Հարեանցիկ դրութեան  
զսրծոյա՝ սակայն արժան Համարիմ , արդա-  
րացի զարմանոք յիշեցուցանել աստանօրթէ  
։ Օ անդ ոք այսքան հեզ ժիսրծէր արդեօք :  
Առեծամկոտ էր , այլ մեծամտութիւնն նորա-  
սեխառն ՚ի կրից , յաւէտ զտեղի վեհանձ-  
նութեան լնոյր , իշխանավայելուչն ասեմ  
և մեծին առաքինութեան : Անվրդով պար-  
զութեամբ ճաճանչէր բան ՚ի նմա , թէ ՚ի  
ժամանակի բարկութեան իւրում , և թէ ՚ի  
խաղաղութեան : Խստաց խիստ էր սա .  
բայց և խնաբհոցն զեջանէր մինչեւ ՚ի փա-  
խուսաւ մահու , Օ որս խստութեամբ խր-  
բատել կամեր , ընտրէր և առաքէր տո-  
նոսա զարս խիստս և դաժանարարցո , յո-  
րոց մի ճանաչէր և եղբայր իւր Օ էքի  
Խստն . յահ և սոսկումն ապստամբից . և զորս  
՚ի գթութիւնն ընդունէր , ի՞նքնին լիներ  
գործադիր ոյնց մեծամեծ շնորհոց : Չէր

ոք որ դիմեր առ սա խոնարհեալ անձասք  
և բեկեալ սրտիւ , և ոչ դտանէր շնորհս  
ներողութեան ՚ի նմանէ : (Օրինակի վասն :  
Ազատ Խանն իշխան Առապատականի և Գյա-  
թալի Խանն , որք ընդ երկար պատերազ-  
մաւ զՃակառ Հարեալ նորա , յետ յաղ-  
թութեան ապաստան դիմեալք առ ՚նա՝ կար-  
գեցան ՚ի մեծամեծ աւագութիւնս : Օ է-  
քի Խանն յայտնապէս ապատամբեալ ՚ի նը-  
մանէ , ընդ կենաց և զառաջին պատիւ գահ  
իրիցութեան ընկալաւ ՚ի նմանէ , Պատմի  
թէ յաւուս շինութեան բերթին Շիրազայ ,  
մշակ ոմն Պարսիկ Քէրիմ անուն , տեսեալ  
զնա ՚ի գլուխ սրարսպին Հայեցաւ յերկինս և  
սաէ , “ ԼՇ Խոդա ! Թօօ քէրիմ , Ու քէրիմ վէ-  
ման քէրիմ ! ” Աստուած իմ , դու ողորմած ,  
՚նա ողորմած , և Ես ողորմած . զի Քէրիմ  
զողորմութիւն նշանակէ . և ՚ի սակա այսու-  
րիկ մեծաց պարզեաց իշխանին գտաւ ար-  
ժանի : Արի էր սա առանց յանդուդն ձեռն-  
էրիցութեան . բարեպաշտ էր զենին , այլ  
առանց կեղծաւորութեան , դիտէր վայելել  
զբարիս աշխարհի , և ցանկայր զի և այլք  
վայելեացեն : Այլ վայելչութիւնք նորա  
չափաւորք , և վարքն ժուժկալ , նոր ոմն  
Տեղբան ՚ի Պարսկաստան երեալ , Եկաց

երջանիկ , և մեռաւ երջանիկ . իբրև Հայք  
 խանդաղատ վերացեալ ՚ի կաթողին զաւակաց :  
 ’Ե մեռանիլ ՚Քարիմ Խանի , յափշտա-  
 կեաց զիշխանութեան նորա եղբայր նորուն  
 ՚Օ էքի Խան , այր ժանա և անագորոյն : Ու  
 առ ՚ի քօղարկանել նախառանացն զհետ ե-  
 կելոց բոնակալութեան իւրոյ , Հրասարա-  
 կեաց զերկբորդ որդւոց եղբօր իւրոյ ժա-  
 ռանդակից իշխանութեան : ( ՚Քանդի երի-  
 ցագոյն որդւոց նորա զբկեալ եր յաշոց .  
 չորրորդն մռաեալ . և Հինգերորդն ներքինա-  
 ցուցեալ յԱկպարոյ Հօրեղբօրորդւոյ իւ-  
 րեանց : ) ՚Օ էքի Խան սպանաւ յԵղի-  
 խասատ ՚ի զօրաց իւրոց , Արուրիմատ Խան  
 ժառանդակից իշխանութեան քարոզեցաւ  
 միահեծան Հայրենի իշխանութեան . և մռա-  
 ՚ի Շերտդ ցիծութեամբ ժողովրդոց , այլ  
 Ասդի Խան միւս Հօրեղբայր նորա զբկեալ  
 զնու յաշոց և յաթոռոյ միանդամայն , բըռ-  
 նացաւ իշխանութեան : Քարեաւ ՚ի յլերոյ  
 սորա Ալի Մուրադ Խան , լնկեց յաթո-  
 ռոյ և ՚ի կենաց . և թաղաւորեց խռովու-  
 թեամբ զամն չորս : ’Ե զիմել երում ՚ի  
 վերոյ ՚Պաֆարայ որդւոյ Ասդի Խանի ,  
 ախտացեալ յախտ ունդի և ջիրման , Հիւ-  
 ծառ ՚ի մահ ապաժամն վըիժուց : ՚Պաֆար

Ժ.Բ.

Խան պայտաղատէ ընդ նորս , և յետ երից  
ամաց դեղակուր եղեալ Հնաբիւք իշխա-  
նաց բանդարկելոց՝ մեռանի , և որդի նորս  
Լոթիվալի Խան պատահի քաջակորով , թա-  
գաւորէ ընդ նորս : Առ սովոր մեծ նախա-  
րարն Պարսից Հաջի Խրբահիմ , այր կատա-  
րեալ և քաջախորհուրդ 'ի մէջ համօրէն  
ազդին , յետ մեծամեծ երախտեացն՝ զոր ա-  
րար Լոթիվալեայ անարգեալ և անաղատ-  
ուեալ 'ի նմանէ , առանձնացաւ 'ի տան իւ-  
րում յոդիո ապաստան :

Օ այսու ժամանակաւ ձեռներիցունք իշ-  
խանաց դլուն ամբարձին վասն թագին Պարս-  
կատահի , այլ երեւլին 'ի նոսա քաջադոյն  
հանդ իսացաւ Արա Վահամադ Խան Պա-  
ճար , որդի Վահամադ Հուսեյն Խանի իշ-  
խանին Վազանդարանայ . որ վասն նախա-  
գահութեան կռաւէր ընդ նորին իսկ Քարիմ  
Խանի : Առ թէ ալէ աներքինացուցեալ  
պահէր յանկեան ու բեքք կանանցին Շա-  
քաղայ , արածէր դժաճոյս երամակին Հա-  
քամոյ Օ անդ կոց . սակայն ողի նորս անհան-  
գիստ և կիրքն սանձակոտորք , համարձա-  
կեցուցին զիս ճաղապիւտ 'ի սլարսոյն քաղա-  
քին , և հսաննել յերկիր իշխանութեան նա-  
խահարց իւլոյ Արևիմունք ուսնե Օ անդ -

կաց սրբուոլ եռ նմա , ինքնակալել 'ի Մա-  
զանդարան . և ընդ իւրի գրաւել դիմէհրան  
և զԱպահան միտնգամոյն :

Լութվալի խան , որ յետ զՀաջի Խր-  
բուհիմ 'ի սրբուոյ արեանելոյ , ծփոյր որ-  
սլէս նու անզեկամլար 'ի ծուփս խռովու-  
թեանց . աւեսեալ թէ Աղա Մամադ Խան  
Հասանելը դայր ցվերջին կրծքանումն իշխա-  
նութեան . Օ անդկային Հարասութեան , Հա-  
ւասաց զվերակացութիւն քաղաքին 'ի ձե-  
ռաս երկուց ոստանիկ իշխանաց իւրոց . և  
ինքն խաղաց զառաջս ունիլ զարշաւանաց  
ներքինոյն :

Խակ Հաջի Խրբահիմոց աւեսեալ թէ 'ի  
միտս ժողովրդոց չկայր Հակամիսութիւն ինչ  
առ սա կամ առ նու սեպհականաբար . միոյն  
թէ աշխարհն Պարսից ազատ կրցցէ յառ-  
անին սրբաւերազմացն և յաւերմանց , ողնա-  
կոնութեամբ քաղաքացւոց կալաւ զերկո-  
սին իշխանս զկարդեալս 'ի վերակացութիւն  
նմին և վասկեաց արգել 'ի միջնաբերթիւն . տի-  
րացեալ Ծիրազայ առանց Հեղման արեանց  
անպարտից : Համբաւ դործոյս այսորիկ դար-  
ձոյց զԼութվալի 'ի Ծիրազ , սակաւաճեռն  
դօրօք , վասն դի մեծ մասն բանակին թէ-  
կունու դարձոյց նմա : Եւ եկեալ էջ յանդ իւ-

ման պարսպացն : Ենի՞ ՚ի միջնաբերթի անդ  
և կանայք զօրացն , որ ընդ լութվողի խա-  
նին . և Հաջի Խրբահիմ պատղամ առաքեաց  
առ նոսա , թէ որ միանդամ սիրիցէ զկանայս  
իւր և զաւակունս , ՚ի բաց կացցէ ՚ի լութ-  
վալի այ : Ասլա թէ ոչ՝ մահու վաղձանեսցին  
առէ . առանց միւսանդամ ցուցաներոյ ձեզ  
զերեսս խրեանց : Հեշտալուր գտան զօրքն ,  
և զօրավար նոցա փախստեամբ և եթ ասլրե-  
ցաւ : ՚Ի գալ ամին միւսոյ զօրաժողով ե-  
ղեալ լութվալի այլին պաշարեաց զՇ ի-  
րազ , և անհնարին քաջութեամբ մարտ ե-  
դերալ կուռեցաւ ընդ այն՝ զամիսս բաղումու  
Այս առնոյր և զքաղաքն . եթէ չէր պահ-  
պանեալ զայն նախահողին Հաջի Խրբահի-  
մայ : Վասնզի զտեալ նորա , թէ մերձ տանե-  
և եթկու Հաղար ողիք ՚ի քաջ պատերազմո-  
ղաց անտի լեռնաքնակ աղքաց՝ պանձանոք  
իմն թիւկն տային հաստատութեան : Օ անդ-  
կական հարստութեան , ժողովեաց իւր յա-  
տուկ գունդ յարհեստաւոր մարդկանէ : Հը-  
րամայեաց դրուշութեամբ ունիլ զանցս պո-  
ղոսայի ապարանից իւրոց , որ հաներ ՚ի  
գուռն քաղաքին . և ապա քարոզ կարդաց  
հրամարակաւ ՚ի մեջ ամենոյն լեռնական զօ-  
րաց , գալ հարիւր ՚ի մի նոււազ , և ընդու-

Նիւ պարզես 'ի ձեռաց իւրոց : Խըրեւ եւ-  
մուտ Հարիւրն ստաջին , շրջասլատեցան ըդ-  
նոքօք Հաղարքն Խըրահիմայ , և ստիպեցին  
զնոսա թօթափեւ անդ զգէնս իւրեանց , և  
դնալ արձակ : Բաժանեալ զգէնսն առ քա-  
ղաքացիս , յորս սպաստան լինել կարեր նա-  
խարարն , Հրամայեաց վարեւ զգինաթափ զին-  
որսն գէսլ 'ի գուռան քաղաքին , և այսպէս  
Հարիւր առ Հարիւր՝ հնարիւք զրկեալ 'ի  
զինուց իւրեանց , բովանդակեցան անդ 'ի  
հանգիսլց դարբասին մեծի . յորմէ 'ի բաց  
վտարեցան , կոմ' գնալ խառնիլ 'ի զօրս  
լութիւնայ : և կամ իւրաքանչիւր 'ի տու-  
նըս և 'ի բնակութիւնս իւրեանց : Հերա-  
զոց գոգջիր զարթուցեալ նոցա՝ անազան ու-  
րեմն , Հիացան ընդ արարս իշխանին . զի  
Հարիւրն , որ արտաքոյ՝ անտեղեակ էր ցոյն  
վոյք , որ ինչ անցք անցանէին ընդ Հարիւ-  
րոյն իներքոյ . ի պատճառս բարձրաբերձ որ-  
մոց ապարանիցն անջրապետողաց ընդ մէջ սո-  
ցուն և նոցուն :

**Թէ** այսպէս , և թէ այնպէս . յամառեալ  
տակաւին . **Օ** անդ կին 'ի խորհուրդս յաղթու-  
թեան , յառաջ տաներ զգործ պաշարման իւ-  
րոյ : **Աղա** **Վ**ամագ Խթան առաքէր զունդ  
մի զօրսց յօդնականութիւնն քաղաքին . այլ

նորա իրազեկ եղեալ կանխաւ , ընդ յսուազ  
 ել և պարտեաց : Առաքեաց զայլ գունդ ,  
 իսկ սա յաղթեաց և նմա , մինչև Հարկե-  
 ցաւ Համօրէն բանակաւ իւրով գալ 'ի վե-  
 րայ , և նկուն առնել զկոմակորութիւն նո-  
 րա : Այլ լութիւնի խան՝ թէ և Հաղիւ  
 ունեքը զօրս մի առ Հարիւրն Համեմատեալ  
 բազմութեան թշնամնաց գնտին , սակայն և  
 սյնալէս զիւը վերջին ճիզն թափելով 'ի վե-  
 րայ թաղին Հոյրենեաց , յարձակեցաւ 'ի  
 վերայ առաջնասպահ զօրաց ներքինոյն . 'ի  
 սուր սուսերի մաշեաց , և Հալածական վա-  
 րեալ յառաջոյ զփախստեայս 'ի նոցանէ ,  
 աճ 'ի մնձ բանակ սնոդր , և քաջութեամբ  
 յսուազ մղեաց պատերազմն Հարիւրաւորօք  
 և եթ , ընդդէմերեսուն Հաղարաց նոցա : Ար-  
 թութեան զիշերոյն 'ի վերայ Հասեալ կրկնա-  
 պատկեաց զահուորութիւն Օ անդ իկ իշխա-  
 նին . զօրք ներբինոյն ցրուեցան . և այն-  
 ինչ կամեք մտանել իսկոյն 'ի բանակ սնոդր ,  
 և աւար Հարկանել , մի ոմն 'ի զօրականաց իւ-  
 րոց Հաւատարմացոյց նմա , թէ Աղա Մահա-  
 մադ իւսն ընդ փախստէ իցն չողաւ : Պատ-  
 րեալ այսու Համբաւով , Հրամայեաց զօրա-  
 ցն դադարիլ , զի ինքնին առցէ զդանձս  
 նորու Աւատի զօրք նորա դիմցին այսր և ան-

ԴԵՐ 'ի կատուատ և 'ի կողովառատ իւրեանց .  
և ինքն 'ի տեղութիւն հանգեատ ցըյս տառ-  
ւօսոււն կանիսելոյ : Յորում . ալ մեծի զար-  
մանաց . լոէ և ահա հասարակաց մունետիկ,  
կորդայը յազօթս դերենին զբազմութիւն բա-  
նակին : Ա ասեղի Ազա Մահամադ Խան տե-  
սեալ զակաւութիւն գնատի թշնամւոյն , և  
զյեզակարծ ահափետութիւն իւրոցն ամե-  
նեցուն քաջալերեաց զարս ընթիրս 'ի գո-  
րացն մնալ շուրջ զիւրեաւ 'ի բանակին . և  
անոթողով արիութեամբ հոգւոյ իւրոյ , հրա-  
մայեաց մունետիկին քարողել նոյս զժամ  
ազօթից . ցուցեալ իւրոց և թշնամնաց մի-  
անգամայն , թէ առ ոչինչ գրէք՝ որ ինչ և  
պատահեցաւն : Այնուհետեւ 'ի նեղ անկա-  
նէր Ա ութվալի : յոյս յաղթութեան դե-  
րեէր նմա , և փախառեամբ միայն զանձն  
ապրեցուցանէր : Խոկ Մահամադ Խան պայ-  
տպատէր ընդ իւրե զհամօրէն Պարսկաստա-  
նեայս , այսինքն Օ արագաստան , զՊարս ,  
զ Արմանա : զԱստարաբատ , զԳիլան և ըդ-  
Մազանդարան : Խոկ Հոգի Ա ութվալեայ  
ցոյս վայր անեսուաճելին 'ի զանազան ձա-  
խորդութեանց անատի իւրոց : անցեալ 'ի Արր-  
մանայ 'ի Խորսասան , և ընդ յաջող և ընդ  
ձախող դէսս բազտին տարութերեալ անդա-

դար , Հաւաքեաց ընդ իւրեւ զբաւական իմն  
 բաղմութիւն գօրաց , որով Հզօրացեալ 'ի վե-  
 րայ Արմանայ , միանգամ ևս բառն եհար զմի-  
 ահեծան տէրութեամբ : Խոկ Աղա Մահամադ  
 Խան , որ թուէր նորանոր առուգութեամբ  
 յառնել 'ի պէսպէս զլորմանց իւրոց՝ ժողո-  
 վեալ զօր բազում , եկն և պաշարեաց ըզ-  
 Արման անընդհատ զամփսս չորս : Լութիւն-  
 ի Խան քաջապէս զդիմի Հարաւ նմին . այլ  
 տեսեալ զի՞նքն ամեն ուստեք կուսէ պաշա-  
 րեալ 'ի թշնամիաց , ել զանխուլ զգիշե-  
 րեայն և փախեաւ : 'Ի լուսանալ առաւո-  
 տեան տեսեալ Աղա Մահամադ Խանի թէ  
 Առիւծն խորակեաց զիւր գառագիլ և զեր-  
 ծաւ , թափեաց զթոյն գառնութեան սրտին  
 'ի վերայ անպարտ ընակչոյն քաղաքին ,  
 Խժութիւն անլուր . ընդ որ խոռովին միտք  
 մարդկան յանդիման կացուցանել : Խորն սը-  
 րով զամնայն արու քաղաքին , կամ յաչաց  
 եհան : Պահճիճք նորա 'ի Հարուածելոյն  
 հաշեալ մաշեցան . իսկ կիրք ներքինւոյդ ան-  
 զգոյ կացին մնացին . մինչեւ թիւ կուրու-  
 ցելոց անց ընդ թիւ եօթն Հաղարաց . և  
 սպանելոյն առաւել քան զայն : Քանին Հա-  
 ղար 'ի կանանց և 'ի մանկաեացն զերելոց  
 բաշխեցան զօրաց նորա , իրբեւ յաղթանակք

մարտի , և Առ թվականի լուսան , պարծանքն  
և նկամկ Օ անդիկ Հարսառութեան կալանատո-  
ւեալ մասնեցաւ 'ի ձեռս նորա . զոր յետ  
չարաչար ստգամանելոյ և յաչայն զրկելոյ՝  
առաքեաց շղթայակամկ ՚ի թօհեհրան , և ա-  
պա սպան , Այսոքիկ ամենայն տակա-  
կաւին ոչ զեջուցին զէրդեհ զաղանային  
բարկութեան ժանափս այսորիկ . Հրամայեաց  
պեղել զգերեղմանս , և Հանել անտի զտկե-  
րըս Քարիմ Խանի , և զշյդ ընդ ուկիրաց Երա-  
մարշահի ամփոփել 'ի մուտս սեմոց ապարա-  
նիցն . զի միշտ կոխոտելով անցանիցէ ՚ի վե-  
րոյ երկուց ահաւորագոյն ախոյենիցն Պա-  
ճարեան Հարսառութեան :

1795 , Հետ այսօրինակ միապետելոյ սորտ  
զհամօրէն Պարսկաստանեայս խաղայ դնայ 'ի  
վերայ աշխարհին Արաց . զքաղաքն Տւփ-  
դիս և զըրջակայ գաւառս նորա 'ի սուր 'ի  
Հուր և 'ի զերութիւն մասնեալ եղծանէ :  
Մայիշելի վայրենաբարյութեամբ աղարտէ  
զկարգ որբազան սպարկեշտութեան . և ապա-  
կանագործ զազրութեամբ կանգնէ զբագին  
աղարեղի յիշատակի իւրում յոզիս մնացոր-  
դաց աշխարհին . և դառնայ աւարտ և զե-  
րութեամբ բազմաւ յաշխարհ իւր 'ի Պարս-  
կաղումք 'ի զելեաց աստի ներքինացեալ

կանանցից Պարսից, եղեն արք անուանիք, յորոց Մահուչոր Խան Հնակոլովին անց, Խոսրով Խան Տէր Սամուելեան Պայթմազեանց, Մերզա Գորդին, և այլք. Եղեն արք երեկիք յշժ ՚ի գրան Պարսից մինչև ցոյսօր ժամանակին:

՚Ի գալ ժամանել ամին երկրորդի, խաղաց այս ժամանակատ մարդկոյին կենաց յաշխարհն Խորասանայ, ՚ի վերին երեսս կեղծաւորելով գույսո իւր առ նշխարս Հեյդարայ, որ ՚ի Մաշտակ, և զասատ ապստամբեցին Ոտթարաց, այլ ներքին Խորհուրդք նորա էին, Հաստատել զեշտանութիւն իւր ՚ի վերայ երկրին, և կեղեքել զմացորդս անընդունակուց ՚Խաղայ ՚ի սերեգոց անտի նորա: Առվեն զօշոքազութեան Խորհրդով, այնինչ Հասանեհ ՚ի սահման աշխարհին Խորասանայ, կուրացեալն Շահուն յառաջ ելանե նմա, և առեալ ածէ ըզնա մեծահուես շքով ՚ի շիրիմ Խմամին այնորին: Ուր յետ կտտարելոյ զուխան ամբարշտաց, սկսանի ներքինին Խղճմանօք, պահանջել ՚ի Շահունահոյ զականս պատուական նշան և գոհարս մեծագինս, զոր Համբաւ Հըռշակէր նշմարել ՚ի գաղտնին: թէ և արքոյն զաշացու զոնիխուլ սկսանէր և յորդւոց իւրոց,

՚ Ե զուր աշխատ լինէ թ թողաւորն աւպեր-  
ջանիկ չարաչար երգմամբ ուրանալ զոյն-  
պիսեացն ժառանդութիւն . զի հարուածք  
անհնարինք , խոշտանդումն և տանջանք աղ-  
դի աղդիք , հետ դհետէ յերեան ածին ըզ-  
ծածկեալն 'ի մեծադին և 'ի պատուական  
գոհարացն , որոց 'ի խնդիր է թ ներքինիս  
անագորոցն : Յաւել 'ի վերջոյ նա և դնել  
'ի գլուխ նորա օղամանեակ բոլորչի , և Հե-  
ղուլ ընդ ոյն կապար ջեռոցեալ . որով 'ի  
վերջին կետ կենացն եղեալ ասկասան , յայտ-  
նեաց և մասնեաց 'ի ձեռս նորա և դյակին-  
թըն պատուական , որ երբեմն պայծառափայլ  
արփիսնայր 'ի ճակատ Շաղին Ավրանդղե-  
րոյ , և ապա զուլ դտեալ խոշտանգանացն  
իւրոց . հրամայեցաւ իւրովք Հանդերձ զը-  
նալ բնակիել 'ի Վաղանդարան , Բայց 'ի  
պատճառս այսքան չարաչար հարուածոց և  
խոշտանգսնաց մեռու Շահուու զճանա-  
պարհոյն , և զիջոյց զառեկայծեալ ճրտդ Ավշա-  
րեան իշխանութեան՝ 'ի տանին 'Օսկրոց ,  
'ի Հասակի վաթսուն և չորս ամոց :

Հանդերձէ եր ելանել և 'ի վերայ Բուխա-  
րայ , յորքամ զուգեան եհաս նմա , թէ առ-  
չա Արտսք արշաւեցին 'ի սահման տէրու-  
թեան Փարսից : Ա աղբաղակի յետս ընդ

կրունելին տճապարեալ ամենայն զօրոք խաղաց 'ի վերսոյ Առաջատական աշխարհի . Ուստի թէպէտե մեկնեալ էին զօրք Ոչուսոց 'ի պաճառս մահու կայսերու հւոյն կատարինեայ , սակայն տակաւին յառաջ մղելով սորմ՝ Հասանէ մինչև 'ի Շուշի , 'ի քարաբերթ քաղաք յԱրցախ աշխարհի . և անդ սպանանի սրով . 'ի Խորանի խւրում , 'ի ձեռովն երկուց 'ի ստորին ծառայից խւրոց . զորոց հատեալ էր ինքնին զվճիռ մահու :

Այս 'ի հասակի տղայութեան կալեալ ներքինացաւ Հրամանու Ագլ Շահի . և Հանեալ յարբունս հաշակի խրոյ կարգեցաւ մարդպետական իշխան կանանցին Շահատանի : Այսիքան վտիտ և նիհար էր Հասակաւ , մինչ 'ի Հեռուստ երեխլ իրը մանուկ Հնգետասանամեայ , խակ դէմք նորու սինօրուք և կնճռեալ , ոչ յայլ ինչ քան 'ի պառաւ բաղմամեան ձեսցուցանէին զնաացոց Հայեցիաց : Որքան զժնեայ և անտանելի էին դէմք արտաքին կերպարանացն , այսիքան և զժնդակք էին ներքինք խորհրդոց նորա , պատրաստք 'ի դիւս Հնարից , աշխոյժք 'ի ճարակ չարեաց . և խմառառնք յաւեր՝ յաւար՝ և յորոգոյթ : Երան որոզովատի էր նորա գողջիր , որ ուստ տա-

նիլ այնքան գժուարկնտել աշխատանաց ,  
 մեկնեալ յամենային հեշտութեանց , և 'ե  
 մափկութեանց կենաց : Որսոց և սպառերազ-  
 մի զհետ զակատեալ գոլով , կեայր գրեա  
 թէ զմեծ մասն ժամանակին 'ի վերայ ձի-  
 ց : Աւը ինչ հասաներ , անխափիր ուտէր . ոչ  
 ըստրելով իւր դիմուկուկս ՚ի կերակրոց : Քա-  
 ւուր միում զկնի սասաթիկս արշաւերց 'ի  
 ինողիր որսոց սպատաճի խմբի ուրուք հասա-  
 րակ զօրականաց : որք նատեալ ուտէին ըզ-  
 մանուն և հաց : Խջեալ խկոյն յերիվարէն  
 Հաղորդեցաւ սեղանոյնոցա , զինուորական իմն  
 ախորժանօք : Օնոյն արար ասեն և խոր-  
 Հրդական նորա , զալարածոյս թզթոց 'ի զօ-  
 տի իւրում , որպէս թէ օրինակին Հետեե-  
 լով արքայի . ըստ որ խոճոռեալ արդել ասե-  
 լով , " կերդու զեղինձ և զքաղըաւենիս , որ-  
 շափ և կամլու . այլ մի տար ինձ տեսանել  
 զհեշտասէր ոք զքաղիր , իրեն զքեղ . ձե-  
 ռըն մլսել 'ի կերակուր խմոց արի զօրակա-  
 նաց : " Պահագիր եղեւ զտանել զիշխանու-  
 թիւն , և մշտնջնենաւորեաց դայն 'ի ժառան-  
 գըս իւր , թէպէտե միշտ աներատ միջոցօք :

**Ֆըթւլ:** կամ Բարա Խան եղբօրորդի  
 նորա եկաց թագաւոր Պարսից , յամի Տհառն  
 1798: Եւ Հաջի Խրբահիմերաբ ՚ի ճանապար-  
 ծա թօ

Հայ նորա զամենայն որողայթ , դորս լարեալ  
 էին նմա ժառանդակիցք իշխանութեանն .  
 Հորդեաց յարդարեաց 'ի խաղաղութեան ըդ-  
 շութիզ նորա , և պատրաստեաց սեղան անա-  
 րիւն առաջինորա , զմն ծն 'ի փառս մարդկան :  
 'Ի զօրանեալ Օ անդին Քերիմայ ՚ի սե-  
 րայ ամենայն աշխարհին Պարսից , Բարա-  
 խան Գյաթալի Շահ աղայ Հնդամեան պա-  
 տանդ առաքեցաւ յոտեան Շիբաղայ , Մի-  
 անդամ և երկիցս ակնարկեալ դժութեամբ  
 առ սա խնամուին Քերիմայ , խանդաղատե-  
 ցաւ ասեն 'ի վերայ մանկանն , և ասաց :  
 " Օ իէ , զի բերիք այսրէն զստողի քաղցրիկ ,  
 գլուխ դորա արարաւ ոչ վասն Հարկի , այլ  
 վասն թագի . տարայք դրա առ մայր իւր :"  
 Օ այս կանխատեսութեամբ իմն գուշակե-  
 րով , խիլայէ զիա , և մեծամեծ պատարագօք  
 յետս դարձուցանէ : Որով յաւետ 'ի գիրդ  
 մայրենի փափկասուն կեանս վարելով , յայն  
 կանացին ընաւորի մեղկութիւն , որ գոզջիր  
 Հանարակ է ամենայն ընդլայրասուն պատա-  
 նեաց 'ի գիրդս մարդ զարդացելոց : Անարի  
 որպէս և էր , ընսւորապէս 'ի վերայ բերէք  
 նմին և զշարացար Հետեւ անսն , զկասկած ա-  
 սեմ , և զնախանձ ընդ միառս այլոց : Որով  
 զմեծ մասն տէրութեան իւրոյ , զի բացտուն

և զի՞նդուանս ցծովին կասպից կորոյս 'ի ձեռս  
Առաջաց կայսերութեան : Խորասան 'ի վե-  
րին երեսս և եթ ակնածէք զգահերիցութեամբք  
սորուն . և փոխանակ տարեկան ընդհանուր  
հարկին , ամի ամի առաքէք առ նա միայն լի-  
ճայս ինչ առ 'ի ճարակ ազահութեանն :  
Օ որ և բազմից զանեալով աշխատ շատ առ-  
նէք զնաքաղաքային պատերազմօք անընդ-  
հատ ընդ ամս բազումս :

Ազահութիւն սորա զչափ ոչ գիտէք , և  
եթէ հնար լինէք աստուածոց հեթանոսաց  
զիջանիլ 'ի հայցուածս աղերսարկուացն Խո-  
լամաց : սոյն սա երկրորդ լինէք Միդասայ ,  
սովլամահ 'ի շեղջս սոկւոյ :

Ապերախտութիւն միշտ զհետ գայ ազա-  
հութեան : Արագէս ստուեր իսկութեան ,  
Ա ասնզի եղեալ թէ քաղաքական հանգ ամա-  
նօք պարտաւորեալ սպան սա զԱսդդ Խան  
զՀօր եղբայրն կօրովի , անադորոյն խժդժու-  
թիւն սորա ընդդէմ Հաճի Խրբահիմայ բա-  
րերարի իւրում և պաշտպանի , չունի գո-  
նեայ նշմարանս արդարութեան : Եախտես  
լինէք այսմ ամենային նախարարն իմաստուն ,  
և կարէք մի կամ միւս եղանակաւ զաղա-  
տութիւն անձին հնարագործել . եթէ կամե  
ցեալ ինչ էր : Այլ առաւել հայրենասէք

գոլով՝ նորա քան անձնասեր, ամենայն վեա-  
 ռուց իւրոց դիւցաղնաբար համբերեալ տա-  
 րաւ. զի մի զաշխարհ ողողեցէ յարեան ճա-  
 պաղիս: 'Ի Հրաժարական ողջունի իւրում,  
 ասաց զայս 'ի Ձեհ Հրան, թէ ' թագաւորին  
 և աւագանի նորա 'ի խնդիր էին չարու-  
 թեան զկինաց իմոց. այլ դիպուածն յա-  
 մեցոյց զկատարածն առ ժամանեալ մի և եթ,  
 Հնար է ինձ ասլրեցուցանել զանձն. այլ Պա-  
 րսկաստան կրկին յարիւն ողողի: Պահումն  
 մտաց իմոց էր շնորհել հայրենեաց իմոց ըդ-  
 թագաւոր ոք. և փոյթ ընտ. իմ չէր. եթէ  
 'Օ անդ ոք, թէ Պահար. միայն թէ առ տր-  
 նին խռովութիւնք դադարեցին, և ծաղ-  
 կեցի խաղաղութիւնն: 'Օ եղեռն արենհե-  
 ղութեան շատ աեսի, և ահա կայ ինձ ձեռս  
 լուանալ 'ի նոցանե: Հաշտեցուցեալ զԱստ-  
 ուած ընդ հոգւոյ: ակնունիմ խաղաղական  
 օրհասիւ 'ի դերեկման իջանել, ''  
 'Օ առաջեաւ կոչեցաւ ամերախտ թագաւ-  
 որին ծերունիս երախտաւոր, անհնարին  
 նախտանօք սկծեցաւ, և 'ի լուսոց աչացն  
 զրկեցաւ. 'նա որ զՊարս համարէն լուսաւո-  
 րեաց երջանեկութեամբ 'ի լոյս հանճարոյ և  
 իմաստութեան: Խրբե սկսանէր լեզուն վը-  
 սեմախտ քարողել յատենի անդ զանմեղու-

թիւն և զերախտիս իւր ընդդեմ անիրաւութեան և ապերախտութեան Արքոյի, Հրամայեաց Վրաթալի Շահ Հատանել զայն 'ի ընէն . որով զկնիքն էառ կենաց , և յաւերաւ 'ի վառս Համբաւոյ Հայրենեաց իւրոց : Դաշնիձս եհան Արքայ , և յամենայն 'ի կողմանց և 'ի գաւառաց Ճռաքաղ արար զամենայն արու զտան նորա , և զի՞նչս և զկանայս նոցա յարքունիս էառ :

Յետ անարժան դաշինն Հաստատելոյ ընդդրանն Ուուաց , 'ի Գիւլստան , յամին 1813 . ապահով եղեալ յամենայն կողմանց ճոխացուցանէ զթիւ կանանց և Հարձից իւրոց անդր քան զհազար , յորոց Ճնեալ ուստերս և դստերս անհամար , զնահանդ՝ ըղդաւառ և զգիւզօրէս անգամ աշխարհին Պարսից՝ որդւոց իւրոց բաժանէ . իսկ զտունս նախարարաց և իշխանաց՝ լնու դստերօք իւրովք , եղեալ նոր ոմն Շարայ , թուովք Ճնելոցն բարգտաւաճ : Որ ըստ ասելոյ իսկ իւրում ,

Փոխեաց զաշխարհ Պարսկաստանի ,

Եւ զալարանքըն Արքունի ,

'ի կեանս իւրում 'ի կանանց ,

Եւ 'ի մահուն յսպանդանոց :

Յարեաւ ընդ այս ժամանակ 'Ասպովին Բառնոպարտ , և ընդարձակեալ զյաղթութիւնս

'ի զերայ ամենային Եւրոպացւոց տէրու թեան ,  
 խորհնէք 'ի միտս , թէ որսլիսին հնարիւք կա-  
 րիցէ անուբ 'ի պարանոցս արկանել Արջւոյն  
 Ուռուսաց և Առիւծոյն Պարսից . զի 'ի մի լուծ  
 ձգեսցին զյաղթական կառս իւր յամենա-  
 ըեր մարմանդս աշխարհին Հնդկաց , ԱՀա-  
 ւորագոյն գաղանիք համակործան խորհրդոց  
 ոյսոցիկ , օրսէս և 'ի միւս կողմանէ Հրեշ-  
 տակախօսութիւնք թափու . Առ լթանին Հնդ-  
 կաց , ոխերիմ ախոյինին Անդղիացւոց տէրու-  
 թեան . աճապարեցյց զնասա գեսապան առա-  
 քել առ արքոյն Ֆաթալի , յօրմէ ոչինչ  
 օգնութիւն գտեալ կողմանցն հակառակողաց  
 մարտուցեալ ընդ միմանս , 'ի սլարտութիւն  
 մատնեցաւ թափու . և Անդղիացիք կարան  
 զաշխարհ նորա : Բայց 'ի յառնել Օ ա-  
 ման Շահի Աղուանից , և 'ի սաստիցուցա-  
 նելին զհամնօրէն Հնդկաստան , վերստին հը-  
 րեշտակախօս եզելն Անդղիացիք առ Շահն  
 Պարսից , և գնեցին մեծագնի զշնորհս բա-  
 րեկամութեան նորա , հաստատեալ զդաշն  
 վճարելոյ նմաս առ օրին թումանս հազար :  
 Ուստի ել նա բազմութեամբ զօրոց իւրոց 'ի  
 խորասան , զոր լուեալ Օ աման Շահն գար-  
 ձաւ . 'ի Հնդկաց պաշտպանել զաշխարհն յե-  
 րեսաց նոցա : Հաւելին ինդիել Անդղիա-

ցիք , զի վանեացէ զամենայն այր Գաղղիսցի  
 'ի սահմանաց իւրոց : 'Ի 1806 , արքայն Պար-  
 սից դեսպան առաքեաց 'ի Պարիս , և շաբա-  
 նակեաց զայն ցամն 16 երրորդ . յորում  
 մեծանունիշան Հայկագուն Պաւիթ Ար-  
 լիք Շահնազարեան , այր Գաղղիսընա-  
 դէտ և Հմուտ իրողութեանց Երուսալայ՝ առա-  
 քեցաւ 'ի դիմաց թագաւորին նստիլ դեռ-  
 սպանութեամբ 'ի Պարիս : Որ զճանազար-  
 հայն եկեալ յիշմիածին , ունկն մասոյց  
 Հեղութեամբ միում 'ի ճառից իմոց՝ յո-  
 տենի Հայրապետին Եփրեմոյ . և խնդրեաց  
 'ի նմանէ արձակել զիս , զի տարցէ ընդ իւր  
 'ի Գաղղիս յուսմունա ալէսպէս զիստութեանց  
 աշակերտակցութեամբ Խաչստորոյ քեռորդ-  
 ւոյն իւրոց : Այլ չեղե Հնար : Խակ Անդ-  
 րիացւոց անխնայ շնոյիւալ զճարակ անյա-  
 գուրդ ագահութեան արքայի : Հատին զնա-  
 մինչ 'ի սպառ . 'ի Համազարտասխանութենէ  
 Պաղղիս , և ինքեանք սակաւ առ սակաւ  
 ական Հատանելով մասն յամութս խորհրդոց  
 նորա . և շրջէին զնայ յոր կողմն և Հաճէինն :

1818 , Պատերազմ ընդ Արքաս Արքայի  
 և ընդ Օսմանցիս , որպէս դիարձր Հայք  
 զիսովին անմարդ ացուց , նոյնակն և զուտառ  
 զթութիւն Տեսան Եփրեմոյ Աթմուղիսինն

բարձրացոյց 'ի վերայ փախստէից և գերի  
 վարելոց Ազգիու : Աշխարհատարած Համբաւ  
 պարտուց Աթոռամօր Հայտատանի . որպէս  
 և ոմանց՝ աջ , և ոմանց՝ ձախ կարծիք զայն-  
 ցանցանէ , յառաջ եկին 'ի գերեհան զթու-  
 թենէ Հասարակախնամ Հօր Ազգի մերում ,  
 Որ ոչ միայն զնեաց զբազումն 'ի գերեաց՝  
 այլ և սեղան Հանապաղորդ եան կազմեաց նա-  
 ցա 'ի սովու : Օ որոց յայլուր երկարօրէն ,  
 'Ի հասանիլ բազմութեան որդւոց Պյաթա-  
 լեսոյ 'ի չափ կատարելութե Հասակաց իւրեանց ,  
 կարգեալ զամենեսին 'ի մարզպանութիւն կող-  
 մանց և գաւառաց աշխարհին , և թողեալ զե-  
 ցագոյն 'ի նոցանէ զՄահմադալի մարզպանն  
 «Քրմանշահայ , սաստիչ փաշայութեանն  
 Բաղդատայ , ակնարկութեամբ Ազէքսանդ-  
 րի առաջնոյ Կայսեր Խուսաց կարդայ ժա-  
 ռանգ արքայութեան զԱքբաս Միթրա . ըղ-  
 կրսեր նորա՝ զիշխաննն Ատրպալատականի ,  
 Առանզի՝ թէե Մահմադալի էր այր հզօր  
 և քաջ 'ի մըցմունս պատերազմաց , այլ ըստ  
 առաջնոց ինքնակալաց յառաջ վարեր զիրա-  
 կութիւն պատերազմին : Խոկ Աքբաս նորա-  
 նոր կարգաց և կանոնաց զհետ եղեալ ,  
 Եւրոպական Հրահանդօք կրթէր զզօրս իւր .  
 և աշխարհին շինութեան մեծապէս ինսամ

տանելը :

Առ կուսակալութեամբ Արդօլլայ Խանի  
որդւոյ Մամադ Մողանայ Խալքին 1824.  
յարեաւ Հաջի Հաշէմ Խան | օռ ՚ի | ոմ-  
քուն . որոյ առեաւ զքոյրն ՚ի կնութիւն  
Արդօլլայ Խանի զիւրեաւ բոլորեաց զ | օռ ։  
լերանց , և արձակերասան խժութեամբ ած  
հարուածս ազգի ազգիս ՚ի վերայ ընակ-  
չաց քաղաքին և շիջակայից նորա : Այս հուր  
գժուային ճարակ գտեաւ իւր զողորմելու-  
թիւն ազգին պաշտպանութեամբ քեռառնե,  
ոյնքան զոյրացաւ ՚ի զազերս իւր , մինչ զա-  
թոռութ Պարսից շաղապատել խիզախել :  
Ծնառել և խոհական քաղցրութեան բարուց  
Տեառն Կարս պետի Առաջնորդին ընծայի  
միքութիւն ։ Առ ՞ ուղայ ՚ի սարառ սպառ  
կործանմանէ սորուն : Քանզի այր արթեցող  
էր Հաջին , և ՚ի պատճառս շուայտ զինէ-  
ճանութեան իւրոյ միշտ պատիւ դնէր Ա-  
ռաջնորդին . յորժամ դպասուով ամենակա-  
լին սոնհար լինէր : Յաւուր միում ոյն ինչ  
ըստ օրինակի Բարերանեան Բաղդասարայ  
բազմեաւ ՚ի սեղան Ա անից Ամենափրկչի  
անառակէր արթեցութեամբ և կաքաւուք  
կատառուցին , արինահատակ փառաց Ամենա-  
կալին Պարս Ամսն Հայրապետեան Քա-

լանդար գաւառին Փերիոյ և այլոց՝ անվեհեր արիութեամբ յառաջ մատուցեալ՝ կըշտամբեաց զանարին 'ի սակա սարսափելի ուրաքաղձութեանց իւրոց : Հաճին 'ի գիւնոջ շուայտեալ և յառաջագոյն խոկ օխացեալ ընդ նմա ու ոմքահար եղե 'ի կուրծ նորա' և սպան : Արքայ յականէ ճանաչէ ը զիմնն Հայրապետեան : վանորոյ իրրե գումկան մահուն առնու . 'ի 1825 ամի , ճանաւանդ թէ և ծածուկ գործոց վերեամարտութեան նորա' աճապարէ գայ յԱսպահան զանխուլ յիւրոցն պահելով զներքին խորհրդոց իւրոց : Առաջուրին նմա ընդ բաղմութեան աւագանոյ քաղաքին և Հաճի Հաշէմ , խոկ արքայ 'ի զարմանս ամենեցուն խիլայէ զնա , համարձակութիւն արտքեալ ելեց և մտից յանդ իման իւր յամենայն ժամ : Իրրե բարւոք 'ի կասկածանացն զակ : և ամենայն որոդայթից նորա քաջ Հասու լինի , յանկարծ հրամայէ ունիլ զնա 'ի կաղախան և չարաչար խոշտանդել , մինչեւ բանայ զատքերերենոյ ականս 'ի տան իւրում . և յանձնէ թագաւորին զանհնութիւն գանձուց , և զինուց : և ամենայն կահուց և կարասեաց վերնամարտութեան : Ապա 'ի վրէժ արեան Վիմնի Հայրապետեան զրկեալ զնա 'ի լուսոց

աչաց և ականջաց իւրոց՝ աքսորէ 'ի Վալ-  
բալի, որ առ երի Բաղդատայ :

Հետ վերջին պատերազմի և հաշտութեան  
ընդ Առուսաց՝ 1827, մահուն Երբաս Միրզայ  
ժառանգին արքայութեան, խուժանին թեհ-  
րանայ 'ի վերոց յարձակերոց դեսպանին  
Առուսաց և սպանելց դեռ, և Մահմադ Միր-  
զայի որդւոյ Երբասայ 'ի ժառանգ քարո-  
զերոյ, ոչ ինչ ոյլ մնայ առնել թագաւորիս  
մեծի, քան հեշտութեան և պարապոյ ժա-  
նել զաւուրս իւր : Խակ որդիք նորա, որ  
մարզսպանք նահանգաց կարդեալ և պետք  
գուտառաց, սակաւ առ սակաւ Հարստացեալ  
և 'ի ծնողութիւն և 'ի ծերութիւն Հօր  
իւրեանց վատահացեալ՝ ոչ միայն զլանոյին  
առաքել զհարկ արքունի : ոյլ և 'ի ծա-  
ծուկ զաշնակուռ լնող խուժաղուժ աղինա  
լերանց եղեալ՝ նոքօք դանցս ճանապարհաց  
ունենին, զհամբարս գիւղից և աւանից առ-  
հասարակ կտակաէնին . և զվաճառս աշխար-  
հին հինորար յափշտակենին . ընկեր աւա-  
զակաց և բաժանորդք յափշտակութեանց ե-  
ղեալ : Հորա Հուսէյնալի Միրզա հրամանա-  
տար Պարսաց . ոյր ազան և վատ . 'ի քա-  
նի ամաց հետէ մնութի պատճառանոք դերե-  
կը զհարկ արքունի : Եսե լեռնաբնակ ա-

զի՞նք . | ոռ .ք , Բախտիար .ք , և Աշամառանիք  
 թիկն տուեալ սլաշտանութեան կուսակա-  
 յաց և անհօգութեան որբայի խրեանց՝ առ-  
 պատակ սփռէին Համարձակ , դվաճառս 'ի  
 գլուխս ճանապարհաց , և զարդասիս երկրի  
 յաւանս և յագարակս առհասարակ կապ-  
 տէին : Որով զմեծագանձ ղայն առետուու  
 Ննդկաստանի , զպարձանս նախնուցին Տիւրո-  
 սի յաղարտ հանէին , և զերկիր 'ի քաջարեր  
 արդասեացն յունայն դնէին : Եւ ոյս ոյն-  
 քան , մինչ զի և Հարկ Ասպահանայ , որ 'ի  
 թէեհրան առաքէր , դճանասպարհայն յա-  
 փշտակեալ տարան Բախտիար .ք : Եւ յա-  
 հէ նոցա Պաժիսոյն Պարսից Թաղուղովը ,  
 մայր մարդարանին Ասպահանայ . որ կարտ-  
 պետէր Առն իւրում 'ի թէեհրանայ այսր  
 բազմութեամբ այրուձիոյ , դկայ էառ . 'ի  
 Պ օրութ , զիւղ փոքրիկ երիւ .ք օթիւ .ք հե-  
 ռի 'ի նմանէ . մինչեւ 'ի թիկունս օգնութեան  
 նորա հասանիլ քաջ սպարապետին Հայեաղ-  
 նոյ Պաւթայ Աակինեանց , չորս թնդանու-  
 թօ.ք և երեք .ք Հաղար զօրօ.ք . որում ական  
 նամես 'ի տեղւոջն պատահեցաք յ(Օ)դու-  
 տոսի 6 . 1854 : Քայլց աշխարհաւեր սղե-  
 տից՝ Հուսկ ուրեմն շարժեալ Արքայ , 'ի 86  
 ամի կենաց խրց՝ պարտաւորի զալ յԱսպա-

Համեւ երեսուն հազար զօրոք , և իջեանիլ  
յարքունական ապարաննն ՚ի Աէֆիարատ ,  
որ այժմ աղաւաղութեամբ Աաբարատ ա-  
սի , ՚ի Հարաւոյ քաղաքին՝ առ ափն Օ ան-  
գարուտայ , յարեելոնոր Պուղայ :

Առ լթան Ա'ահմագ Միրդա Աէֆիուլ-  
լա մականաւն , պատանի գթած առ ամենայն  
մագրիլ , երկչոս , կնաբարոյ , և անփորձ . որոյ  
մի միայն ծնունդ՝ քան թէ արժանիք , Հան  
զիս ՚ի գերակայ յայն իշխանութիւն , զօ-  
րէն թուլակաց և զեղիս իշխանաց Արեելեայց ,  
Հարատեալ զթիւ մանկանց գեղեցկաց և ա-  
չագեղ աղջկանց պարեցկաց՝ զօրհանապագ  
քնարէր ինքնին նոցա զեղականոց ներդաշ-  
նակութիւնս , և զմայլէր ՚ի կաքաւս ոտից  
նոցա , յանպարկեշտ ծեքծեքմունս իրա-  
նաց և ՚ի ժողիսս գովորականնս : Ա աւ էին  
նմա ժամեական խնջոյք մատաղատունկ ման-  
կամորդից , քան Հոգ կառավարութեան ըո-  
լոր աշխարհին : Աւստի արք աննշանիք ՚ի  
թուլութիւն սորս վստահացեալ՝ գտին , ո-  
րով ճանապարհաւ և կարացին . միջոցս ամ-  
բանալոյ զանձինս ՚ի գերակայ ճոխութիւն ,  
Օ րկեցին զաղքասս . անիրաւեցին տէրու-  
թեան . և չէր որ փոյթ տաներ այսմ ամենային ,  
Ա'եծամեծաց քաղաքին և Պահնապետաց տե-

անելավ զսորա անհոգութիւն և անբաւակառ  
 ութիւն 'ի կառավարութեան , մի զմիով  
 եղանէին . և անձնիւր նոր իշխանութիւն , նոր  
 ուժ , և նոր ժողովուրդ ինքեան սեփակա-  
 նելով՝ հարստէր զիւր կողմն : Օօրք և զօ-  
 րապետք , սպաշալանք օրինաւոր իշխանութեան  
 և կազմուրիչք նորա՝ անթոշով և անոռնիկ  
 աստ և անդ դանդաչէին : Խսկ մանեկտին ա-  
 պագործ 'ի խենեշանս իւրեանց՝ զմեծ հա-  
 րստութիւն անձանց շահէին : Այս , որ 'ի  
 պատճառս շռայլ ծախուց իւրոց , չէր տա-  
 կաւին լրացուցեալ զլձոր արքունի հար-  
 կաց , և տեղի չգտեալ զնորոգ հարստահա-  
 րութեան հպատակաց իւրոց , ձուլէ զամե-  
 նայն ոսկի և արծաթի սպաս զարդուց և  
 կարասեաց 'ի դրամս . ցտանե բիւրս թու-  
 մանաց . և վճարէ Հօր իւրում : Խսկ նա-  
 խարար նորա Մամադալի խան յիւրոց զան-  
 ձուց հատուցանէ զչորս բիւրս թումանաց  
 զընծայ քաղաքին՝ թագաւորին դալստեան ,  
 թող զօրական երեսուն կենդինարս սպարենից :  
 Պնդայարեր լինէին և վաճառականք , Ար-  
 հեստաւորք , թաղադլուխք , և պետք գտ-  
 ւաւաց : Եղյնալէս դային զեղուին 'ի կող-  
 մանց բազմաց՝ որդիք նորա զօրու իւրեանց  
 և դրօշու , որով զնայր և առաւելոյր թիւ

մարդկան և անսանց ժախել զբաւել զա-  
մենայն սպարէն : Գայ նոյնավէս և Հրամանա-  
տար Շիրաղայ . ոչը բերելով ընդ իւր գլճար  
արքունի հարկաց : Ա անորոյ Առքայի ցա-  
սուցեալ 'ի նա չհանէ յերես , մինչ և միջ-  
նորդութեամբ այլոց որդւոց իւրոց՝ խնայեալ  
'ի կեանս նորա , և զհասան Դ ուլի Խան  
զիւր հաւատարիմ հարկահան կարգեալ 'ի  
վերայ . գարձուցանէ 'ի Շիրազ , բերել ըզ-  
հարկ աշխարհին : Այս ինչ դեռ սոքա ըզ-  
ճանապարհայն 'ի Մայար տակաւէին . և  
արքայն ոյսօրինակ ճօխացուցանէր զիւրն  
գտնած , զմի միայն նպատակ գալստեան իւ-  
րոյ , յետ երկուասան աւուրց 'ի ժամանե-  
լոյն այսր , թեթե իմն հիւանդութեամբ վը-  
ճարէ զկեանս ի Զ Հոկտեմբերի . թագաւո-  
րեալ ընդ ամենայն ամս երեսուն և եօթն ,  
յամի 1854 : Ասի զսամանէ աղօթիւք ինդ-  
քեալ յԱստուծոյ զմահ իւր յայնմ եղա-  
նակի տարւոյն , յոր արմտիք և հունձք ըշ-  
տեմարանեալ իցեն 'ի համբարս իւրեանց .  
զի մի ժողովուրդն ասէ սովամահ լիցին :  
Եւ որպէս խնդքեացն կատարեցաւ : Խակ  
որդիք նորա խորհրդով իմն անյայտ արարին  
զդիպուածն ցաւորս երկուս . մինչև կացու-  
ցանել զԱշխաղի Միլզա ղՏէք Դ աղքինայ

Հրամանատար բանակի և գանձուցն արքունիկ :

Գումագան օրհասի զհօրն մահու առեալ  
Առլթան Մահմադ Մերզայի մարզպանի  
Ասպահանսյ. փոխանակ զարութիւն քաջու-  
թեան և զհանձար խոհականութեան յանձին  
բերելոյ ՚ի խնամել զիւր քաղաք և ժողո-  
վուրդ, կանացի երկչոտութեամբ յըշտապ  
տարակուսի շփոթէ զինքն . և աճտարեալ  
զգիշերայն երկու և եթ արամբք և Մու-  
շուլի Մերզայիւ եղբարբ իւրով ՚ի գաւա-  
կին, փախստական անկանի յիլրոջ գիւղ  
՚ի Զարմհալ գաւառի . ուրանօր բանակեալ  
էր սպարապետ համօրէն զօրաց իւրոց քա-  
ջլն Դաւիթ Խան Աակինեանց, հաւաքել  
զհաս արգասեաց ՚ի համբարս արքունի .  
և սաստել ապստամբ Լոռոյ :

Խոկ Ալենաղի Մերզա դիազարդեալ զհայր  
իւր, և սուրհանդակ գուժատար յիշտրալա-  
կանս առաքեալ առ Աթոռամառանգն Պար-  
սից . և եկաց իշխանաց հրաման տուեալ  
վարել զգունդս զօրաց յիւրաքանչիւր եր-  
կիր իւրեանց, նեքն մնացորդ օքն հանդերձ  
բարձեալ զգին տանի ամփոփել ՚ի Պում,  
քաղաք փոքրիկ լնդ մէջ ՚ի աշանսյ և ինեհ-  
րանայ . որ ՚ի սղատձառս Մասումոյ քեռ  
Որդայի, անդ ՚ի հօյակապ և յասկէդմբե-

թեան 'ի մղկթի ամփոփելոյ , Համարի առ  
 Պարսիկս , ոչ միայն ապաստանի Հզօր կեն-  
 դանեաց , այլ և վայր սրբարար մեռելոց :  
 Այլ ես զարմանամ արդարեւ , զի 'ի բազ-  
 մութենեւ անտի թոշակաւոր Գհենավետաց և  
 և Մոլոյից Աստահանայ չպատաւ որ կար-  
 գայր զՓաթա , կամ զդամբարականն ՚ի վե-  
 րայ սորին : Հասարակեալ այնուհետե-  
 գուժկանին մահու , դզրդեցոյց զքաղաքն  
 բոլանդակ . արհաւիրք անհնարինք պաշա-  
 րեցին զամենեքումք , ոսիւն սօստիւն կա-  
 լաւ զսիրտ ամենեցուն . և սուր և խոռվու-  
 թիւն տեղի տուեալ խաղաղութեան , խր-  
 ռովեցոյց զաշխարհ զլխովին : Այլ զարամք  
 ելանէր ՚ի զէն և ՚ի զօր . և ձեռն եղբօր  
 կողազտէր զոր զտանէր առ եղբօր : Ազգ  
 խստապարանոց , և աղգ դառնացող . ըստ  
 արդար իրաւանցն Աստուծոյ չև զերծեալ  
 ՚ի պատուհանից անտի աստուածառաք սո-  
 վուն և սղութեան , անկան յաւար , սուր  
 և ՚ի հուր միանդամայն : Օ ՚ի սրիկայից ոմանց  
 յայտնի անառակելոց ընդդէմ օրինաց , մա-  
 նաւանդ Ծիչունեաց ընդ զլխաւորութեամբ  
 Արօլդասիմայ Բուլանդի , և Առամուզունայ  
 Բաբազուզոյ զլոհ տուեալ նախ ՚ի բա-  
 նակ անդր կասրեցին կողազտեցին դկան և

զկարասի նորա : 'Ի շտապ տագնասլի զա-  
 մենայն եկա 'ի զօրաց , որ 'ի ժամանա-  
 կին ոչ զկարդ ճանաշէին , ոչ զիշխան իւ-  
 րեանց . այլ միայն զանձինս մաղապուր առ-  
 նել ջանային յանհնարին կատալութեանց  
 անտի ընակչացն Ասպահանայ : Օ եղան ա-  
 պա բազմութեամբ 'ի շուկայ անդք , քան-  
 դեցին և կապտեցին զամենայն կրասկ և  
 տանց 'ի տունս մուեալ Հզօր զօրութեամբ՝  
 յաւարի առին զոր միանգամ գտանեին :  
 Այնչե , սոսկամ արդարե զրել . զի զըս-  
 տնդիս յորորոց իւրեանց խողխողեալ՝ 'ի  
 բաց վարեին . դենակից զդենակցին իւ-  
 րոյ բանալով զառականս , յամօթ և 'ինա-  
 խատինս սնձանց և ազգին առ . հասարակ :  
 Աստուստ երթեւեկք ճանապարհաց փակե-  
 ցան . համբարք յական և 'ի հորո գտ-  
 դեցան . սփռածք տանց և զարդք կանանց  
 ընտ հողով թաղեցան . տուրեառք վաճա-  
 ռացն լոեցան , և սուր և սով թաղաւորե-  
 ցին յԱսպահան , օրինաւոր ժառանգք ան-  
 կանոն թաղաւորութեան : Օ ի յորոց սուր  
 վրխալեսցի , հիւծեալ մաշեսցէ սով կորո-  
 տական : Եւ արդարե եթէ չէր կարծեալ  
 Ասուծոյ զաւուրս զոյսոսիկ , ոչ ասլիւր  
 ամենայն մարմին :

Այսիւ 'ի ծուփս խռովութեանց հեծէր  
 քաղաքն բազմավրդով, Արիաջան Առաջ-  
 նորդ մեր ՀՅովհաննէս Արք Եպիսկոպոս Բագ-  
 րեանդցի, որ զհողի արտօնեան ընդ քահա-  
 նայապետական սարասու վառեալ բորբոքէր  
 առ 'ի սէր պահպանութեան Հօտին իւրոյ  
 սիրելոց : Ա ասնորոյ դյառաջագոյն պատ-  
 նըշեալ յՈսկանայ Աստուածատրեան, զգլու-  
 խըս փողոցաց և զանցս հրապարակացն վե-  
 րատին ամբացուցեալ և զգբունս արտաքինս  
 խցեալ զլսովին . հրամայէ ամենեցուն մե-  
 ծի և փոքու զինուորիլ 'ի զէն, և զցոյգ  
 ու ցերեկ հսկել 'ի վերայ տանց և ընտա-  
 նեաց : Օ տանիս բարձրաբերած և ամրա-  
 կառոյց Եկեղեցեաց յօրինել նոցա 'ի դի-  
 գանց և 'ի մարտկոց . զորս և վառէ սպա-  
 ռազէն արի պատանեօք : Պահս եղեալ վա-  
 նացն, ինքնին միշտ շրջէր թաղէ 'ի թաղ-  
 քաջալերել զիւրսն և սաստել անոսպայից :

Անդ ընդ երեկս առաջնաւուր դիսպուա-  
 ծոյս Պարսք ընտակեալք 'ի Ծիչան . յարե-  
 ւելից հարաւոյնոր Թուղար, առսպատակ սրբ-  
 ուեալ 'ի Ահեծ Ահեղան, համարձակ յափշ-  
 տակէին ընդ որում զինչ և զտանեինն : Այլ  
 մերադնեայք տեղւոյն նախադրաւ ունելով  
 իւրեանց զԱսպետ նշանակիեր Արեգակուն և

Առիւծու, զԴաւիթ Խոան Ակրտչեան Աաբ-  
 բեցի, զԱրքունեաց բժիշկ . և զոյլս 'ի սըր-  
 տէից . մարտ տուեալ կոռուեցին քաջապէս,  
 զաւարս . նոցա յետս կորզեցին , յոլովք  
 վէրս լնկալան , և զյոլովս 'ի նոցանէ վի-  
 րաւորեալ , արձանացուցին անդ զիւրեանց  
 յաղթութիւն . Աինչ 'ի խռան աստ շա-  
 հատակէր գրիչ պատմութեան այսմիկ՝ Հա-  
 ւատարիմ ծառայ նորա չովսէփ Աարգսեան,  
 պատանի որտեայ . տեսանելով զմօտալուտ  
 վտանկ կենաց նորա՝ դրգաւ առ Հան զնա 'ի  
 խռանէն , և ինքն դարձ արարեալ յաղմուկ  
 շփոթին՝ լնկալաւ վէր մլծ 'ի գաղաթման .  
 Համբաւ դիպուածոյս Հասեալ 'ի լուր Ա-  
 ռաջնորդին : Ճէպէսն, լնդ յաղթութիւն իւ-  
 րայոցն բերեցոյց , այլ լնդ վէրս Հարուա-  
 ծելոց կարի 'ի խոր խոցեաց զնս , Գիտե-  
 լով ապա թէ Շիչանցոց շնանդուրժեալ  
 արհամարհանացն կրելոց , զինէին վերստին  
 'ի վրէժինդրութիւն Հայոց , Հնարէ գրէ  
 յիւրմէ զթուղթ իմն , որպէս թէ 'ի Ապա-  
 րապետէն Աակինեանց գրեալ առ ինքն .  
 տայ զայն փայեկի և Հրամայէ ելանել արտա-  
 քոյ Թողոյ , և անդրէն դարձ արարեալ  
 մասուցանել ինքեան 'ի Հրապարակին բազ-  
 մութեան : Օս որ ընթեռնու կեղծ իմն խըն-

գութիւն 'ի զեմս նկարելով, և առեւեալ  
հաւատաբանց ոմանց, առաքէ առ Հօսէն  
վերակացու Շիչանայ՝ սովինե սպատգամատ :  
“ Աւրախ լեք ատէ, նամակ հաս ինձ թէ  
Արքայորդին և սպարապետ նորա զօրոք  
և թնդանօթօք եկեալ զիկասով զիշերոյ՝ բա-  
նակելոց են 'ի Հաղարջըիս ։ 'ի սպարզել խը-  
սովութեանց և դադարել վրդովմանց, Գյը-  
րեն ինձ զգուշանալ մեղ միայն մինչ ցային-  
ժամ, և ես բարեկամօրէն և՛ ձեզ հաղոր-  
դել արժան դատեցոյ, Խրախոյս տալ ձեզ ։ ”  
Առվին ինքնագիւտ հնարիւք յաղարտ հան  
զիսորհուրդ նենգութեան նոցա, Բայց ցա-  
ւուրս ինչ անընդհատ լսելի լինէին շուրջ  
զմեօք ճայթիւնք հրացանաց 'ի քաղաքէնու  
և արեան ճապաղեք բուորափայլ ներկէին  
զամենայն տուն մարդարեակ :

’ Ե 14 Հոկտեմբերի դարձ արարեալ Առւ-  
թան Արհմադ Արիզա 'ի Չարմհալայ,  
ընդ իւր ունելով զքաջն Աակինեանց և  
զամենայն զօրս իւր երեքհազար հետեակաց  
և հինգհարիւր հեծելոց, երիզ սեաւ զու-  
սովք իւրովք՝ 'ի նշան սպոյ առ Հօրին մա-  
հու, մոտանէ 'ի քաղաք իւր Ասպահան :  
’ Ե չուել բանակին մնաց Արգոլս Խան  
գործի հզօր աւերտութեան և եղծութեան

աշխարհին Ա անդի խնամացեալ ընդ Յիւ-  
 սէյնալի Միրզայ Հրամանատարին Շ իրա-  
 զայ , և խոտան ինչ վարկուցեալ զմիջնոր-  
 դութիւն մեծի Կայսերութեան Առուսաց ,  
 Հզօր ինքնակալութեան Բրիտանացւոց .  
 և զկտակ Արքայի . որ աւանդէր յետ  
 իւր զժագն Պարսից Մահմադ Միրզայ  
 Անդրանիկին Արքաս Միրզայի՝ զրէ առնա-  
 բազմայորդոր Հրապուրանօք թագ կազել  
 'ի զլուխ , և ապստամբութեամբ յինքն բըռ-  
 նաբարել զբայազատութիւն աշխարհին .  
 Խոտանալով յամնեայնի օգնական և նիզա-  
 կակից լինիլ նմա : Բանա եղեալ և ընդ մե-  
 ծամեծ օրէնսուսոյցս զենի իւրոյ և ընդ ա-  
 ւագանի 'ի խորհուրդ ապստամբութեան իւ-  
 րոյ զամենեսին համոզէր : Անհաւատ զժա-  
 ռանդ Աթոռոյն քարոզէր . և 'ի ձեռն ան-  
 հաւատից ( Առուսաց և Անդզիացւոց ) զալ  
 ըռնանալ իշխանութեան : Խոկ ընդ հակա-  
 ռակին . զիւր քեռոյց զհրամանատար . Շ ի-  
 րազայ համբաւէր այր քաջահարուստ , բա-  
 րերար խլամաց , և ժառանդ արքայութեան  
 և զեղբայր նորա զհասանալի Միրզա , Ա ա-  
 հագն նոր 'ի մըցմունս պատերազմաց մշա-  
 յալթ , որում 'ի տեսլեան չնորհեաց , ասէր  
 Ելի զիւրն Օ իլքիզար . և բիւրաւոր այլ

ևս ստութեամբ զառածեալ յանընտրութեան  
և 'ի գիւրահաւանութեանն զազդ հրապու-  
թեալ, ընկերէ իւրոց չարահնար խորհրդոց :  
Այլ զի ճգունք սորա էին, 'ի նոյն և զեշ-  
խան Ասպահանայ որոդայթել 'ի չարիս .  
որով և զազստամբութեան անաշխատ 'ի գը-  
լուխ հանել զգործ : 'Ի գալ նորա 'ի քա-  
զաք անդք, որպէս 'ի վեր անդք յեշեցաք,  
առերես բարեկամութեամբ սերտանայ ընդ  
նմա, Այլ ըստ որում ի ժամանակին նա-  
խարար դրան էր Վամադալի Խան իւր  
ոխերիմ, կատկածանս առեալ զգայթ ար-  
կանելոյ նորա իւրոց հնարից . նախ զիս 'ի  
նմանէ օձտել Հայթհայթէ : Ուստի ընդ  
վարագուրաւ հաւատարմութեան հաշուա-  
պահանջ եղեալ 'ի նմանէ, և զդպիրս դի-  
ւանին կաշառօք կուրացուցեալ. վնասապարտ  
հանէ զես յիրս արքունի, և տուժանս  
ծանունս եղեալ 'ի վերայ, մատնէ բան-  
դից և տանջանաց անտանելեաց :

**Թէսլէտե** չուսայ երբէք զեշխան ժողո-  
վրդեան բամբասել, սակայն և 'ի զարդարն  
դրելոյ ոչ արդելայ ամեննին : Համբին 1851.  
այնինչ երկինք ցասուցեալ 'ի չարիս բնակ-  
չաց երկրի, առաքէր մարախ և սէն, կամ  
երեխ ապականել զամենայն ըոյս դալարի

զսպարեն անսանց և մարդկան առ Հասարակ՝  
 սա այս Ամամադալի խան, առ յագուրդ  
 ընչաքաղց մոլութեան իւրոյ, ուներ զանցս  
 ճանապարհաց . և թէ ուստեքէ դէպ լի-  
 ներ արգասեաց 'ի քաղաքն մտանել, էր որ  
 գներ, և էր՝ որ յափշտակէր : Որոց և բազ-  
 մասկատկիալ զգին, շարիատիւ վաճառէր  
 ոլորմլի քաղաքացեաց : Օ՞նոյն առնեին  
 և որք ախտի ագահութեան նորա և բռնու-  
 թեանցն լինեին կցորդ : Վարդիկ, թշնա-  
 միք մարդկան առ յանիրաւ շահուց իւրեանց,  
 կենց Համարարած եղբարց իւրեանց բե-  
 րէին վասնդ : Որով զիւղք և աւանք ան-  
 մարդացան, գաւառք և քաղաքք ցանցառե-  
 ցան, և երկիր գլխովին ապականեցաւ : Օ՞ի  
 որ փարթամքն էին 'ի նոսա սակաւ առ սա-  
 կաւ զիւրեանց զգոյս ընդ աւուրն պարբենի  
 վասնեալք . 'ի տնանկութիւն Հասանեին,  
 և շատք 'ի Հարկէ սովոյն խոտաբուտ եղեալ,  
 և զվեսասարար բանջարս անընտրաբար ճա-  
 ռակեալ, յապականութիւն մահու զնեին :  
 Բարձու դորով մարց 'ի զաւակաց, և Հը-  
 նազանդութիւն որդւոց 'ի ծնողաց իւրեանց:  
 Համարեցաւ Հաւատն 'ի ժամանակին, ոչ  
 աստուածառաք իմն փրկութիւն Հոգւոց, այլ  
 դործի պարարման սլորտուց : Բազումք 'ի

•Քրիստոնեաւթենէ՛ ՚ի Առհմետականութիւնն ,  
և բազումք յանհաւասութենէ՛ ՚ի հաւասա  
մտաբերէին , այլ չէր որ ընդուներ զնոսա ,  
Ճոխք մուրացին ՚ի գրաւեց շրջէին . և աղ  
քատաց մեռելոց չտայր ոք զգերեղման : Եւ  
ահա անհնարին աղիտիցս արարող՝ Առմա-  
դալի Խան , որպէս և գլուխ Առոլայիցն  
Ասպահանայ , ըստ արդար իրաւանցն Աստու-  
ծոյ , մասնեցան տանջանաց և տուժանաց մի-  
անգամայն :

Խոկ Աբեգօլլախան տեսեալ թէ ոչ կա-  
րաց ՚ի խորհուրդ ապստամբութեան իւրոյ  
զիուլթան Առհմադ Արեգահամողել , յա-  
դագս քաջախորհուրդ խրատուց և անձնա-  
գիր պաշտպանութեան Ապարապետին Աա-  
կինեանց , ակն յոյտնի թշնամացաւ ընդ  
նոսա : Եւ բազմազրդիու Հրապուրանօք իւ-  
րովք՝ գրեւաց յարսց զյայտնի անառա-  
կեալս բաղաքին՝ ՚ի սուր և յափշտակութիւնն  
Հորս ընակիչք Քեօհնայ Արէյդանայ ապա-  
րասագոյն քան զամենեսոին , ապաստանի իւ-  
րեանց գտեալ զմզկիթն Խմիմամիջօմոյ : ՚ի  
չորորդում աւուր “Եոյեմբերի” գրոհ տը-  
ուեալ բազմութեամբ ՚ի մեծ վաճառանոց  
քաղաքին , աւերեցին գրեալ թէ զԱռաստա-  
րաղար զլսովին : Որոց անագան ուրեմն ըզ-

զիմի Հարեալ Պարախան Յօվսեփեան գըն-  
 տապետ Ապարապետին Աակինեանց . Հարա-  
 ծականս արար մինչ յամուր արաստանինո-  
 ցա 'ի Մղկիթ անդր , Խսկ Արքայորդին ,  
 տեսեալ թէ չկարէր Հասուցանել զքէն վը-  
 րիժուցն 'ի Մղկիթ անդր՝ պատղամտիսու  
 լինի առ Միրզա Մահմադ Ագի Դահնազեա  
 զիսաւոր Համօթէն Պարսկաստանի , ձերբա-  
 կալ առնելե մասնել 'ի ձեռու իւր զզ լիսա-  
 ւորն 'ի նոցանէ : Խսկ նա՝ առ պաշտպա-  
 նութե օրինաց , և յարգութե իշխանին կա-  
 լանաւորեալ զերկուս 'ի չարագործաց անոնի ,  
 մասնէ Արդարութեան , զորս 'ի վաղիս ան-  
 դր սրով գատի Հրաման Արքայորդւոյն :  
 Բայց ինքն Արքայորդին խնայեաց ըստ  
 խնդրոյ Դահնազետին . կամ պատժել , և կամ  
 մասնել զիւրոյ կողման չարագործան : Որով  
 ծագեցաւ 'ի միջի կնճիռն խոռվութեանց :  
 Յուսէյնալի Միրզա , որ 'ի մահու Հօր  
 եւրում , դեռ 'ի Մայար տակուէր . և ե-  
 թէ զսիրտ արւոյ առեալ գառնայր յԱսպա-  
 հան , տիրէր արդարե զանձուց և զօրացն  
 արքունի օժանդակութեամբ Դահնազեաց  
 տեղւոյն , յառնուր գուճին այնորիկ՝ աճա-  
 պարեալ անկաւ 'ի Ծիրազ , Խւ սնոտի խրա-  
 խուսանօք Արդօլլախանի , թագ կապեալ

թագաւորեաց : Եւ զեղբայր իւր դՀասաւ  
 նալի Միրզա կարգեաց սպարապետ նորա-  
 ժողով զօրաց իւրոց : Ուագաւորական իշ-  
 խանութիւն սորա , ոչ անցանելը անդը քան  
 զբերթապարիստ քաղաքին , վանդի բաց 'ի  
 հարիւրաւոր ոսոխաց նորոգ իշխանութեան ,  
 առեցող անձին արարեալ էր ոչ միայն զԱ ա-  
 յի խան հզօր իշխան Մամասանեաց , այլ  
 և զԱ ահմատալի խան , զեւրոյ քեռ փե-  
 սայ . ( կենախուզ եղբորին եղեալ . ) որոց  
 ոխացեալ ընդ 'նա' պաշտրեին զՇ իրող , և զա-  
 մենայի ել և մուտա խափանելին : Ուէպէտե  
 տարաբախան Հասանալի Միրզա , յորդոր  
 լինելը նմա բանալ զգանձն , և ունճիկ սփռել  
 զօրացն՝ 'ի սլաշտականութիւն բռնաբարեալ իշ-  
 խանութեան , այլ նա միայն զեւրոյ կանանց  
 զզարդս ճոխացուցեալ , և 'ի սպանծոտ Հա-  
 տավաճառս , 'ի գերձակս , և 'ի մաճակալս  
 յուսացեալ՝ զորս բռնի մուծեալ էր 'ի հա-  
 մար զօրաց , անհոգ մնացր ամենելին : Ար-  
 ժանի բռնակալութեանս այսորիկ եղեն և ա-  
 րարք նորա : որ եղ 'ի բանդի դՀասանզու-  
 լի խան՝ զՀօր իւրոյ Հարկահան . և յափշ-  
 տակեալ 'ի նմանեկ կորզեաց , զորս եղիտ մի-  
 անդամայն : Միեւն 'ի կորուստ կենաց ան-  
 գամ մտարերել , Աւաղ յինչ ոչ Հասուցա-

ՆԵՐ ԹԱՅԻՆ յաջողուածոց զիշխան փառամոլ . որ  
սրչափ առաւելու 'ի բարօրութեան , ոյն-  
չափ և զարտուղեալ օտարանայ 'ի ճանա-  
պարհացն առաքինութեան : ԱՅԼ յաջող-  
ուած չարաց է կարճ :

ԽԱԿ ԱՐԳՈՂՍԹԻԱՆԻ ԽՈՍՏԱՆԱԼՈՎ յօգենու-  
թիւն 'ի թիկունս նորա հարստել զբովան-  
դակ զոյցրուժի Լ նջանայ , և Զարմհալայ ,  
զլ օռս Ասպահնանայ . և զՔեօհնայ ՄԵ-  
ԴԱՆ զլիսովին : ԵՅ ինքն կասկած առեալ  
թէ մի գուցէ Հրաման ինչ ուստեքէ կարո-  
ղացուցէ զիշխանութիւն ձերբակալ առնել  
զինքն . ապատանեցաւ 'ի տուն ՈՒՅԻՒ-  
ՄԱՀՄՈՒԹՔԱՂԲԱՅ ՈԽԱՉԱԿԵցւոյ , միոյի Պ. ճն-  
պետաց . և անդուստ նետոս նենգութեան մը-  
խեաց 'ի սիրտս բազմաց , առ 'ի գրգիռ ա-  
պատամբութեան : Յորոց ՄԱՀՄՈՒԹՔԱ-  
ԽԱՆ Լ օռ ազգաւ , իշխան ԶՀԵԼՉՈԹՈՐԱՅ ,  
Հրապուրեալ զօր ժողովէ , Հրոսակէ , և զա-  
մնայն զհամբար արքունի յափշտակեալ  
խրատառութին իւրոյ ԱՅՍՊԱՀԱՆ , և Հասա-  
նալիսոյ 'ի Շիրազ զաւետիս մատուցանէ .  
իբր այն թէ " ես վասն քոյ և զօրաց պա-  
շար տարեւոր պատրաստեցի , և դունդ Հը-  
զօր այրուժիոյ , միոյն գուք փութացարուք  
գալ : — " ԱՅՆԱՊԻ ՄԻՐՋԱՅ Հասեալ ՚ի ԹՆԵՀ-

բան՝ յանձնել զամենային Աւեշահ Միրզայի  
 եղբօր իւրում երիցու : Որովք հպարտացեալ  
 նորա անդր բան զարժանն , հաւանեցուցանէ  
 զժողով որդւոց Ֆրաթալեայ և զԱւագանւոյն  
 զրկել զիւր եզրօրորդի , և յինքն յանկու-  
 ցանել զթագն Պարսից : Որոց միահաղոյն  
 զիր հաւանութեան զրեալ՝ կնքեն զնա 'ի  
 թագաւոր , և 'ի Ասմազան տօնի զգեցու-  
 ցանեն 'նմա զարքունական ծիրանիս , և ե-  
 ղեալ զթագն 'ի զլուխ՝ երկրպագանեն իր-  
 ք Արքայի : Ու առ 'ի զբաւելոյ զսիրաս  
 հասարակաց բաց զիւրոյ Հօր հարուստ զան-  
 ձարան . և վասնեաց զերկուս միլիոն թու-  
 մանաց յանընտիր պարզեաբաշխութիւնս սմա  
 և 'նմա : Գ. բեաց հրովարտակ աղատութեան  
 հարկաց 'ի քաղաքս և զաւառս աշխարհին,  
 ոյլ չեր որ ընթեանոյր զնոսա : Բազմեալ  
 'ի զահոյս արքունեաց՝ աղատութիւն շնչեր  
 յաշխարհ ամենայն , ոյլ զփոքրիկ սահման  
 թահէրանայ՝ իւր նատարանի , սորեկացուցա-  
 ներ հինից և հրասակաց . որոց խմբովին յար-  
 ձակեալ 'ի վերոյ կուր վանաց՝ յափշտակէ-  
 ին զամենային առ միջոցաւ քաղաքին և Շահ-  
 Արդօլ Ազիմոյ : Ահա ըեր երկոքին մոլեգին  
 ծայրք առատաձեանութեան : թագ աւորեաց  
 չիւսէյալի Միրզա , սարկանալ արծաթոյ :

թագաւորեաց Ամի Շահ, սարկացուցանել  
 զիւըն պետութիւն, Այս Հայէր զմարդիկ  
 ձուլել 'ի գրամ', նաև վատնէր զղրամ 'ի  
 գտանել զմարդիկ: Այս գրամոց քան Համ-  
 բաւոց լղձանայր, նա գրամովք զսուտ Համ-  
 բաւ ստանացր. այլ մին քան զմին յիմար:  
 Գոյժ մահու Արքայի հասեալ 'ի Գա-  
 վրէժ' բօթէ 'ի լուր Պամաղամայ զանակնու-  
 նելին դիսպուած: որոյ ազդ արարեալ Կոմ-  
 սին Ակմոնովչի լիակար զեսպանի Կոյսերու-  
 թեան Առուսաց, և Արք Պամբելոց  
 զեսպանի Բրիտանացւոց, երեցուն միախոր-  
 հուրդ զնան առ Մահմադ Միրզոյ: Որուժ  
 ազդ արարեալ զհաւուն մահուանէ, ստի-  
 պէն փութալ խաղալ 'ի Թաեհրան, Անակ-  
 նունելին դիսպուած, վերջին պակասութիւնն  
 ծախուց: Հարիւրաւոր թշնամիք Հանդեր-  
 ձեալ իշխանութեան իւրոյ, թուովք զօրաց  
 և ճոխութեամբ զանձուց ինքեան վեհագոյնք.  
 Նա՝ ձմենն ստատկաշունչ, տարակոյս տան  
 մտաց յայս ձեռնարկ զգուշալի: Աւստի զի-  
 ջանի խնդրէ նախ զձեռն օգնականութեան  
 ամենազօր Կոյսեր: որոյ դեսպան լիակար  
 խոստանաց գրել Հանել 'ի սահմանաց Հայ-  
 աստանի, զեօթն Հաղարս զօրաց 'ի թիկունս  
 նորա: իսկ Արք Պամպրէլ Բրիտանաց-

ւոց Հայելով՝ ի սղութիւն աշխարհին և  
յապագայ վտանդ ընդունելոյ զզօրս Առու-  
սաց՝ ի Պարսկաստան, Խոստանայ վճարել  
զծախս Առապատական զօրաց մինչեւ ցիծեհ-  
րան, ԱՇխայն թէ՛ Հրամանատարութիւննո-  
ցա Հրովարտակաւ յահձնեսցի ինքեան, :  
Ո՞նդ որ հաւանեալ Աթոռաժառանգին՝ կար-  
գէ Հրամանատար Համօրէն զօրաց զՊամօր  
Անդղիացի, որ հատուածեալ զՀաղար Հինգ  
Հարիւրս զօրաց, առյ Ար Հենրի Արթու-  
րոյ, զոր և Լենզի կոչեին, և զԸ ի թիկնա-  
կից նմին արարեալ՝ վեշտասան թնդանօթօք  
չորեքօրեայ քան զինքն առ աջաւոր առա-  
քէ, Ապա ինքն զեսպանօք տերութեանց,  
և մնացորդօքն զօրաց, ելանէ՝ ի Պամիք-  
նոյ՝ 9 ԱՇեմբերի, Խրբե գայ Հասանէ՝ ի  
սահման մարզպանութեան Պաղբինոյ, Աւ-  
նազի Միբզա մեծաւ պատրաստութեամբ  
ելանէ զդիմի Հարկանել նմա, բայց տե-  
սեալ թէ ոչ ինչ ազդել կարեր յայնժամ,  
կեղծէ առաջաւորել զալստեան նորա, :

Այլ առաջինն յազատանոյ անտի, որ  
ել՝ ի թեհրանայ առաջնթաց և զօրավիզն  
Ժառանդին Արքայութեան, եր Խոսրով  
Խան որդի Ամուելի մեծանուն Քահանայի  
Պայթմազեանց Տփղիսեցւոյ, Ար զՃանա-

պարհային գրէ և առ Մանուշար Խան Մեծ՝  
Մարզպան Առաջտայ , դալ 'ի թիկունս ժա-  
ռանդի Աթուոյն Պարսից : Արոյ գոլովայը  
Ճոխ յոյժ , դայ առ նա՝ պատարագաւ ութ-  
առն Հաղար ոսկի դահեկանաց , և բազմու-  
թեամբ հեծելոց , և այլ սպասուց :

\*Եղիակէս և Այայեար Խան սպասալար ,  
որ 'ի Պում յակատանի կայր յերկիւղէ  
բռնաւորին Աթշահայ , մաղապուր անկանի  
առ Մահմադ Միրզա , նիզակակից լինիլ  
նման : Գան խմբին 'ի տեղեաց աեղեաց ,  
և բռունք ազգաց զօրու իւրեանց և գրօշու :  
Մինչ սա այսօրինակ յառաջանայր , խո-  
րսմանեկն Աբգոլս Խան Հուչակելով յԱս-  
պահան : Թէ մաշարայական ախտի Հանդիսվեալ  
նորս , թափէ նեխութեամբ զոտն իւր զա-  
ջոյ 'ի սրունից 'ի խոնարհ . ուստի և անար-  
ժան լեալ թագաւորութեան , անագանէ-  
զիւր գալուստ : Եւ եթէ գոյցէ և ս , հզօր  
պատրաստութիւն Աթշահայ նուաճէ զնա ,  
և ինքն յիւրոց ցանցառեալ 'ի զօրաց , ոչ  
կարէ զգէմ ունիլ արշաւանաց Հասանալեայ .  
որում և Հարկիւ թողու զաշխարհին պայա-  
զատութիւն : Առջին զակատեալն զհետ Համ-  
բաւոց առնն զազգ՝ յանկուցանէր 'ի կողմն  
նորս : Եւ Հրապոյր սպասամբութեան շըն-

չեալ՝ գրգռէր զամբնեսին 'ի նոխճիրս ան-  
հնարինս և յուեր ոշխարհին միանդամայն :  
 'Ի բռնանալ իշխանին ԱԵԼՉԹՈՐԱՅ 'ի  
 վերայ արքունի Համբարաց, վերակացու-  
 գիւղօրէից Հայոց այնը գտառի, Պ ու-  
 կաս Աիւքիասեան, կամ Առոտամը ըստ Պար-  
 սից, որ 'ի Ը ահարասայ և այսը՝ որդի Հօր  
 յաջորդելով՝ զիշխանութիւն վերակացութեան  
 ունէր . յանկանել Արմհալայ ընդ իշխա-  
 նութեամբ Արգօլայ Խանի, յուրացութիւն  
 Հրաւիրեալ, և անլուր գտեալ, յետ բաղ-  
 մասլիտի անտանելի տանջանաց, տուժէ զին-  
 չըս և զիշխանութիւն վերակացութեան մի-  
 անդամայն՝ վասն 'ի Տիրիստոս Հաւասաց :  
 Խսկ 'ի լինիլ գտառին ընդ իշխանութեամբ  
 Ակքիդովլեայ, և 'ի շնորհել նորա զայն  
 Աղարանիտին Աակինեանց, մասամբ ոռձիի  
 նորա, կարգեցաւ սա վերստին յիւր սուա-  
 զին աստիճան : Տեսեալ ոորա զյայտնի ե-  
 զեռնագործութիւն վերնամնարտին Մահմադ  
 Ռ ըղայ, զայ ամբաստան զնմանէ՝ յատեան  
 Արքայորդւոյն : Խսկ Մահմադ Արղա-  
 խան իրազեկ ոյսր ամենայնի, և վստահ  
 յիւր Արգօլայ Խան և 'ի Հասանալի Միք-  
 զա, անդունէ զանաշառ վրէժինդրութիւն  
 իրաւանց, արհամարհէ զատագայ թագաւո-

բին զարդարութիւն , տռաքէ չորս 'ի սրի-  
 կայից անտի իւրոց յլսալահան , սպանաներ  
 գնա : Ենիւալ նոցա ծպտանիօք պատահին  
 նմա 'ի գլուխ կամրջին Շահաբասայ , որ  
 հանել 'ի քաղաք անդը , կեղծեն նամակ Հար-  
 կաւոր նմա մատուցանել , և իրքեւ  
 նան , ոմբովք ատրճանակաց շանթահար 'ի  
 սիրտ նորա՝ առնուն զվերարկուն նորա և  
 զւլսարկին յաղթանակ , և աճապարեն ընդ անցս  
 լերանց 'ի Զարմհալ գաւառ : Խոկ Պուկա-  
 սայ այնինչ գեռ շունչ կենսական չեր սպա-  
 ռեալ , յեցեալ յոգի արութեան , կանզնի  
 'ի տեղւողին՝ արիւնաթաթաւ . և գայթ ընդ  
 գայթ հասեալ զկիսով Զարբաղին , անկա-  
 նի կիսակենդան : Պառագից խմբէ  
 անդանօր զբազմութիւն մերազանց . որոց ըզ-  
 զէրսն պատեալ՝ պատկարագաւ բերեն դնեն  
 'ի Վանս Ամենափրկչի : Աւրանօր այնինչ  
 Ազգասեր Բագիզկ Արքունեացն Պատիթ Խան  
 Արտշեանց՝ կամեր զվերս նորա բանալ , և  
 զսպեզպանիսն նորել , անկեալի արի , հայե-  
 ցեալ շուրջ զիւրեւ 'ի բազմութիւն արանց և  
 կանանց , սասաց . “ 'ի բաց հրամայեան երթուլ  
 բազմութեանդ . զի մի 'ի խոցուածոյս զար-  
 հուրեալ ահահար լիցին : ” Ապա հաղորդեալ  
 մարմնոյ և արեան Անսարարին , ապրի ժամս

չորեքտասան . և ընդ այգանալ վաղուին՝  
աւանդէ զոգին . և թաղի մեծաշուք յու-  
զորկաւորութեամբ ՚ի Ա անսն Ամենափրկ-  
չի . ՚ի Գերեկտեմբերի . 5 :

Արին Պ ուկասայ չբաւականոցեալ զո-  
վել զտապ քինառութեան Մահմադ Բ ըզայ  
խանի ձեռն արկանէ բանդել զեղբայր սպա-  
նելոյն զԱրէլ , և զորդին՝ դՅուրութիւն :

Չեցէ զարմանալի տեել . Քըրիստոնէուու-  
թեան յայսքան հարուածոց միջի , Ասլա  
յաւարի տռեալ զտուն և զատացուածսնո-  
ցա՝ արձակէ զնոսա քօթարերս առ իւրեանց  
սպարապետ , Որ թէն կարէր ՚ի ժամանա-  
կին ՚ի ճապաղիս արեան ողոգեել զբովան-  
դակ Չամհալ . և զվոդ արհամմարանաց  
իւրոց հանել ՚ի նմանէ , սակայն տեսանե-  
լով թէ չարին գեղատու , և սկզբնահանյր ա-  
մանայն խռովութեանց՝ Արդօլլախան որջա-  
ցեալ ՚ի տան վենապետին , երկնէր հանապազ ՚ի  
սրտի իւրում հնարս մեկնելոյ սպարապետիս  
յԱրքայորդւոյ անտի . զի առանց իւր դիւ-  
րաւ կարիցէ սպարել կամ պարտել ՚ի կողմն  
բռնաւորին Շ իրազայ , լաւ համորեցաւ տա-  
նիլ անձինքամահանաց՝ քան թողուլ զբա-  
զաքն բազմամարդ յալիս արեան ճապա-  
զեաց , Աա այսօրինակ պահելով զԱսպահան ,

սրբահեաց զթէ. եհրան յասլագ այն աւերութեանց  
վասնողէ՝ եթէ չէք դտեալ սորա ՚ի ժամանա-  
կի աստ այսմիկ, և ահի զօրութեան նորա  
զարհութեցուցեալ զբնակիչ քաղաքին և  
զշրջակաց գաւառատցն, միմիոյն ակնարկու-  
թիւն Արդուլլախանի և Շահնալետացն՝ պատ-  
րաստէք զԽրան աթոռանիխան Ապատամբին .  
և զոյժ տուեալ՝ բազմօք յառաջ քան ըզ-  
Ճառաւանդն հասուցանէք ՚ի Յօհեհրան : Որոյ  
կրկին տիրապետութիւնն պատճառէք զան-  
հնարին աշխատանս և ծախս, զանհուն կո-  
տորած և զուեք . թող զսով և ժանտամահ  
զբնական հետևանս ընդ երկար պատերազմի :

Այնինչ սա աստի, ՚նա՝ անտի, և գրեա  
թէ իւրաքանչիւր ՚նահանգ յիւրմէ բաժնէ՝  
պանծայր թագաւոր տալ Պարսկաստանի, ոչ  
զանդազեցաւ և գլխաւոր Անառակացն Աս-  
պահանայ Ասմազան Չումզլունի : անու ա-  
նել զինքն թագաւոր Պարսից : Որ ամբացեալ  
դօրն ոզջոյն ՚ի մզկիթին Խմիմամի Պամայ,  
և ՚ի գիշերի ասպատակ սփռեալ տանց ՚ի  
տունս մեծամեծաց քաղաքին, աւար հար-  
կանէք . զամենայն դիմադարձս իւր մաշելով  
՚ի հուր և ՚ի սուր Այսպիսի անիրաւ յափշ-  
տակութեամբ ճոխացուցեալ զինքն, և զսրի-  
կայս բազումն կուտեալ շուրջ զիւրաւ,

այնուհետեւ ոչ Հինաբար՝ ոյլ ափաբար հը-  
րավարտակ դրէք առ ով և կամեց, և պահան-  
ջէք որքան զումարս դրամնց և Հաճէք,  
Եթէ վճարէք ոք՝ աղասէք, եթէ ոչ ընդ-  
գոյիցն տուժէք զիեանս և զխայտառակու-  
թիւն զերդաստանին՝ անյուր ինն և ամօթա-  
լից եղեռնազ ործութեամբ : Այսօրինակ  
յետ ՚ի Հնազանդութիւնն կամացն նուաճերոյ  
զմեծ մասն քաղաքին ։ այնուհետեւ ինքնիշ-  
խանաբար Հարկս Հարհանէք, ընդ պատրուա-  
կաւ պաշտպանելոյ զեսստ : Այլ սորաք ոչ  
շատացեալ՝ իրեւ դարձոն Հրեշտակը Արդու-  
յուխանի ՚ի Շիրազայ, և Համբաւեցին զմօ-  
տալուա յարձակիի Հասանաբեցի ՚ի քաղաք  
ունդը՝ բազմութեամբ զօրաց և յժնդանօթաց,  
մարերելով սորա ՚ի Համակրօթան աւեք աշ-  
խարհին, և ՚ի գրգերոյ Արդույլախանի խորհե-  
րով բառնալ ՚ի միջյ զեշխան քաղաքին և  
զսպարապետ զօրացն՝ յորոց կասկած կրէին,  
ահեղ և բոռն յարձակմամբ՝ յունվարի 17  
պրոհ տանի՚ի Հրազդարակ արքունի, ափրեւնակա-  
նթէ Հնարինցի՝ Հրազդինուց ամենայնի : Ի-  
րազեկ լինի յանդուղն խորհրդոց նորա քաջն  
Ասկինեանց, ըստ Հասազնոտակոք դչորս ՚ի  
թնդանօթաց, և յարէ զեսստ ընդդեմ չորից  
դարբասաց Հրազդակին, ընդ որս մարթ էք

ին

խմբի թշնամնաց ՚ի ներքս զեղալ . Խոկ Առա-  
 մոզանայ կարգեալ մարտիկս ՚ի դլուխս աշ-  
 տարակոց Աղկթին, և ՚ի բարձունս չինուա-  
 ծոց Հրացանս երկարը նկեցս տայ նոցա, և Հր-  
 բամայէ անդադար ոմբածիդ լինիլ ՃԱլադա-  
 րուն կոյս , ուր վանքն էին Ապարապետին .  
 թերես կորուսանել կարասցին զնա , ԱՅԼ  
 ՚հա անշարժ ՚ի տեղւոջն արձանացեալ՝ դաւէ  
 զնոսա երկնչիլ զերկիիւղ , օրով առաւել եռ  
 վստահացեալ թշնամնաց զնուին՝ դրօշ ամ-  
 բառնան զմիջնուուրը . և իբրեւ զեղալ ՚ի  
 ներքս թեակոխին Հրահարեն ՚ի նոստ զթեղտ-  
 նօթնն ահեղ շառաչմանք . սատակէ զոմանս  
 ՚ի նոցանէ , և խորտակէ զողն յանդզնութեան  
 նոցա , Խոկ Ալիստրկար խան Համբարապետ, և  
 Պարախսան՝ ոյրուծիւղք Ամբունաց, Թիկ-  
 նապահօք Արքայորդւոյն՝ և երեսուն և եթ  
 հետեակօք զհետ սկնաեալ վախսուից՝ Հար-  
 ծականս առնենն ցմկիլիթ անուր անսաւակաց ,  
 Խոկ խառնիճաղանձն՝ որ զօրէն անդեղաց  
 քաղցելոց , սովոր է միշտ դեւալ զհետ սպա-  
 տերազմաց , գրոհ տան ՚ի . Քեօհեամմշդան,  
 մանրաքաղ առնել զմնացորդս յաւարա-  
 ռութեանց Առամաղանոյ : Բնչաքաղց ախ-  
 տի ազահութեան սոցա հետեւլով և մարդ-  
 կան Ալիստրկար խանի՝ պալ ժամաց յաղթու

թեան փոխանակեն դյետին թշուառու-  
թիւն . վասնզի գէ ոլ պատեհ վարկուցեալ  
դարձնակալ թշնամիաց՝ դառնան և ունին  
զանցան փողցաց . և այր'ի թաքստենէ իւր-  
մէ ելեալ՝ կոստրէ անխնայ գիստրիչ իւր .  
Հերկուց կողմանց ևս լինէ, ին ճապաղիք տ-  
րեան , և կոստրած ոչ սակաւ , թեալէան առ-  
ամօթց սոքա աստի՛ և նորտ տնտի՛ ծածկէ-  
ին զառուդութիւնն թուոյ անկերց : Հասանէ  
Վահմագ Վիրզա 'ի Առնլրաբատ գիւղ՝ ե-  
րիւք օթիւք ՚ի Թեհրանոյ : Խսի բանա-  
կալն Ալիշան միրզա , Հրամանատար զօրաց  
կարգեալ զԽմամիլերախ Վիրզա, և զԱհամ-  
զոան Վիրզա՝ Հրազինապետ , սրոց Նիղա-  
կից արորեալ և զ Օ սհրասլ խան Հանգեր-  
ձապետ և զոյլո յոտաննիւ արանց , առաքէ-  
քան Հազարօք զդիմի Հարեւնել նմա : Ան-  
ձանօթ զինուորական իրազութեանց՝ տեսեալ  
զաւկաւածեռն՝ բայց և զահեղ կազմութիւն-  
քաջոցին, զերեւելի երեւելի իշխանաց կուսակ-  
ցութիւնն, զահ և զարհաւիրս Ամենազօր Կայ-  
սերութեանն Առուսաց, որ սպանոյցը զօր խա-  
զացուցանել և գրուել զՀամօրէն Պար-  
կաստան՝ զահի Հարեւալ սասանեցան : Հե-  
խեցին ընտա ճակատ յարդարել . ոյլ պա-  
կուցեալ անդէն ՚ի անզւոջն արձանացան մնա-

ցին, ու ումեք այնքան հաւաս նուիրելով ,  
որքան լիակատար Պատրիանին լիուսաց, Ա-  
ռաջարկէ զի թէ նա տացէ զիր երաշխաւորու-  
թեան ի գիմաց ժառանդին՝ չվնասել կենաց  
իւրոց և կայից, Հնաղանդեսցի նմա , Օ որ  
կատարելով նորս Համահաճութեամբ Ար-  
քայացուին, ասլահովէ նմա ամենայն երե-  
ելեօք բանակին գալ առ Վահմադ Վիր-  
զա, և Հնաղանդիլ առանց Հեղման ինչ ա-  
րեան : Խսկ բազմութիւն զօրաց նոցա , որ-  
պէս և կահ և կազմութիւն բանակին , իրե-  
ռուական ինչ ենաղալիկք մանկանց՝ ան-  
նշմար մնան :

Յետ մեծի և անարիւն յաղթութեանս  
այսորիկ, զրէ աստուած Նըրովարտակ առ  
Վահմադբաղը Խսն եղբայր Արայարայ, բեր-  
թապահ, կարանաւորել զՎահմադ Պա-  
ֆար Խսն՝ զնախարար բռնացելոյն, և բա-  
նալ Ալիշահայ զոր գուռն քաղաքին և կամք  
իցեն՝ ի փախուստ, Խսկ նորս տեսեալ թէ  
զանձք, եղբարք և զօրք իւր՝ յերկրի, և ձա-  
կատագիրք յերկինս՝ լքին և թողին զինքին,  
լաւ Համարեցաւ կամովին անձնուուր ինիիլ  
խնամոց Արքայացուին, քան եթէ փախը-  
տեամբ զղըլել զաշխարհ և զանձն իւր,  
Ուստի ձեռամբ առեալ զթաղն բռնարա-

բեալ՝ զետեղէ 'ի թանգարան արքունի, և  
յաթոռոյն իջեալ սոսկանայ ծառայել, ո-  
րում տիրել մտարերէք : Տես . քանի ելե-  
էջո արար բաղտ 'ի Պարսկաստան, և քանիք  
զելս իւրեանց ընդ էջոն չափեալ՝ դանին ան-  
հնարին արհաւիրս 'ի գերակայ պատիւս :

Աղա յետ աւուրց երից 'ի վերայ անցե-  
լոց, դայ Ար Հենրի Արթուր Անդղիացի,  
սպարապետ զօրացն, 'ի Պարսից Լ էնդի կո-  
չեցեալ, տասն և վեց հազարօք . դրունք քա-  
ղաքին անարգել բանին նմա, որ 'ի բաց  
արձակեալ զհինսն, և նոր պահս 'ի զօրացն  
կորդեալ պարսպաց, յարդարէ զբաղաքն  
ընդունարաննորոյ Արքայի, Խոկ ինքն Ամ-  
մադ Արիզա բաղմութեամբ առաջաւորաց .  
պարառեալ յիւրոց սիրելի զօրաց, յերբորդ  
ժամու, 9 Պահկաեմբերի՝ դայ մտանէ 'ի Ար-  
դարաստան, Օ ի ժամանայից դուշակեալ  
էր զայն օր անցաջող մտից հորս 'ի Պահան,  
Եկիր Պարսից յամենայն ուրեք ողովէք յա-  
րիւն անսլարու սպանութեանց, յորժամ նախ-  
կին հոգ խոհական Արքայացուին եղե զամե-  
նեսին 'ի խաղաղութիւն ածել, և զաշնարհն  
ապահովել յիրեսաց անդադար աւարառու-  
թեանց նոցա : Ա ամնորոյ զրեաց կոչեսց 'ի  
Պահան զամենայն հօրեղբարս իւր, զապա-

կանիւչս տէրու թեան :

‘Օչերազոյն յամենեսին ’ի նոսա . և Հրազօրազոյն վասն բնական ամրութեան երկրին , աղխախելոյ բարձրաբերձ լերամբ.ք և անտառախիտ դժուարանց մայրեօք , մասին արքունի գանձուց անդը գանձելոյ , և վասն խնամութեամբ կապելոյ ընդ իւր զհզօր զայն ժողովուրդ , էր Առուրքարա իշխան Առազանդարանայ : Ասրա որդին սէզ և պատերազմասէր , ’ի սրատրաստի ունէր զօրս քսան հաղար , որ խիզախէր թէ և բռնանալ գոնեայ իւրումն նահանդի , չասացից թէ և Համօրէն Պիարսկատտանի , Նօր աչալրջութեամբ զիրսն կշռելով՝ ընդ հարեանցի Հրաւէր Արքայացուին եկին երկոքին ’ի միասին արժանաւոր պատարագ.օք ’ի ՅնեՀրան՝ պաշտել զերեսս նորա : Ուց օրինակի և բազմաց Արքայորդոց Հետեւելով՝ խմբեցան ’ի տեղեաց տեղեաց յԱրքայի նիստն Պիարսից : Խսկ սակաւոց ոմանց , որոց իդձ էր վարիլ ոչ ինչ օրինօք . վախսանեայ անկան աստ և անդ , ’ի զզուել և խոռվել զխաղաղութիւն ժողովրդոց : Յորց Առուրէյման Արդարա ’ի ՅնեՀրանայ , և իշխան Պ.իւլպէյդանայ , եւեւալ յԱսպահան աշակերաեցան Արդուլայ Խսկի , և զնացին ’ի Շերազ նիզա-

կակից լինիլ Հասանալի ԱՌեղայի :

Արտես աստ Աքդոլս Խռան զԱմագալի  
իւան , նոյնալէս անդ Պ այմաղամ , որ զբո-  
վանգակ զերասանակ տէ բութեան ունէր 'ի  
ձեռ ին՝ զԱմահմագ Պ աֆար Խան կալա-  
նաւորեալ , որպէս գրեցաք 'ի վեր անդը ,  
մատնէ ազգի ազգի չարշարանաց և տանջա-  
նաց յաղագս անիրաւ ելոյ նորա յափշտակող  
ձեռօք 'ի գանձ արքունի . մինչեւ տուժել  
նմա զամենայն զմեծ Հարստութիւնս իւր ,  
զականս սլատուականս , դարձաթի , զոսկի և  
զպղնձի սպասու , և զկահ և զկարասին տան  
բովսնդակ : Բաց յայսցանէ անիրաւ ելով նո-  
րա և կենաց Հասարակութեան՝ շտեմարանեալ  
էր զմեծ Համբարս ցորենոյ , գրեա թէ զապ-  
րուստ երկուց ամաց քաղաքին , զի յաճուրդ  
գնոց նոցա զուեցէ զծարաւ ընչտքաղց մո-  
րութեան իւրոյ : Ո այս ամենայն արդարա-  
հաս վճռօք Երկնից տուժեաց յարքու-  
նիս , մերկացեալ 'ի փառաց իշխանութեան :  
Խոկ Ալիշահայ չեղե այնքան փոյթ ապա-  
հովելոյ զբուաբարեալ զիւր թագ , որքան  
շռոյլ ձեռամբ անընարաբար վատնել զգանձ  
Աքքունի , դողանատ գրամս , և գնել 'ի  
պահեստի առ սա և առ նա : Աշ կին ոք ,  
թէե սարուկ ծնեալ , մեծահոգութեամբ ևս

'ի կիր առնոյր զիւրե բազմ , քանի թէ սա Արքայի ծնունդ , Արքունեաց մեռնդ , և ո Արքունական գահայից բուռն Հարկանով : Այլ զի յԱստուածուատ իմն նախասահմանեալ էր փառաց և Հարաստ թեանցս այսոցիկ , օժանդակ Աթոռաժառանկին , 'ի բարւոքել նորա զքայքայուն վիճակ աշխարհին Պարսից , Ա ասնորոց և նոքին խել աւանդառուքն ի նմանէ , յահէ ասկազայ պատժոց զարհութեալք , ինքնայօժար կամօք դարձուցանեն զիւրեանց պահուատ առանց ուրուք ՚ի խնդիր ելանելոյ :

**Օ** այսու ժամանակու աւաղակաց ոմանց յափշտակեալ զմթեթ և զանասուն կարավանին , փախուցեալ յապաստանեցան 'ի ՇԱ Արգօլաղիմ , ուխտատեղի Պարսից , երկուց փարսախաց 'ի ՅԵՀ Հրանայ : Առաքէ Արքայացուն ունիլ զշարագործնն , խել զենապէտք օրինաց նոցա , ընդգեմ կան Հրամանին նորա , պաշտպանել զշարիս երկրի իւրեանց : Ո նու որ ցասուցեալ զօր արձակէ , թնդահօթս լարէ ահեղս ընդգեմ մղկթին , Հարկանել քանոլել և յապականութիւն Հասուցանել . եթէ ոչ Հանցէ յահճնեցէ արդարութեան զանօրէն ապաստանեալնն ինքեան : Օ որ տեսնեալ Պեհնալետոց տեղւոյն՝ ահա-

բեկ սրախւք և զողդոջիւն ձեսօք թերեւն  
տան զշարտգործան՝ խնդրակացն արքունի :  
Համբաւ այսը ամենայնի , թէովէան արհաւ-  
ւերս արկ զամենեքումբք , և զաշխարհ խա-  
ղաղացոյց 'ի նոյնօրինակ 'ի չարեւաց , սակայն  
կարեն 'ի խոր խոցեաց զօրէնսուսոյցս նոցա-  
յամենայն ուրեք . մանաւանդ' յԱռալհան-  
առել զԱթուաժառանդէն , թէ ուրացեալ-  
է , և քան զուրացեալն ասրախտ , որ ժպր-  
հեցաւ թնդանօթս լարել ընդդէմ մն ծի  
ուխտին խորամաց :

ՀԵտ այսօրինակ բարեկարգելոյ և Հում-  
քելոյ 'ի մի վայր զամենայն զՀօրեղբարս  
իւր՝ յորոց կասկածէր , ապա ձեռն արկու-  
նէ 'ի Հնազանդութիւն կարգաց և կոնովեաց  
անել և զաշխարհս Հեռաւորս 'ի թագաւո-  
րութեան իւրում , Կարդէ զԱլայեար Խան  
սպարապետ , և տուեալ նմա զօրս և դո-  
հեղ պատրաստութիւն Հրացինուց , առա-  
քէ նուաճել զապատամբութիւն բնակչաց  
Խորասանայ :

Լուր բռնակալութեան Հրամանատարին  
Շիրազոյ , և զօրավարութեան Հասանալեայ՝  
հասեալ 'ի ՅԵՀՀրան , պարտաւորէ զԱքքոյ-  
ացուն զԱմենու չար Խան ներքինապետ ըզ-  
հաւատարիմ անուանեալն ակրութեան , կար-

գել կուսակառ Պարսաց , և զեղբայր իւր զՓիրուղ Միրզա Հրամանատար , և զօրավար՝ զԱր Արթուր Հերիք . և առաքել զատ վեշտասան թշնդահօթօք և Հինդ դնդօք Հետեակաց գնալ նուաճել զապատամբութիւն երկրին :

Ապա Հայեցեալ 'ի մեծ սղութիւն երեւրին . և 'ի շոայլ ծախս բազմութեան այրեաց Հաւուն իւրոց , որ ծախէր օրական զմեծ գումարս գանձուց 'ի զարդ և 'ի ոլլըշը բանա , և իրքե Հարիւրաւոր կենալ ինարս յամենոյն սբարենից փափկագունից 'ի կերակուր Հրամայեաց առնուլ յորոց զործ՝ զգործն , և յորոց զանձ՝ զգանձն , և ասքս Հատընալիր սոնել . զերևելիս և զաեղեակս արքունի իւրողութեանցն , սբահել . իսկ զայլս վատրել 'ի բաց՝ ազատ . 'ի կամս իւրեանց : Որով թէն նուազեաց իջոյց զծախս սբարատանն 'ի Հարիւրաւորէ ցտանեաւոր . այլ բազմութիւն Դաժիոյից Պարսկաստանի սնկան 'ի շուկոյ , Այնուհետեւ դիւրագնի վաճառէին 'ի ԹահՀարն ակունք պատուականք , դի բազմաց 'ի նոցանէ նոր տուն , և նոր կեանս Հաստելով իւր , վաճառէր զաւելորդն , և դնէր որոց իրօք սկասուանէր :

**Այսինչ Արքայանիստն ԹահՀարն երջան-**

կանոյր յիւրում բարեկարգութեան , Առ-  
 պահան զնայր և տպականեր յիւրեաց ան-  
 գաղար Հնարապետութեանց Արդօլոյ Խա-  
 նի : Եւ ահա 'ի վաղիւ անդք , սորսափե-  
 լի՞ օր , զրոշ երկու 'ի գոյն կատայտ ամրար-  
 ձան 'ի գլուխս աշտարակաց Մզկիթին . և  
 թիւ իրեւ տոսն Հազար սպասազինաց խրմ-  
 բեցան 'ի Քեռնայ Մէյլոն . ընդ վարա-  
 գուրաւ պաշտպանութեան հաւ առոյ , նուա-  
 ճեւ զօրինաւորին իշխանութիւն : Օ օրք  
 Արքոյորդւոյն , օրպէս յիշեցաք . անոն-  
 ճիկ և անթոշակ մնալով՝ Հաշէին 'ի քաղցէ ,  
 Եւ իրեւ ոչ բաւական սոքա՝ յաւելան 'ի  
 թշուառութիւնս նոցա և օրբատօրեական սկա-  
 սերազմունք : Ա անորոյ բազումք 'ի Մահ-  
 մետական զօրաց անափ նորա յաւուք նեղու-  
 թեան թիկունս գարձուցեալ՝ ղինուք իւրեանց  
 յաւելան 'ի թիւ թշնամեաց : Եւ մնացին  
 միայն սակաւաւոր զունդ Հոյց , և ուրա-  
 ցելոցն Ա բաց , յանձնատուք պաշտպանու-  
 թիւն իշխանի իւրեանց : ( Այս Հաստած  
 Ա բաց ընդ մեծի բազմութեան Աղջիս Հոյ-  
 ց գերեցան սցոր 'ի մեծէն Ծահարաաց ,  
 և բնակեցան 'ի զաւառին Փերեց 'ի Աեր-  
 քին և 'ի Ա երին Ակսուայս , 'ի Հօվզ , 'ի  
 Գամբէքնար , 'ի Տաշքասան , յԱշաւ , և 'ի

Բային : Խակ յաւուրս Հալածանաց Շահա-  
բասայ , և յաջորդաց նորա՝ ուրացեալ՝ զՀա-  
ւասա Քրիստոսի՝ քահանայիւք իւրեանց  
Հանդերձ , եղեն 'ի Վահմետականա . և գր-  
տան չարագոյն ևս քան զՊարսիկս 'ի Հա-  
րստահարել զՀոյ դրացիս իւրեանց . Հա-  
զիւ ոյժմ 800 , տունք են սոցա + որք սր-  
հեն զԱ բացի յեղուն 'ի մէջ իւրեանց ,  
խառն ընդ Պարսկաստանի + ) Եւ այսպէս .  
նեղութիւնք 'ի վերայ նեղութեանց Հասին  
'ի վերայ , զօրք ցրուեցան , Հպատակք ա-  
պատամբեցան , և ծառայք իւր դրդուեցան,  
վաճառք Հանթից խափանեցան , երթեելք  
ճանապարհաց նոր 'ի նորոյ լսեցան , թաղք և  
փողոցք ամրացան , իւրաքանչիւր ոք 'ի սրաշտ-  
պանութիւն առն և անձին զէն առ , և յԱսո  
ուած յուսացաւ վասն փրկութեան իւրոյ :

ԵԱՅԼ որ մեծն է , զենապետքն երկոքին  
Վիրզա Վամողալի և Աէնիդ Վահամող  
Բաղր , իրաւունս Համարելով անձնեց կող-  
մապահութեամբ . Քեօհայ Վէրտանացւոց ,  
վրէժինդեր լինիլ եշանիի իւրեանց , խրս-  
տիւ սրատգամ առաքեն առնա դարձուցանիլ  
զայն ամենայն , զորս Պարսիկ խղճմուսք  
բորդել և ասել կարեն , Այս է , զբաղում  
ըիւ բս դրամոց . և ակտնեց սրատուականաց ,

և մթերաց՝ զորս կապտեցին ասե՛ն դօքք քոյ։  
 Եւ որովհեաւ ողիքը իբրև երեսուն 'ի  
 Հայ գօրականաց՝ նախադրաւ 'ի մարտին Հան-  
 գիսացեալ, մասնաւ որ աւարի զոհեցին ընդու-  
 նայն զսպարծանս իւրեանց Աէիդ Աշամաղ-  
 Բաղը, քսութեամբ Հոսէյսոյ Ը իշանցւոյ,  
 գրեաց առ Առաջնորդ Յ ուղայ, թէ զի՞ն-  
 ուորք Հայոց յափշտակեալ տարան 'ի տանց  
 իսլամաց՝ չորս լտերս մարդարաց և ութ-  
 սուն Հազարս թումանաց, եթէ դտեալ դոր-  
 ձուսջիք բարի, ապա թէ ոչ ժամանակ ձեր  
 լցեալ է, արիւն ձեր ընդ ջուր Օ անդա-  
 րուտաց խառնեցից, Այս անողորմ սպառ-  
 եալիք Պահնպետին 'ի տագնապ տարակու-  
 սի արկ զլզգն զլիսովին, և յերկիւլ ան-  
 պարա և Համայնաջինջ կորստեան, մինչև իւ-  
 րազեկ յինիլ այսր քաջին Ապինեանց, և  
 սպառգամ փութով առաքել առնա, “ Թէ  
 զոր միանդամ յառար Հարին 'ի տանց իս-  
 լամաց, զօքք արքունիւ արարին . Եղիսկո-  
 սլուն կամ Ազգ Հայոց 'ի Յ ուղա . ոչ մե-  
 զան ինչ յայդմ: Ես յիմոցն վերաժողով-  
 դարձոցից ձեղ զամենայն : ”

Բազմիցս յառաջադիր եղին սրիկայք Խմ-  
 մամիջօմայ, զըս տալ զզիշերայն 'ի Յ ու-  
 ղա, 'ի սուր սուսերի մաշել զընակիչս նո-

իդ

բա , և յառար և յափշտակութիւն գնել զին-  
չըս նոցա : ԱՅԼ Դանապետ նոցա խստիւ-  
արգել զնոսա : ասելով .“ Գիտէք զի սպարա-  
պետ համօրէն զօրաց է Հայ : և դարձնի  
միշտ քեցել զձեղ՝ի մզկթէ աստի . զի դիւ-  
րեաւ կարասցէ սատակել զձեղ : և ահա տե-  
ղեկացեալ է մեր , զի յիւրաքանչիւր՝ի զի-  
շերի գարանակարս գնէ՝ի Չարբաղ զըն-  
աիլս՝ի զօրաց իւրոց՝ թեղանեօթաւ և ծանր  
ծանր սպատրաստութեամբ : Եթէ յարձակես-  
ջիք , սոքա աստի՝ և Պուղայեցիք անտի՝ յա-  
րուցեալ սատակեն զամենեսին զձեղ ” Առ-  
վին կեղծ , բայց և հաւանական համոզանօք  
զաղգ մի ողջոյն փրկեաց յանկարծահաս մահ-  
ուանէ :

Համբաւ մօտալու յարձակմանց Հառա-  
նալեայ զարհուրեցուցաներ զիշխանն ապա-  
զօր . մինչ՝ի փախուստ մտարերիլ նորա  
յամբոցն Խափառուել անուանեալ , Խսկ քաջ  
Խպարապետ աներկն ան յայաց մահարաւէր  
սպառնալեաց , քաջալերէ զիւր իշխան , և  
զմնացորդս ցանցառեալ զօրաց իւրոց : Քան-  
ձըն առնու չորս հարիւրօք միայն զդիմի հար-  
կանել յարձակմանց Հասանալեայ՝ եթէ ի-  
ցէ ոք ասէ , որ սլոհիցէ դքաղաքն յե-  
րեսաց առ անին պատերազմաց՝ զսր սպառ-

Նոյր ՚Բեռհնայ Աւէլդան , Աւէլ սոքա յա-  
Հարկութեան գենին , և ՚նոքա ՚ի շանթար-  
ձակ թնդանօթաց պակուցեալ՝ չիշխոն յոյտ-  
նի ճակատ յարդարել . ոյլ զօրէն ուրուա-  
կան երեսութից խօլականաց , սպառնալով  
զկորուստ իրերաց , արձանան կան ցաւուրս  
տասն :

Փետրվարի 2 . եկն եհաս Անդղիացին  
մեշտասան թնդանօթօք և Հինդ գնաւաւ զօ-  
րաց , և բանակ եհար ՚ի Աավտարատ , ՚ի  
գալստեան սորա սասանեցան ապատամբք .  
Պրօշակք նոցա խոնարհեցան . և խումբք  
ցրուեցան : Ահ քաջութեան և իմաստու-  
թեան նորա՝ զամենեսին սարսափեցուցանէր .  
զի ոչ զդենպետ ճանաչէր , և ոչ խորհրդոց  
ուրուք անսայր , Աա եդ սպահս ՚ի դլուխս  
անցից . և ունէր զամենայն այր անառակ ,  
և մատնէր բանտից և կապանաց : Զէր ոք  
իշխան սուր ածել ընդ մէջ , ցորչափ մնաց  
սա յԱսսպահան , զի յամենեցունց , բաց յար-  
քունական զօրաց և սպասաւորաց , ՚ի բաց  
կորզէին զզէն , Խոկ արբեցութիւն , որ թա-  
գաւորեալ էր ՚ի ժամանակին ՚ի մէջ Աահ-  
մետականաց , սպառ սպուռ անհետացաւ : Ուր  
յառաջն բազմութիւն մարդկան սպառազի-  
նեալ հազիւ կարէին անցանել ՚ի փողօքէ

՚ի փողոց , յահեւ յափշտակութեանց և սպա-  
նութեանց , այժմ այր անդէն միայնակ գը-  
նայր ՚ի քաղաք անդք , և շրջէք անահ որ-  
շափ ուր և կամք . լինէին : Այսպիսի բա-  
րեկարգութեամբ ապահովացուցեալ նորա  
զքաղաքն , յետ աւուրց ութից խաղայ հա-  
մօրէն զօրօք ՚ի գործ ումիշա , ՚ի Փետրվարի 10:  
Ուր որջացեալ էք որդի Արգոլոց խանի  
արգելու զմուտ նորա ՚ի քաղաք անդք :  
Բայց ՚ի լարել նորա զմեծամեծ թնդա-  
նօթսն ընդգէմ քաղաքն , և ՚ի սպառնալ  
զհամակործան աւեր նորա փախչի . և քա-  
ղաքին աւագանի ինքնայօժք դան առ նա  
և ընդունին զնա ՚ի ներքս :

42 . Խոկ խորամանեն Արգոլոց Խան խ-  
կոյն հրեշտակս արձակեալ ՚ի Շիրազ , ազգ  
առնե Հասանալեայ՝ ելանել զօրօք և ունիլ  
զյառաջս նորան որ սակաւաւորօք և եթ՝ առէ,  
եկն տանիլ զպարծանս Պարսկաստանի . և  
ես ՚ի պատրաստի ունիմ առաքել յօդնու-  
թիւն քեզ զայրուձի Ենջանայ , զՉարմր-  
չալայ , և զլուս Ասպահտինայ : Խրազգաց  
եղեալ այսօք պատգամաւորութեան՝ Քաջին  
Աակինեանց , չորս թնդանոթօք և չորս հա-  
րիւր հետեւակօք խաղայ ՚ի Ենջան . և ունի  
զանցս ճանապարհին և զառաջս յարձակ-

մանց տպատամբիցն խմբելոց : Պահանջաւան լեռալ Հասանալի Միրզայի : և գողցիս բռնի կորդեալ զսակաւաձեռն օղնականութիւն դրամոց յարծաթասիրէն Յուսէյնալեայ՝ տեսանէ զսպատրաստութիւն երկուց խմբից Հետեակաց, և միոյ՝ Հեծելոց, յարանց երկրագործաց և յարհետառառաց, ուրոց գործավարս կարգեալ դժախստեայս յեղբարց իւրոց, ինքնին զօրավարէ ամենեցուն, զի ինքն աստի, և օգնութիւն Լոմինուդովլեայ անտի, ընդմիջելով զԱրին Բրիտանացի, խորտակեցեցին զզօս նորս : Այլ նորա իրադեկ եղեալ 'ի լրտեսաց անտի թաքուցելոց տատ և անդ, յառաջէ ունիլ զառաջս նորա, և ընդ լուսանալ առաւ օտուն Հարեալ ընդ մեջ Պարիշամայ և Մուսիարատայ 'ի գաշտն Արագան, յարգարէ զճակատ ընդդեմ յարծակմանց դնատին թշնամնաց : Պահանի նիւրով ամբառնայ, եշմարէ ուրոյն զգունդս զօրաց, և զահեղ ահեղս 'ի թնդանօթաց : Ակսանի Հարկանել զգլուխ իւր ձեռօք իւրովք : անհծս և ՀայՀոյանս տրծակիլ յԱրդօլլա Խան, և որպէս թէ եկեալ վասն փախստեան՝ քան յտղթութեան, Հրամայէ Հատընտիր արանց իւրոց ապահովել զզսնձն, ապա նշան տայ թըն-

դանիօթս արձակել 'ի ճակատ անողը զօրաց  
թշնամւոյն , յորմէ զրդիու և խրախոյս ա-  
ռեալ Աբւոյն Անգղիացւոյ , արձակէ նախ  
թնդանիօթս և Հարկանէ ցրուէ զկազմութիւն  
թնդանիօթաց նոցա : Տեղայ ապա հետ զհետէ  
զհրաբորբոք շանթօ 'ի նոսա , և 'ի փախուստ  
գարձուցսնէ զկարծեցեալ յաղթական Պար-  
սից : Հետեակոք ապա յառաջ խաղացեալ՝  
սրաշարեն շուրջ զհետեակոքն թշնամեաց , և  
բակ առեալ զիօքօք՝ զինաթափ առնեն զա-  
մենեսին . և արձակեն երթալ առանց վեա-  
սելոյ ինչ կերնաց նոցա : Եւ ուր ժամանեւ-  
իսկոյն գարձուցեալ զբերան թնդանիօթացն ,  
շանթահար լինի 'ի նոսա , մինչեւ թազուլ  
նոցա զիւրեանց թնդանիօթս և մազուպուր ան-  
կանիլ 'ի ձիւնս լերանց , և զանձինս ձողով-  
րել յանիրէալ կործանմանէն :

Խակ յաղթական սպարասլեախս զարձ ա-  
րաբեալ լի փառօք և յաղթութեամբ , ժողո-  
վէ զաւար փախստէ ից , զկահ և կազմուած  
որպէս և չորեսին 'ի զերեալ թնդանիօթացն ,  
և ոռաքէ յԱսպահան , զնել յարգելան :

Խակ Հատանեալի . որ փախստեամբ մա-  
զուպուր զանձն 'ի լերիւս սպրեցուցանէր ,  
հասուած ինչ այրուձիոյ զկողնամբ.ք Ի ն-  
ջանց լրաեսութեամբ առաք : Փորձել առ-

կառին զհաւաստիս պատգամաւորութեանցն  
Արդոլայ Խանի . և եթէ Հնար ինչ իցէ ,  
մնացորդօք իւրովք , ընդ անխար անցս լե-  
րանց խառնիլ յոյշրուծին Ենջանոյ , և ան-  
տուստ թեակոխել յԱսպահան , Այցա ե-  
կեալ խմբովին դարձնին 'ի կիրճ ուրեք ,  
և լրտեսանի տուաքեն այսր և անդր՝ գտանել  
զստուգութիւն յուսոյ իւրեանց , բոյց ընդ  
հակառակն տեսանեն 'ի հեռուստ , զի ահա  
բանօթօք , պատրաստի կայզրիմի հարկանել ,  
որոց միանդամ յանդուգն խորհրդովք Են-  
մինուլովլեայ՝ ընդ այն ճանապարհ արշա-  
առնիցեն 'ի քաղաք անդր :

'Ի Մարտի 6 . Հասան Պոլի Խոն ,  
որ Հարկահան կարգեալ 'ի Փատալեայ ար-  
քայէ , և բարբարոսութեամբ բանաւորին Շե-  
րազոյ կապտեալ և կողովրտեալ յամենայն  
գոյից իւրոց , ընդ զօրս Հասանալեայ երեալ  
'ի ճակատ , և 'ի պարտիլ կողմանն յերե-  
սաց | Էնդեսոյ , և 'ի խոնիլ մարդկանն զմի-  
մեամբք , առեալ զշոր մի ջորւոց 'ի բանակէն  
և 'ի բաց կորզեալ՝ զկողմամբք | Ենջանայ զայ  
Հանդիպի պահաց բանակին , և կոլեալ ա-  
ծի զառաջեաւ Ապարապետին , զոր իրքե-  
ճանաչէ Արին բարեսիրտ , պատով ընդու-

Նի , և զօրականս տուեալ Նմա յապահո-  
վութիւն ճանապարհին , տռաքէ ողջանաբառ  
՚ի քաղաքն Ասպահան : Ուրանօր նոր ՚ի նո-  
րոյ կողովտեալ յամենային ՚ի սրատուադու-  
նիցն իւրոց . ուղեորի գնալ ՚ի թռեհրան  
մը րկ և քաղցեալ :

Խսկ քաջին յառաջ խաղացեալ երիւք  
օթիւք ՚ի Շիրազայ բանակ հարկանե . և  
կայ գալստեան Փիրուղ Միրզայի և Մա-  
նուչար Խանի . նորք Հանդերձ խաղալ ՚ի  
վերայ քաղաքին : Ոյք երբե Հասանին ,  
Խլխանի , որ թշնամութեամբ էր ընդ բլո-  
նատորին Շիրազայ , զրէ առ նոսա զզար-  
ձեն Հասանալեայ ՚ի քաղաք անդք , զան-  
պատրաստութենէն զդիմի հարկանելոյ , զպա-  
շարմանէն Շիրազայ , և մղերոյ զամենեսին ՚ի  
միջնաբերդն քաղաքին : Օ այս լուր առեալ  
իսկոյն յառաջ խաղան , և առանց պատե-  
րազմի և արեան , ունին զՅուսէյնալի Միր-  
զա , և զՀասանալի Միրզա , և եղեալ ՚ի  
ջորտօջ առաքեն ՚ի թռեհրան : Անկանի շր-  
շունչ աղմկի և խռովութեան յամենային քա-  
ղաքս աշխարհին , մանաւանդ յԱրքայանիս-  
տին ՚ի թռեհրան : Որ երկներ հանապաղ ՚ի  
Հասանիլ Հասանալեայ յիւր սահման , զբոհ  
տալ յարքունիս անդք , կալանաւորել զԱր-

բոյ, և զնել դատ փոխանակ նորա : Օսյս  
շառեց առեալ ՚ի այմօղամսյ՝ Հրաման առա-  
քէ առ գնդապետ վարողաց զօրացին՝ բրել զաչս  
նորա զճանսապարհային : Որ անծանօթ զոլով  
սանդարձամետական արուեստին դահճութեան՝  
Հանեկ ՚ի պատմենէ զգաշոյն զհաստ և բութ,  
և ՚ի 25 . Մարտի , բրէ նովաւ զաչս այ-  
նորիկ՝ առ Հայէին աչք Պարսից Ազգին :  
Ապա տարեալ ՚ի քաղաքն և զթագաւորեալն  
Քուսէյնալի Միրզա արգելուն ՚ի տան Մա-  
նուշար Խանի ներքինոյ , որ յետ ամսոց  
ինչ տուժեաց ընդ բռնաբարեալ թաղին՝ և  
զկեանս իւր : Խոկ զՔուսէյնալի Հանեալ  
՚ի բացեայ ՚ի քաղաքէն՝ բանդեցին յԵրքա-  
րօրջ , որ է բուրզն ինչ մեծ շինեալ վտա-  
ւանաւ Հեռի ՚ի քաղաքէն . յանդիման դը-  
րանն՝ որ Հանեկ ՚ի Շմբան :

Մահմադ Միրզա , որ ցայս վոյլը թա-  
գաւորակերպ իշխանութեամբ վարեր զիւր  
Հրաման ընդ ամենային քաղաքս Պարսից աշ-  
խարհի , և զանհնազանդս և զապստամբան  
զօրութեամբ զիւնուց նկուն առելը ընդ ամե-  
նային աեղիս , ՚ի 10 Մարտի , յոր նաւակա-  
տիս տարեգլխի իւրեանց առնեն Պարսիկք ,  
նոտաւ յաթոռ . Հաւուն իւրոյ՝ թագաւոր  
Պարսից : Եւ խորհրդով երկուց դեսպանաց

Առուսաստանի և Մեծին Բրիտանից, յաւել  
յարդարութիւն և յիրաւունս, ապահովել  
զհառարակացն օդուա, և զաշխտրհին շի-  
նութիւն :

Ասկոյն որպէս ամենայն քարեաց կից են  
չարիք, նոյնպէս և բարեսիրտ թագաւորիս  
այսորիկ՝ կից եղեւ ոգի ինչ ուստան կռփել  
միշտ : Այս ինքն է Պայմաղամնորա՝ ծե-  
րունի ալեքոք, բայց երանելի թէ լինելը և  
տիօք, Ար 'ի վաղ ժամանակաց Հետու Ժա-  
ռայելով դրան Արբաս Միրզայի, և ամե-  
նայն ելեմոնից տէրութեան Ժանօթացեալ,  
և զսա մանուկ ընդ իւրեւ սնուցեալ, ունելը  
'ի բռան զբեաթէ զբովանդակ զերտառանակ  
կառավարութեան աշխարհին : Եւ փոխա-  
նակ վարելոյ զհնութիւնս զիտութեան իւ-  
րոյ և խօրհրդոց 'ի լաւ կաղմն, 'ի չարն դէպ  
վարեր, Հանապազ Պիտք դաւառաց և աւա-  
նից, և զիւզից, և տանց, աւարեալ և աւերեալ  
միանգամայն, լսելով զհամբաւ զթութեան և  
բարեսրտութեան թագաւորին, զային յա-  
մնայն աեղեաց զանգառաւորք 'ի Ուելքան.  
և բաղմանային անդք քան զբուական թիւ բը-  
նակչաց նորաւ Արպէս և Հաղհանեկս Արք  
Եպիսկոպոս երեւելեօք 'Եղբ Պուղոյ . և  
ինե հանդ երձ՝ արժանացաւ թողութեան ար-

քունի հարկաց Ա անիցն Ամենափրկչի : Խռա-  
դաւորն դժաճ սիրով ընդունելը զամբնեսոյն  
և յոյս շինութեան և թեթեութեան հար-  
կաց տայր ամենեցուն : Ա. Ա. սա՝ որոյ 'ի ձե-  
ռաբ էր լսել ուրոյի գանդատանաց , և վճիռ  
'ի վերայ հատանել . զօրն բոլոր կամ 'ի բուն  
խորդայր պղերդութեամբ , և կամ յըզքոսանս  
լիներ զեղիսութեամբ : Խսկ զգիշերս անցու-  
ցաներ 'ի խնջոյս հացկերութից , 'ի խաղո-  
և 'ի դրոյցո . նման ոգւոցն՝ որք շրջեն 'ի  
խաւարի և 'ի ստուերս մահու , Ա ասնորոյ  
բազումք 'ի տէրունի կալուածոց աշխարհին  
մնացին անգործ , և գիւղք և աւանք կիսա-  
ւերակք , բոլորովին աւերեցան և եղծան :  
Օ ի իշխանաց խմբի կիսայցյս մնալով պա-  
տասխանուոյ . աստ զհրաման դարձի չպտին , և  
ժողովուրդք անդ՝ սոցա սպասելով , ոչ հեր-  
կեցին , ոչ Հնձեցին : Աւստի և 'ի տեղիս  
փոխանակ առատութեան յայսպիսի բարերեր  
ամի , անկաւ սղութիւն ևս քան զես :

Խսկ Անգղիացին , որ տիրեալ էր Շիրա-  
զայ , և կացուցեալ զՓիրուղ Ա իրզա և  
զԱ անուշար Խան 'ի Հրամանատարութեան  
նարուն՝ աեսեալ զտրառունջ Խմանուոյ , իբր  
ոյն թէ՝ դաւաճանութեամբ և մտանութեամբ  
իշխանի իւրում , ինքն ոչ ի՞նչ շահու եհաս

պատասխանի ընկալաւ . 'ի նմանե , թէ " զու ,  
 որ ընտանու թեամբ էիր ընդ նմա , և իրքն  
 հպատակ՝ պարտ էիր հաւատարմու թեամբ և  
 անկեղծու թեամբ ծառայել , մասնեցեր 'ի  
 վերջոյ . նոյնպէս արացես 'ի դիմել Հար-  
 կին և ընտ նորոդ թագաւորին , վասնորոյ  
 կասկածելի է մեզ անձն քոյ . " Խսկ զԱ ա-  
 լի Խան զմեծ իշխան Մամասանի՝ կոչեալ  
 զառաջեւաւ , խատիւ սկահանջէ 'ի նմանէ զա-  
 մենայն յափշտակու թիւնս , զոր արարեալ էր  
 առ Հրամանատարու թեամբն Քուսէյնալեայ :  
 " Հպատակ էի ես , ասէ . Հրամանատարի աշ-  
 խարհիս , և սրարտական կատարելոյ զկամն  
 նորա : ԱՀմ քեղ Հրամանատակք կնքեալ մա-  
 տանեւաւ նորա , և Ջեմուր Միրզայի որդ-  
 ւոյ նորա , որ Հրամային և մատամբացի ցու-  
 ցանեն ինձ զերուստ և զզալուստ կարավու-  
 նաց . և Հրամային կողոպաել զնոսա , Ե՛ս  
 ոչ ինչ աւելի տրարի , քան զոր նոքա Հը-  
 րամայեցին ինձ , " Օ այս ասացեալ ցու-  
 ցանեւ նմա զՀրովարտակսն : ԱՅԼ սովին ոչ  
 կարացեալ իսպառ անմեզադեր առնել զինքն՝  
 կեղծէ 'ի պարտու թիւն խոստովանիլ , ' Ե-  
 ծածուկ զրէ առ ստորագրեալս իւր , կող-  
 մու թեամբ Հրազինուց դարձնիլ 'ի Պ արա-  
 մբիս , որ է բերթ ինչ անառ իկ Համարեալ

առ Պարսիկս , կտուցեալ 'ի դադաթան  
բարձրաբերձ սեպհոյ առ աւերածովք հնոյն  
Շաղուրայ , Եւ ինքն խնդրէ զօրականս  
չորս հարիւր 'ի Ապարազետէն , գնալ անդ՝  
և դարձուցանել նորօք զյափշտակութիւնս  
իւր : Խրբե հասանէ անդը , թողեալ զկնի  
իւր զբանակն բովանդակ , բանի մի արամքք  
ելանէ յամրոցն Ապիտակ . և իսկոյն բան-  
տարդել արարեալ զնոսա , հրայմայէ իւրոցն  
ճակատ յարդարել , և յետ նախճիրս բա-  
զումս հասուցանելոյ նոցա յանպատրաստից  
ցրուերօթարեր լինիլ դիւրոց նենդանաց առ  
Արեն Անդզիացի : Արոյ տուեալ գունդ ինչ  
զօրաց Շիայ իւրում թիկնասպահի , և ըզ-  
չորս թնդանօթս լեռնամարտիկս , կոտորած  
սաստիկ հասուցանէ խուժանի նորուն . և  
զնա ինքն ձերբակալ արարեալ՝ առաքէ շըդ-  
թայիւք յԱտրպատականն աշխարհ . ուր ես  
ինքնին տեսի զնա , դառնացեալ բնութեամբ  
'ի վայրագ դայլութենէն՝ 1857 :

Արդէս Հաւ իւր զամճի Խրբահիմ , նոյն-  
պէս և Մահմադ Միրզա զՊայմաղամ իւր  
կորոյս , դատապարտեալ վանն մեծամեծ զան-  
ցառութեանց զիրաց իրաց պաշտաման աշխար-  
հավարութեանն . և զամճի Միրզա Աղասի՝  
որ էր երբեմն Պարսիկ դքաղիր Արբոյ Եղ-

միածնի , կարգեաց փոխանտկ նորա :

**Օ** սրդի իւր անուանեալ Ժառանդ Ար-  
քայութեան՝ կացոյց կուսակալ մեծ 'ի վերայ  
համօրէն Ատրապատականի :

Խոսրով Խան մեծ՝ կարգեցաւ կուսակալ  
Ասպահանայ , որոյ եկեալ հզօր ձեռամբ նը-  
ուաճեաց զապստամբութիւն քաղաքին , Ա-  
լաւ առ 'ի ճեռոս իւր՝ իբրև գործի հզօր ըզ-  
նոյն ինքն զի Խամազուն Համալունի , և նո-  
վաւ կրկտեալ՝ հան 'ի խորին խորշց գաղա-  
նութեան՝ զարս ապականարարս խաղաղութեան  
աշխարհին : Յօ էպէտե 'ի վերջոյ քամահու-  
թեամբ վարելով ընդ Պեհնապետին Խոլա-  
մաց՝ յարոյց 'ի վերայ իւր դքաղաքն ողջոյն  
և քամահեալ զիշխանութեամբ՝ զնաց նստաւ  
'ի տան իւրում 'ի Յօնէ Հրան :

Ամա յաջորդեաց Մահուչար Խան Մու-  
թամեդ Պաովլայ՝ կամ Միւն Հաստոտութեան,  
որոյ գոլով այր խորախորհուրդ և բաղմահան-  
ձար , և գիտելով դիարդ կառավարել զաշ-  
խարհ , կոյ և ունի զիշխանութիւն , բարեկած  
Պեհնապետաց և հայր Հասարակաց եղեալ .  
Յաւուրս սորա Արքայազուն Հայ Պատիթ  
Մէլիքեանց Տփղիղեցի , որոյ գործ ք բարե-  
բարութեան առ Ազգ մեր բաղմահատոր մատե-  
նագրութեանց արժան . և զրաւորական աշխա-

տոնեք առաջին տեղւոյ պարծանաց Աղքիս՝ ամուսնացեալ ՚ի Պողոս, մեծապէս խնամտանի ՚ի վերայ Աղքիս մերոյ և Աթոռոյ : Որովհ Պարոն Կարապետ Գիւղաստ շնորհս գտեալ առաջի Մանուչար Խօսնի՝ կարդի իշխան գաւառացըն Փերիոյ և Չարմհալոյ , իսկ որդի Կարապետի Յօնիշանեն՝ կարդի իշխան ՚Եղի Պողոս :


Զայս վայր թերեւս բաղտի կամ ընտանութեան ոք տացէ դյառաջագիմութիւնն Արապետի Գիւղատեան . բայց ՚Ետ, որ զիտէ զիարդ պատիւ զնել առաքինութեանն Հայրենասիրութեան , ընտրեաց զնա ՚ի փառո՞յօրինակ Հայրենասիրութեան զկնեաց իւրոց : ՚Քանզի Յամիւ Տետոն իրբե 1818, այնինչ շիշատք կամ ապակեհատք, ոմանք Աղքէս Հայոց զրպարտեցան . որպէս թէ զողացեալ իցեն զգանձ յարքունեացին Թէեհրանոյ՝ ցասուցեալ Արքայի ընդ զողութիւնն , բայց չգտեալ զգողսն , ձեռն արկ տանջել յորոց կասկածէր , մինչեւ զկանանց իւրոց սիրելեաց զստինս ՚ի բաց Հատանել , Բայց զկնի ժամանակաց ինչ ՚ի վերայ անցելոց . դժութեամբն ծագելով ՚ի մէջ զողոյն ի՞նքեանց , իրբե ՚ի վեր ել բանն , այնքան զայրացաւ սըստմտեցաւ Արքոյ՝ մինչ յետ ՚ի բերան

թեղանոթաց դնելոյ զըստագործն , հրաման  
 Հան 'ի Պուղա , կոտորել զամենայն Հայո  
 թեակեալո 'ի նմա : Խսկ Մագսէն Խսան  
 Ապէն Ասպահանաց բաղումալաչանօք շիջոյց  
 զարքայ ՚ի ցառմանէ , և տուերալ քսան և հինդ  
 Հազարս թումանաց՝ դնեաց զարխմէն Հայոց ,  
 և աղասեաց զնոսա : Եւ իրեւ եկն 'ի Փահէ-  
 րանայ 'ի Պուղա : Ազգն երախտադէտ ընդ  
 յառաջ եւ նմա ամենայն զարդուք Եկեղեց-  
 ւոյ , և 'ի մուտոս անդ Դարբասի Ա անից ,  
 իրեւ ձեռն 'ի գործ արկանէր Պարոն Աս-  
 լապետ Գիւլզատ զենուլ առաջի պատրու-  
 ճակ ընալիր , արգել զնոս Անդըն Մեծ :  
 Խսկ Հայկազն ճարտարախօս դիմագար-  
 ձեալ ասաց , “ Տէր , Փրկիչ Ազգի եղեալ  
 գաս , եթէ որդին իմ խսկ կապեալ իցէ ա-  
 ռաջի՛ ոչ խնայեցից 'ի նա վասն քո . ուր  
 մնայ թէ 'ի սոյն այս զո՞ն փրկութեան կե-  
 նաց փրկողիդ մերոյ : ” Եւ այդ չափ 'ի խոր  
 տպաւորեցան երախտիք իմի միտոս ձեր , “ ա-  
 սէ Ապէն , “ ուրեմն կրկնապատիկ շահեցայ : ”  
 Եւ զնացեալ 'ի տուն 'ի ուշեաց զՏէր Արա-  
 պետ Առաջերդ երեւելուք Պուղոյեցւոց .  
 և յանձն արար նմա զստացական թագաւոռ-  
 քին , վասն քսան և հինդ Հազար թումանաց .  
 զի մի անկանիցի 'ի ձեռս որդւոյ իմոյ , յետ

իմ. և սկսանեցիցէ 'ի Հայոց զգոյն զայդ դու-  
մար, որ չարժէ զնեեայ՝ մասին երախտա-  
ղիառութեան, զօր ցուցին ինձ Աղդ Հայոց :









ALLEGORIE SUR LA

LETTRE DE M. DE SÉVIGNE A M. DE RICHELIEU





Y0, 125, 132, 146, 172, 183, 212, 222

